

101

ԵՐՆԻ ԳՈՐԾԱՌՄԻ X ՊԼԵՆՈՒՄԸ

ԲԱՆԱԶԵՎԵՐ

ՅԵՎ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Պետական Հրատարակչություն, — Յ Ե Ր Ե Վ Ա Ն, 1930


492

1770

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ X ՊԼԵՆՈՒՄԸ

329.15(2)

ԲԱՆԱԶԵՎԵՐ
ՅԵՎ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ



Պետական Հրատարակչություն, — Յերեվան, 1930



1770-ԱԳՀ

Հր. № 1181

Գրառեպլար № 3011 (բ)

Տիրաժ 2000

Պետերատի առաջին տպարան վարորդատու:
Պատվեր № 202.

ՆԵՐԱՃՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԻՖԿ-Ի X ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

(Հայտարարված 1929 թ. հունիս 21-ին, «Պրավդայի»
№ 165)

ԿիՖԿ-ի X պլենումը մոտ որերս վերջացրեց չուր աշխատանքները: Պլենումի որակարգի մեջ մտնում էին հետևյալ հարցերը՝

1. Միջազգային դրուժյունն ու կոմիտեերնի խընդիրները (զեկուցողներ — ընկ. ընկ. Կուուսինեն և Մանուիլսկի):

2. Տնտեսական կռիվներն ու կոմկուսակցուժյունների խնդիրները (զեկուցողներ — ընկ. ընկ. Տելման և Լազովսկի):

3. Պալքարի միջազգային որ (1-ն ոգոսաոսի) իմպերիալիստական պատերազմին դեմ (զեկուցող — Բարբե):

Չեկուցումների ջննուժյան ընթացքում ակտիվ մասնակցուժյուն են ունեցել բոլոր կարևորագույն կոմկուսակցուժյունների ներկայացուցիչները:

Պլենումը վորոշեց — ընկ. ընկ. Բուխարինին, Գիտլուուին, Սերբային և Եմբեր-Դրո-ին ազատել ԿիՖԿ-ի նախադահուժյան անդամուժյան պարտականուժյուններից:

Պլենումը Գործկոմի կազմից հեռացրեց՝ Իլեկին (Ձեխո-Սլովակիա), Լովստոնին (Հ. Ա. Միաց. Նահ.) և Սպեկտորին (Կանադա):

Պլենումը նախագահութեան կազմի մեջ մտցրեց՝ Գարլանդիին (Իտալիա), Գոտվալլեին (Ձեխո-Սլովակիա), Ռանգոլֆին (Հ. Ա. Մ. Նահ.), Գուսևին (ԽՍՀՄ): Բացի այդ, պլենումը թեկնածութունից նախագահութեան անդամ դարձրեց՝ ընկ. Լենսկոյա-ին (Լեհաստան), ընկ. Ամերիկո-Լեդոյին (Հար. Ամերիկա) ընտանաց նախագահութեան անդամ, իսկ ընկ. Ռեյմանին (Ձեխո-Սլովակիա) — նախագահութեան անդամութեան թեկնածու:

ԿիԳԿ-ի ընդունած բանաձևերից թերթի ներկա համարում հրատարակում ենք՝ «Միջազգային դրութեան և կոմիտեաների խնդիրներին վերաբերող» թեզերը և «Միջազգային որվան (իմպերիալիստական պատերազմի դեմ)» վերաբերող բանաձևը: Մնացյալ բանաձևերը կհրատարակվեն հետագա համարներում:

ԿիԳԿ Քաղ. Քարտուղարութուն

1920 թ. 20-ն հուլիսի
Մոսկվա

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՇԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՏԻՈՆԱԼԻ ՀՆՐԹԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Թեզերաներ ընկ. ընկ. Կուուսինենի և Մանուիլսկու գեղեցուկները առթիվ)

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեի պլենումը հավաստում է, վոր ՎՄ համաշխարհային Կոնգրեսից հետո դեպքերի զարգացումն ամբողջովին և լիակատար կերպով հաստատեց համաշխարհային տնտեսական և քաղաքական դրութեան այն վերլուծութունը, վոր ավեց ՎՄ Կոնգրեսը, ինչպես նաև վերջինիս կողմից միջազգային կոմունիստական շարժման համար նշված գծի ճշտութունը:

Հակառակ սոցիալ-դեմոկրատիայի մարգարեյութուններին ու նրան ձայնակցող աջ և հաշտվողական տարրերին, կապիտալիզմի ստաբիլիզացիան վոչ միայն չկայունացավ, այլ ընդհակառակն, ավելի ու ավելի լե սասանվում: Ավելի և ավելի ակնառու կերպով հաստատվում է ՎՄ կոնգրեսի կողմից արված արդի հեռուստերազմյան կապիտալիզմի լերրորդ շրջանի զնահատութեան ճշտութունը, վորպես նրա ընդհանուր կրիդիսի աճման շրջանի, իմպերիալիզմի ներքին և արտաքին հիմնական հակասութունների արագացված սրման, վորոնք անխուսափելիորեն տանում են դեպի իմպերիալիստական պատերազմները, մեծագույն դասակարգային կոնֆլիկտները, դեպի հեղափոխական

նոր վերելքի ծավալման շերտը հիմնական կապիտա-
լիստական չերկրներում, դեպի հակաիմպերիալիստա-
կան մեծ հեղափոխությունները դադութալին չերկըր-
ներում:

1. Կապիտալիզմի հիմնական հակասություն- ների սրումը

1. Համաշխարհային պատերազմից հետո տնցած 10
տարվա ընթացքում բուրժուազիան II Ինտերնացիո-
նալի կուսակցությունների ուղղակի և ակտիվ ա-
ջակցությամբ սիստեմատիկորեն խաբում էր աշխա-
տավորներին այն առասպելով, թե 1914—1918 թ. թ.
պատերազմը «վերջին» պատերազմն էր, թե այսուհետև
քանի վոր Գերմանիան ջախջախված և զինաթափված
է, կապիտալիստական պետությունների միջև պետք է
հաստատվի կայուն խաղաղություն (Ազգերի Լիգան—
վորպես «խաղաղության գործիք»․ «զինաթափման»
բազմաթիվ բուրժուական նախագծեր, Կելլոգի կեղծ-
պացիֆիստական պակտը, Յունգի պլանը վորպես ռե-
պարացիաների պրոբլեմի և ուրիշ հետպատերազմյան
իմպերիալիստական աճած հակասությունների «խա-
ղաղ լուծման» մեթոդ): Իրոք դուրս չեկավ, վոր դեռ
ևս չերբեք 1914—1918 թ. թ. պատերազմից հետո նոր
համաշխարհային պատերազմի սպառնալիքն այնքան
սուր չի չեղել, ինչպես ներկայումս: Շուկաների և հու-
մուլիստի աղբյուրների, կապիտալի արտածման և նրա
գործադրության շրջանների համար մղվող կատաղի
պայքարն անխուսափելիորեն տանում է դեպի ամե-
նահզոր իմպերիալիստական պետությունների պատե-

րազմ՝ տնտեսական տերրիտորիայի ընդլայնման հա-
մար միմյանց հաշվին, դեպի պատերազմ աշխարհի
նոր վերաբաժանման համար: Պատերազմն ակտիվորեն
նախապատրաստում է Ազգերի Լիգան, վոր հասն-
դիսանում է անգլա-Ֆրանսիական իմպերիալիզմի
գործիքը: ԽՍՀՄ-ի առաջարկած ընդհանուր փաստա-
կան զինաթափման նախագծի մերժումով Ազգերի Լի-
գան մերկացրեց իրեն, վորպես պատերազմի նախա-
պատրաստման գործիք: Կելլոգի պակտի մեջ «պատե-
րազմից հրաժարվելու» կեղծ զիմակիտակ իրոք թագ-
նվում է ամերիկական իմպերիալիզմի փորձն իրեն
համար ապահովելու նոր պատերազմի ժամկետի հար-
ցերի վերջնական լուծման հնարավորությունը և ի-
րավունքը: Սպառազինումների կատաղի աճումը իմ-
պերիալիզմի չերկրներում և նոր ռազմաքաղաքական
դաշնակցությունների գոյացումը (Անգլիա—Ֆրանսիա,
Անգլիա—Յապոնիա, Ֆրանսիա—Լեհաստան և այլն)
մի ավելորդ անգամ վկայում են նոր իմպերիալիստա-
կան պատերազմի մոտենալու մասին, վորը պետք է
լինի ել ավելի վիթխարի և կործանարար, քան 1914—
1918 թ. թ. պատերազմը: Ռեպարացիոն հարցի
նոր կարգավորումը Յունգի ծրագրի ոգնությունը, ա-
մենևին չի նշանակում, ինչպես ռեֆորմիստներն են
պնդում, իմպերիալիստական հակասությունների թու-
լացում, այլ ընդհակառակը, տանում է դեպի կոնֆ-
լիկտների հետագա սրում իմպերիալիստների բանա-
կում (անգլա-ամերիկական պայքարը ռեպարացիոն
բանկի համար, Ֆրանս-գերմանական հակամարտու-
թյունը) և դրա հետ միասին կրկնապատկում է Ֆի-
նանսական բլոկադայի վտանգը, հետևապես և ին-

տերվենցիայի վառանգն ընդդեմ ԽՍՀՄ-ի՝ Գերմանիա-
չին իմպերիալիզմի հակախորհրդային ռազմական քա-
ղաքականութեան ճակատի մեջ ռեֆզնորեն ներգրա-
վելու պատճառով: Այն «փոքրիկ» պատերազմները,
վորոնք մղվում են զաղութային և կիսազաղութային
չերկրներում (Չինաստան, գուանսինցիներ և Նան-
կին, Ֆին-Յուլ-սյան), — իսկ վերջիններիս հետևում
թագնվում և անգլա-ամերիկական տճող մրցակցու-
թյունը — հանդիսանում են ՀԱՄՆ և Անգլիայի միջև
համաշխարհային հեղեմոնիայի համար տեղի ու-
նենալիք պատերազմի նախադուռը: Ավելի սուր, քան
առաջ, ծառանում և Փարիզյան կոնֆերենցիայից հե-
տո ռեպարացիաների պրոբլեմը, վորի մեջ խաչաձևվ-
վում են տիրապետող իմպերիալիստական պետու-
թյունների ամենագլխավոր հակասությունները, մի
պրոբլեմ, վորը կապված և իմպերիալիստական խըմ-
բակցությունների և պետությունների պայքարի սըր-
ման հետ, պայքար՝ շուկաների, հումուլթի աղբյուր-
ների, կապիտալի արտածման համար: Ֆինանսական
կապիտալի մենաշնորհական միավորումներ (միջազգա-
յին կարտելներ, Ֆինանսավորման ընկերությունները,
Յունգի ռեպարացիոն գերբանկի նախագիծը) միջազ-
գային միահյուսումը վոչ միայն չի թուլացնում պա-
տերազմի սպառնալիքը, այլ ընդհակառակն, ուժե-
ղացնում և այն, ստեղծելով նախադրյալներ գալիք
պատերազմը համաշխարհային պատերազմի վերածելու
համար, — պատերազմ աշխարհի նոր վերաբաժանու-
թյան համար: Ընդ դմին, չնայած իմպերիալիստական
բանակի ներսում գոյություն ունեցող մրցակցու-
թյան և կատաղի պայքարին, կապիտալիստա-

կան աշխարհի և ԽՍՀՄ-ի միջև չեղած հիմնական հա-
մաշխարհային հակասությունը, վորպես սկզբունքորեն
հակադիր տնտեսական-քաղաքական սիստեմների՝ ա-
վելի ու ավելի չե սրվում: Իմպերիալիստների հարձա-
կումը ԽՍՀՄ-ի վրա հանդիսանում և գլխավոր վտան-
գը: Այդ մասին վկայում են հակախորհրդային ռազ-
մական բլոկի ստեղծման և ընդլայնման նոր փորձերը
ԽՍՀՄ-ի սահմանակից պետությունների (Ռումինական
բանակի վերակազմույունը, Լեհաստանի կատաղի սպա-
ռագիմվելը Ֆրանսիական գլխավոր ռաբի ոգնուրյալը,
Ռեակցիոն հեղափոխում Ավիանսանում Անգլիայի մաս-
նակցությամբ յեվ այլև) տենդորեն սպառազինվելը և
ԽՍՀՄ-ի հետ կոնֆլիկտներ առաջացնելու սխտեմա-
տիկ պրովոկացիաները՝ Խորհրդային զիվանապետական
ներկայացուցիչների վրա հարձակվելու միջոցով: Իմ-
պերիալիստական պետությունների կողմից գրգռած՝
չինական հակահեղափոխականների հարձակումը Խար-
բինի Խորհրդային հյուպատոսութեան վրա, ԽՍՀՄ-ի
հետ կապած պայմանագրերի լիտի խախտումը, Չին.
Արևել. չերկաթ. գրավումը չինական միլիտարիստ-
ների կողմից, մասսայական ձերբակալությունները և
խորհրդային բանվորների ու ծառայողների վրա գոր-
ծադրվող բռնությունները միջազգային Ֆինանսական
կապիտալի կողմից ներկայացնում են պատերազմի
անմիջական պրովոկացիա Խորհրդային Միութեան
նկատմամբ: Իմպերիալիստական նոր պատերազմների
այս ամբողջ նախապատրաստումն անց և կացվում
«սոցիալիստական կուսակցությունների» ակտիվ ա-
ջակցութեամբ և ամենակողմանի մասնակցութեամբ
այն կուսակցությունների, վորոնց «ձախ» թևը խա-

դում ե ամենից նողկալի դերը, քողարկելով այդ նախապատրաստումը պացիֆիստական ֆրագներով:

2. Միևնույն ժամանակ զուր դուրս չեկան բուրժուազիայի հույսերը Խորհրդային Միության կապիտալիստական վերասերման, նրան աստիճանաբար կապիտալիստական աշխարհին չենթարկելու և հենց դրանով միջազգային կապիտալի գաղութի վերածելուն կատմամբ: Չնայած մեծագույն դժվարությունների առկայության (անցյալից ժառանգած տեխնիկատընտեսական դժվարությունը, գյուղացիական տնտեսությունից ծայրահեղ ցածր մակարդակը, թշնամական կապիտալիստական շրջապատումը), ԽՍՀՄ-ն ՀԿ (Բ) Կ ղեկավարությունը ծավալեց հաղթական հարձակում գյուղի և քաղաքի կապիտալիստական տարրերի վրա, ապահովելով տնտեսության սոցիալիստական ձևերի վճռական գերակշռությունը կապիտալիստական տարրերի վերաբերմամբ:

Գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացման հզոր թափը նրա տեխնիկական վերելքի հիման վրա, խորհրդային տնտեսությունների, կոլեկտիվ տնտեսությունների, մեքենատրակտորական կայանների շինարարությունը, վերջապես սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճումը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տակ դնում են զողման արտադրական նոր ձևեր, ամրացնելով պրոլետարական դիկտատուրայի հիմնական դիրքերը:

Սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի խանդավառությունը այժմ ավելի և ավելի հզոր արտահայտություն է գտնում ծավալվող սոցիալիստական մրցակցություն մեջ, աշխատանքի արտադրողականության

բարձրացման և արդյունաբերական արտադրանքի ավելացման գործում, բյուրոկրատիզմի դեմ մղվող ուժեղացված պայքարում, պետապարատը Խորհրդային իշխանության համար անհարազատ տարրերից զտելու մեջ և այլն: Սոցիալիստական շինարարության հնգամյա պլանը, վորով նկատի չի առնվում ԽՍՀՄ-ի ինդուստրացման արագ տեմպի հետագա կենսագործումը, արտադրության միջոցների արտադրության առավելագույն զարգացումը, գյուղում և քաղաքում սոցիալիստական սեկտորի վճռական ուժեղացումը կապիտալիստական տարրերի հաշվին, գյուղատնտեսության խոշոր վերելքը, վոր կապված է միլիոնավոր գյուղացիներ սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու հետ, պրոլետարիատի և գյուղի աշխատավոր մասսաների նյութական և կուլտուրական մակարդակի նշանավոր վերելքը,—հանդիսանում է վոչ թե միայն ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաների մեծագույն նվաճումը, այլև ամբողջ միջազգային պրոլետարիատի: Այդ մեծ ծրագրի արդեն սկսված հաջող կենսագործումն ամրացնում է պրոլետարական դիկտատուրայի սոցիալիստական հիմքերը, բարձրացնում է նրա պաշտպանունակությունը, հետևապես և ամրացնում է համաշխարհային պրոլետարական հեղափոխական շարժման մարտական դիրքերը: ԽՍՀՄ-ի առաջ շարժվելը սոցիալիզմի ուղիով հանդիսանում է կապիտալիստական ստաբիլիզացիայի խախտման և կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի սրման ամենակարևոր գործոնը:

3. Ապարդյուն անցան նույնպես բուրժուազիայի փորձերը՝ հաստատելու «արդյունաբերության մեջ խաղաղություն» կապիտալիստական հիմնական լերկներում:

Նրա առաջ ավելի ու ավելի սուր ե՛ծառանում բնակչու-
թյան ամենալայն մասսաների աղքատացման պայ-
մաններում շուկաների անլուծելի պրոբլեմը, վորը
սրվում է վոչ միայն արտադրական ապարատի ա-
ճումով, այլ և մենաշնորհական տրեստների և կար-
տելների կողմից սահմանվող բարձր գներով, մաքսա-
լին փակոցների խափանիչ մետաղալարով, տնտեսա-
պես հետամնաց չերկրների արդյունաբերական դար-
գացումով, գաղութներում գոյություն ունեցող դրու-
թյան ընդհանուր անկայունությամբ և այլն: Բուր-
ժուազիայի փորձերը՝ զանց անելու այդ վճռողական
հակասությունը կապիտալիստական ռացիոնալացման
լայն կիրառման միջոցով ի դերե յելան: Ռացիոնա-
լացման կիրառումն էլ ավելի չե կրկնապատկում այդ
հակասությունը: Բարձրացնելով նրա տնտեսական
ապարատի արտադրական հնարավորությունները,
գոևրս ձգելով արտադրական պրոցեսից միլիոնավոր
բանվորական ձեռքեր, էլ ավելի սրելով մրցակցու-
թյունը համաշխարհային շուկայում, կապիտալիստա-
կան ռացիոնալացումը տանում է դեպի սոցիալական
կոնֆլիկտների սրումն: Իր ամբողջ ծանրությամբ ընկ-
նելով բանվոր դասակարգի վրա, ռացիոնալացումը
ցածրացնում է նրա կյանքի մակարդակը և բանվոր-
ակտն որվա չերկարացման և կոնվկների սխտեմ
մտցնելու պատճառով աշխատանքի հոգնեցուցչությունը
հասցնում է ծայրահեղ ստհմանների: Բանվոր դասա-
կարգի այն բոլոր սոցիալական նվաճումները, վոր
կորզել է նա տասնյակ տարիների պայքարով և մա-
նավանդ 1918—1920 թ. թ. հեղափոխական ակիբի
ըրջանում, կամ վերացվում են, կամ դրված են վե-

րացման սպառնալիքի տակ (Ց-ժամյա բանվորական
որ, սոցիալական ապահովագրություն, գործազուրկ-
ներին տրվող ոժանդակությունը, բանվորական ո-
րենսդրություն, պրոֆմիությունների իրավունքները,
գործադուլների իրավունք): Միքանի չերկրներում
պրոլետարիատի սոցիալ-քաղաքական նվաճումները
լիկվիդացիայի չեն չենթարկվում սոցիալ-դեմոկրատ-
իայի ոգնությամբ նոր «ռեֆորմների» կեղծ դիմակի
տակ (սոցիալական ապահովագրության որենքը և
բնակտրանային որենքները Ֆրանսիայում): «Արդյու-
նաբերության մեջ խաղաղություն» դրոշակի տակ
Անգլիայում, հանուն «տնտեսական դեմոկրատիայի»՝
Գերմանիայում, Ֆաշիստական «հարկադիր արբիտ-
րաժի» դրոշակի տակ Իտալիայում և ուրիշ չերկրնե-
րում բուրժուազիան սոցիալ-դեմոկրատիայի և ռե-
ֆորմիստական պրոֆբուրոկրատիայի ոգնությամբ
անց է կացնում մեծագույն դաժանությամբ բանվոր
դասակարգի տնամոթ թալանի, ճորտացման և բար-
բարոսական ճնշման սխտեմը: Կապիտալիստական
ռացիոնալացման հետևանքը հանդիսանում է գործա-
զրկության վիթխարի աճումը (հիմնական կապիտա-
լիստական չերկրներում կա 12—13 միլիոն գործա-
զուրկ): Կապիտալիստական պետությունների մեջ մի-
ջին խավերի քայքայումը, ծառայույների կրճատումը
ավելացնում են քաղաքային չքավորների կադրերը:
Գյուղացիության հիմնական մասսաների դրությունը
վոչ միայն չբարելավվեց, այլ և միջակ գյուղացիու-
թյան և գյուղացիական չքավորության աղքատացու-
մը նշանավոր չափով աճեց: Գյուղական բնակչու-
թյան յավերի դրությունը վատանում է նաև հառաջա-

դիմող ագրարային կրիզիսից և ռեակցիայի աճումից՝ բոլոր չեքկրներում: Ավելի ու ավելի պարզ և ղրսե-վորվում ամերիկական բուրժուազիայի կողմից աղղա-րուարած տխրահուշակ «ծաղկման» (պրոսպերիտի¹) լո-զոնցի անանկուլթյունը: Յեվրոպական մրցակցությա-նը դիմանալու համար բուրժուազիան պլանաչափ հարձակում և գործում ամերիկական բանվոր դասա-կարգի կյանքի մակարդակի վրա, բազմապատկելով գործազուրկների կադրերը (ՀԱՄՆ ավելի քան 3 մի-լիոն գործազուրկ կա): Հաշտվողականների գաղափա-րը ներքին հակասությունների բթացման մասին կա-պիտալիստական չեքկրներում և ներքին շուկան կազ-մակերպելու հնարավորության նկատմամբ՝ անար-խիան բացառապես համաշխարհային շուկայում պահ-պանվելու պարագայում՝ հերքվում և կապիտալիզմի ամբողջ զարգացմամբ, վերջին տարիների ընթաց-քում և գործնականում հշանակում և կապիտալիստիա-ռեֆորմիստական իդեոլոգիայի առաջ:

Բանվոր դասակարգին տնտեսապես խեղդելու քա-ղաքականության հետ միասին ընթանում և քաղա-քական ռեակցիայի աճումը. բուրժուազիայի պետական ապարատի ֆաշիզացիան, ռեպրեսիաների և սպիտակ տերրորի ուժեղացումը, ֆաշիստական հեղաշրջումները համաշխարհային կապիտալի ոգնությամբ (Հարավսլավ-իա), բանվորների մասսայական ձերբակալություննե-րը (Ֆրանսիա, Լեհաստան և ուրիշն.), հեղափոխական կազմակերպությունների փակումը (Կարմիր ձակա-տայինների Միության փակումը Գերմանիայում), գոր-

¹ Անգլ. prosperity—ծաղկում, բարգավաճում:

ծաղկավորների (Հնդկաստան ՀԱՄՆ, Բերլին) բանվո-րական ցույցերի գնդակահարումը, հեղափոխականների սպանությունները դատարանով և առանց դատարա-նի, բազմամյա տաժանակիր աշխատանքի դատավճիռ-ները (Իտալիա, բալկանյան պետություններ, Լեհաս-տան և այլն), կատաղի սպիտակ տերրորը բանվորա-գյուղացիական շարժման նկատմամբ Մեքսիկայում, Կու-բայում, Կոլումբիայում, Վենեսուելայում և Լատինա-կան Ամերիկայի մյուս չեքկրներում): Իմպերիալիստա-կան հակասությունների աճման և դասակարգային պայքարի սրման իրադրության մեջ ֆաշիզմը դառ-նում և բուրժուազիայի տիրապետության ավելի ու ավելի տարածվող մեթոդ: Սոցիալ-դեմոկրատական ուժեղ կուսակցություններ ունեցող չեքկրներում ֆա-շիզմի առանձնահատուկ ձևը հանդիսանում և սոցիալ-ֆաշիզմը, վորը ավելի ու ավելի հաճախ և ծառայում բուրժուազիային, վորպես մասսաների ակտիվությունը ջլատող միջոց ֆաշիստական դիկտատուրայի ռեժիմի դեմ մղվող պայքարում: Միջազգային սոցիալ-դեմո-կրատիայի սատարումը վաչելող տնտեսական և քա-ղաքական ճնշման այդ ամբողջ հրեշավոր սիստեմով բուրժուազիան փորձում և լիկվիդացիայի չեքարկել շատ տարիներով գրոլետարիատի հեղափոխական դա-սակարգային շարժումը: Սակայն այստեղ նրա ջան-քերն անհաջողության դատապարտվեցին: Բանվոր դասակարգի մարտական ակտիվության բարձրացումը, հեղափոխական բանվորական շարժման վերելքի նոր աճումն ազդանշան և աշխատավորության վերաբեր-մամբ կատարվող չլաված կեղեքման և բռնության այդ ռեժիմի խորտակման անխուսափելիության, մի ռեժի-

մի, վորը միջազգային սոցիալ-դեմոկրատիան լիտի-
րեն հայտարարել և «դեմոկրատիայի ծաղկման» դա-
րագլուխ, չերբ կապիտալիզմը վերաճում և և սոցիա-
լիզմի փոխակերպվում:

4. Բուրժուազիային նույնպես չհաջողվեց ճնշել հե-
ղափոխական շարժումը գաղութներում: Իմպերիալիզ-
մի և գաղութային աշխարհի միջև չեղած հակամար-
տությունն ավելի ու ավելի սուր և դրսևորվում գա-
ղութային և կիսագաղութային չերկրներում: Չինաս-
տանի բանվորների ու գյուղացիների հեղափոխական
շարժման ժամանակավոր պարտությունից հետո չի-
նական բուրժուազիան, վորի տնտեսական շահերը
ամենասերտ կերպով միակցվել են զանազան իմպե-
րիալիստական չերկրների (ՀԱՄՆ, Անգլիա, Յապո-
նիա) ֆինանսական կապիտալին, ֆեոդալական
ուսակցիայի հետ դաշնակցած դուրս չեկավ կատարե-
լապես սնանկ Չինաստանի անկախությունը պաշտպա-
նելու գործում և իրոք անցավ այդ անկախության
իմպերիալիստական թշնամիների բանակը: Այժմ Չի-
նաստանում տեղի ունեցող միլիտալիստական Յ խըմ-
բակցությունների կռիվը, վորոնք հանդիսանում են
զանազան իմպերիալիստական պետությունների գոր-
ծիքը, ակնառու ցույց և տալիս, վոր Չինաստանի
իշխող իմբակցությունների շահերն արմատապես հա-
կասում են Չինաստանի ազգային միավորման շահե-
րին: Չինաստանի միավորումն ու նրա ազատագրումն
իմպերիալիզմի լծից անքակտելիորեն կապված և ազ-
րարային հեղափոխության և ֆեոդալիզմի բոլոր միա-
ցորդների վոչնչացման հետ: Սական բուրժուական-
դեմոկրատական հեղափոխության այդ հիմնական

խնդիրների լուծումը կարող և կենսագործվել միայն
բանվորա-գյուղացիական հեղափոխության նոր հզոր
վերելքի հողի վրա՝ բանվոր դասակարգի գլխավորու-
թյամբ: Այդ վերելքը, վորի համար պայմաններն ան-
տարակույս հասունանում են, չի կարող չտանել դե-
պի խորհուրդների ստեղծում, վորպես պրոլետարիատի
և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական
զիկտատուրայի որդաններ:

Արդի մոմենտում հեղափոխական հզոր շարժում և
ծավալվում Հնդկաստանում: Բոմբեյի պրոլետարիատի
հերոսական գործադուլը, աշխատավոր մասսաների
պայքարը Սայմոնի հանձնաժողովի դեմ, փողոցային
ցույցերն ու կռիվները, ազրարային աճող շարժումը—
այս բոլորն ասում են այն, վոր Հնդկաստանն արդեն
դառնում և գաղութային հեղափոխությունների
կարևորագույն ռազմաբեմերից մեկը: Հնդկաստանի
բուրժուազիայի բացահայտ դավաճանությունն ազ-
գային անկախության գործին (սվարաշխատների ազ-
գային կոնգրեսի վորոշումը դոմինիոնների իրավունք-
ների մասին՝ Հնդկաստանի համար) և գործադուլա-
վոր բանվորների նկատմամբ կատարվող արյունոտ
բռնություններին ակախվ աջակցելը մերկացնում են
հնդիկ բուրժուազիայի հակահեղափոխական բնույթը:
Դա նշանակում և, վոր Հնդկաստանի անկախությու-
նը, բանվոր դասակարգի դրության բարելավումը,
ազրարային հարցի լուծումը կարող են նվաճվել միայն
բանվորական և գյուղացիական մասսաների հեղափո-
խական պայքարով՝ պրոլետարիատի ղեկավարությամբ
անգլիական կապիտալիզմի, հնդիկ ֆեոդալների և
ազգային կապիտալի դեմ մղվող կռվում: Հնդկաստա-



նի հեղափոխութեան խնդիրները կարող են լուծվել միայն պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի համար մղվող պայքարում՝ խորհուրդների ղրոշակի տակ:

Հնգկաստանում հեղափոխական վերելքի աճման հետ միաժամանակ, նորից պայքար է ծավալվում դադուխներում և կախյալ չերկրներում ընդդեմ ոտար-չերկրյա ստրկացնողների (Մարտկո, Կոնգո, Լատինական Ամերիկայի չերկրներում և այլն): Մայր չերկրներում հեղափոխական բանվորական շարժման աճող վերելքի, ինչպես և ԽՍՀՄ-ի ամրացման պայմաններում կամրանան և կաճեն շատ ավելի արագ տեմպով, քան մինչև այժմ, հեղափոխական շարժումները գաղութներում, մոտեցնելով ամբողջ կապիտալիստական կարգի խորտակումը:

2. II Ինտերնացիոնալի կուսակցություններն իսխանուրյան գլուխ կանգնած

5. Բուրժուազիայի անգորութունը չելք գտնելու սրվող արտաքին և ներքին հակասութուններից, նոր իմպերիալիստական պատերազմների նախապատրաստման և թիկունքը բանվոր դասակարգի առավելագույն ճնշմամբ ապահովելու անհրաժեշտութունը, վորպիսի ճնշումը «չելքի միջոց» է համարվում ստեղծված ղրութունից, այդ խնդիրներն իր սեփական ուժերով կենսագործելու անհրաժեշտութունն առանց սոցիալ-դեմոկրատական կուսակցութունների ոգնութեան, վերջապես այդպիսի քաղաքականութունը դեմոկրատիայի և պացիֆիզմի ղրոշակով քողարկելու պաշ-

հանջը—տարան դեպի բուրժուազիայի և II Ինտերնացիոնալի կուսակցութունների բացահայտ համագործակցութեան անհրաժեշտութունը: Սրանով է բացատրվում այն, վոր Գերմանիայում իշխանութեան գլուխ են կանգնել սոցիալ-դեմոկրատիան, իսկ Անգլիայում բանվորական կուսակցութունը: Մակդոնալդի և Մյուլլերի կառավարութունների քաղաքական առաքելութունը կայանում է նրանում, վորպեսզի կենսագործվեն բուրժուազիայի կարգադրութունները, ինչպես ներքին քաղաքականութեան բնագավառում (առավելագույն ճնշում բանվոր դասակարգի վերաբերմամբ, կրկնակի ճնշման իրագործում Գերմանիայի բանվոր դասակարգի նկատմամբ ռեպարացիաների կապակցութեամբ, ոացիոնալացումն Անգլիայում), նույնպես և արտաքին քաղաքականութեան մեջ (նոր պատերազմների նախապատրաստումը և ճնշման ուժեղացումը գաղութներում):

Գերմանիայում մենք ունենք II Ինտերնացիոնալի ամենաուժեղ կուսակցութուն, սոցիալ-դեմոկրատիայի՝ իշխանութեան գլուխ կանգնելու նոր փորձը:

Իրենց սեփական փորձով գերմանական բանվորական մասսաները մաշում են իրենց ցնորքները սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ: Սոցիալ-դեմոկրատիան այն կուսակցութունն էր, վորն իշխանութեան գլուխ անցնելով, խեղդում էր գործադուլները հարկադիր արբիտրաժի հանգույցով, կապիտալին ոգնում էր անցկացնելու լրկառտներ, լիկվիդացիայի չենթարկելու բանվոր դասակարգի նվաճումները (8 ժամյա բանվորական որ, սոցիալական ապահովագրութուն և այլն): Նա ղրահակրի կառուցմամբ, ինչպես նաև ընդունելով

իր նոր միլիտարիստական ծրագիրը—վոր կտրում է
իր բոլոր կապերը սոցիալիզմի նախապատերազմյան
ավանդույթյունների մնացորդների հետ—պատրաստում
է պատերազմ: Սոցիալ դեմոկրատիայի և սեֆորմիստա-
կան արհմիությունների ղեկավար կազմերը բուրժու-
ազիայի առաջադրույթները կատարելով, ներկայումս
սպառնում են—Վեյսի բերանով—գերմանական բան-
վոր դասակարգին ֆաշիստական բացահայտ դիկտա-
տուրայով: Սոցիալ-դեմոկրատիան արգելում է մայիս-
մեկյան ցույցերը: Նա գնդակահարում է անդեն բան-
վորներին մայիսմեկյան ցույցի ժամանակ: Նա ար-
գելում է բանվորական մամուլը («Ռոտե Ֆանե»), փա-
կում է հեղափոխական մասսայական կազմակերպու-
թյունները, նախապատրաստում է Գկկ արգելումը և
կազմակերպում է բանվոր դասակարգի ճնշումը ֆա-
շիստական մեթոդներով:

Ահա գերմանական կոալիցիոն սոցիալ-դեմոկրատի-
այի ուղին դեպի սոցիալ-ֆաշիզմը: Ահա II Ինտերնա-
ցիոնալի խոշորագույն կուսակցութեան՝ իշխանութեան
գլուխ մնալու հանրագումարը:

«Բանվորական» կուսակցութեան ամբողջ քաղաքակա-
նությունը, մանավանդ վերջին տարիներում, ցույց տվեց,
վոր Մակդոնայլի կառավարութունը պետք է գնա նույն
այն ուղիով, ինչ ուղիով գնացել է իշխանութեան գլուխ
անցած գերմանական սոցիալ-դեմոկրատիան: Նա պետք
է դաժանորեն անցկացնե կապիտալիստական ռացիո-
նալացումը, ճնշելով ամեն տեսակի գործադուլային
շարժում: Նա պետք է խեղդի ազգային հեղափոխա-
կան շարժումը գաղութային չերկրներում, և առաջին
հերթին, Հնդկաստանում: Նա պետք է վարե պատե-

րագմի հարձակողական իմպերիալիստական քաղաքա-
կանութուն, առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ, քողար-
կելով այն պացիֆիստական ֆրադաբանութեամբ: Մակ-
դոնայլի կառավարութեան վոչ մի բանակցութուն
և նույնիսկ ժամանակավոր համաձայնություններ Ա-
մերիկայի հետ վոչ միայն չեն վերացնի անխուսափելի
զինված կոնֆլիկտը ՀԱՄՆ և Անգլիայի միջև, այլ
և նրանք պետք է լինեն նույնպիսի ետապ նրա նա-
խապատրաստման մեջ, ինչպես իր ժամանակին հա-
մաձայնությունների փորձերը իմպերիալիստական պե-
տությունների միջև 1914—1918 թ. համաշխարհային
պատերազմի նախորջակին: Անգլիական բանվորութեան
շարքերում լայն տարածված պատրանքներն այն մա-
սին, թե «բանվորական» կուսակցութեան կառավարու-
թեան գլուխ անցնելը նշանակում է բանվոր դասա-
կարգի իշխանութեան գլուխ անցնել, կցրվեն շնորհիվ
Մակդոնայլի իմպերիալիստական և հակաբանվորա-
կան քաղաքականութեան: Այժմ միայն կսկսվի արագ
քաղաքական շերտավորում մասսաների մեջ և նրանց
հեռացումը բուրժուական «բանվորական» կուսակցու-
թյունից: Վորքան Անգլիայի կոմունիստական կուսակ-
ցությունն ավելի վճռականորեն արմատախիլ անի աջ
ոպորտունիստական թեքումների մնացորդները իր
շարքերում և անցկացնի բայլընիկական ճիշտ քաղա-
քականութուն, սրելով բանվորների պայքարն ընդ-
դեմ այսպես կոչված «բանվորական» կառավարութեան,
այնքան Անգլիայի բանվորական մասսաներն ավելի
արագ կտեսնեն, վոր միայն Անգլիայի կոմկուսակցու-
թեան քաղաքականութունը—«դասակարգ դասակար-
գի դեմ»—վերջին ընտրությունների ժամականակ մի-

ուի ճիշտն եր, վոր միայն այդ քաղաքականութիւնն ե նպաստում լայն բանվորական մասսաներին պարլամենտական-պացիֆիստական պատրանքներից ազատագրվելուն և ցույց ե տալիս բանվոր դասակարգի հաղթանակի իսկական ուղին:

ԿիՊԿ-ի պլենումը հավաստում ե, վոր II Ինտերնացիոնալի խոշորագույն կուսակցութիւնները կողմից ներկայումս կառավարութիւններ կազմելը վրա հասնող սլատերադմի և բանվոր դասակարգի մեծացող արհաւիրքները իրադրութեան մեջ ստեղծում ե սոցիալ-դեմոկրատիայի ամենախոր կրիզիսի համար պայմաններ պրոլետարական մասսաների ներսում: Այդ կրիզիսն իր արտահայտութիւնն ե գտնում բանվորական լյան մասսաների արմատականացման պրոցեսի արագացման մեջ: Այդ կրիզիսը սոցիալ-դեմոկրատիային անխուսափելիորեն տանում ե դեպի բանվորական լայն մասսաների մեջ նրա ունեցած ազդեցութեան կորուստը և հենց դրանով ստեղծում կոմկուսակցութիւնների համար նպաստավոր պայմաններ բանվոր դասակարգի մեծամասնութիւնը նվաճելու համար: Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի պլենումը պարտադրում ե Կոմունիստական Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներին ուժեղացնել պայքարն ընդդեմ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի, վորպես կապիտալիզմի կարեւորագույն հենարանի: ԿիՊԿ պլենումն առաջարկում ե հատուկ ուշադրութիւն դարձնել պայքարի ուժեղացման վրա սոցիալ-դեմոկրատիայի «ձախթելի» դեմ, վորը դանդաղեցնում ե սոցիալ-դեմոկրատիայի քայքայման պրոցեսը, պատրանքներ սերմանելով այդ թևի ընդդիմադրականութեան մասին՝ հանդեպ

սոցիալ-դեմոկրատիան դեկավարող ինստանցիաների քաղաքականութեան, մինչդեռ նա իրօք ամեն կերպ սատարում ե սոցիալ-ֆաշիզմի քաղաքականութեանը:

3. Հեղափոխական բանվորական շարժման նոր վերելիքի անումը

6. Նոր յերևույթ ե հանդիսանում միջազգային բանվոր դասակարգի խիստ արտահայտված ձախացումը և հեղափոխական բանվորական շարժման նոր վերելքի աճումը: Բանվոր դասակարգի դրութեան վատթարացումը ճնշման ուժեղացման և կապիտալիստական կեղեքման աճելու հետեանքով, ինքնամերկացումը սոցիալ-դեմոկրատիայի, վորը բաց ե բաց դուրս ե գալիս բուրժուազիայի հետ միասին բանվոր դասակարգի դեմ և անց ե կացնում սոցիալ-ֆաշիստական քաղաքականութիւն, կոմունիզմի ազդեցութեան աճումը բանվորական մասսաներում, բանվորական մասսաներին տանում են դեպի ավելի ակտիվ պայքարի մեթոդներ՝ ընդդեմ բուրժուազիայի: Կապիտալի հարձակումը դեմ ե առնում արդեն բանվոր դասակարգի բարձրացած դիմադրական ուժին: Բուրժուազիայի կողմից հարձակողական դասակարգային ճակատամարտերը վերածում և վերածվում են հակահարձակողական ճակատամարտերի և հաճախ մասնակի կերպով պրոլետարիատի անմիջական հարձակողական ճակատամարտերի: Այնպիսի շարժումները, ինչպես Լոճի ընդհանուր գործադուլը, վոր ցույց տվեց նրան մասնակցողների բարձր դասակարգային գիտակցութիւնը և հեղափոխական ակտիվութիւնը, այնպիսի կոնվուները, ինչ-

պես Ռուսում, վորտեղ չեղաւ միութեան հարձակումը հանձինս կապիտալիստական պետութեան, ձեռնարկատերերի և ռեֆորմիստական բյուրոկրատիայի հանդիպեց բանվոր դասակարգի տոկոսն և վճռական հակահարվածին, ինչպես նաև Կոմկուսակցութեան խոշոր հաջողութիւնները Ֆարգործարկոմների ընտրութիւններին ժամանակ Գերմանիայում ցուցց են տալիս, վորտեղի ունի հեղափոխական նոր վերելքի աճում: Ռեպարացիաների բեռը Գերմանիայում տանում է դեպի դասակարգային պայքարի արագ ուժեղացում, վորը, մի կողմից, արտահայտվում է ձեռնարկատերերի անխնա հարձակումով, իսկ, մյուս կողմից—պրոլետարիատի մասսայական չեղուկների ձևով: Գերմանական պրոլետարիատի վրա ընկնող կրկնակի բեռը՝ ռեպարացիոն վճարումները և հայրենական բուրժուազիայի սաստիկ ճնշումը բանվոր դասակարգի վրա—արագացնում է հեղափոխական կրիզիսի հասունացումը Գերմանիայում: Ամենուրեք բարձրանում է գործադուլային ալիքը. Ֆրանսիայում հանքագործների, մանածագործների, նավաշինարարական բանվորների և պոստ-հեռագրական ծառայողների գործադուլը, Միաց. Նահանգներում—մանածագործների գործադուլը, վորով մասսաների պայքարը հասցվեց մինչև զինված արշունահեղ ընդհարումները բանվորների և վոստիկանութեան միջև, Ավստրալիայի ահագին գործադուլային շարժումները. Հարավային Ամերիկայի գործադուլը (Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում, Պարագվայում, Կոլումբիայում), Գերմանիայում նավահանգստային բանվորների գործադուլը, գործադուլովառում Ռուսում, մանածագործների ամիսներ տևող

պայքարը Լեհաստանում—Լոձի ընդհանուր գործադուլը, գյուղատնտեսական բանվորների գործադուլը, ընդհանուր գործադուլը Հունաստանում, գյուղատնտեսական բանվորների հսկայական գործադուլը Չեխո-Սլովակիայում, ծխախոտագործների ընդհանուր գործադուլը Բուլղարիայում, ուժեղ հեղափոխական գործադուլային ալիքը Հնդկաստանում, գործադուլային պայքարի նոր կենդանացումը Չինաստանում: Այժմ համարյա թե չկա մի չերկիր, վորտեղ 1929 թ. առաջին ամիսները, թե գործադուլների քանակով, թե մասնակցողների թվով գերազանցած չլինեն մի շարք անցած տարիները: Այդ գործադուլային շարժումը դըրսեվորեց անկազմակերպ մասսաների ակտիվ դերը, վորոնք հաճախ իրենց մտրտական արամադրութեամբ հետ են թողնում ռեֆորմիստական արհմիութիւններում կազմակերպված բանվորներին:

Ծագում են համերաշխութեան և բողոքի մի շարք գործադուլներ բանվորների դեմ ուղղված ռեակցիոն հալածանքների առթիվ: Իրա հետ միաժամանակ (մի շարք չերկրներում) ճնշված ժողովրդների և գյուղացիական մասսաների մեջ տեղի չի ունենում հեղափոխական տրամադրութիւնների աճում, վորոնք միջանի չերկրներում արտահայտվում են մասսայական չեղուկների և զինված ընդհարումների ձևով (գյուղացիների մասնակցութիւնը մտիամեկտան ցուցցերին, բատրակների և գյուղական չքավորութեան հեղափոխական չեղուկները և գործադուլները Արևմտյան Ուկրայնայում և Լեհաստանում, գյուղացիական հուզումները հարկային հողի վրա Հունաստանում, ագրարային շարժումները Ռումինայում, գյուղացիական հուզում-

ները Հարավ-Սլավիայի և Իտալիայի միջանի վայրերում, գյուղական բանվորների գործադուլները Ձեխո-Սլովակիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում և այլն):

Ձեռնարկատիրական կազմակերպությունների և ռեֆորմիստական արհմիութենական ապարատի՝ բուրժուական պետությունը միաձուլվելու շատ հեռու գնացած պրոցեսի հանդեպ, դասակարգային հակասությունների արտակարգ սրման պայմաններում արդի ժամանակաշրջանում տնտեսական գործադուլները շատ դեպքերում վերածնում և վերածվում են մասսայական քաղաքական գործադուլների (Լոձ, Բոմբեյ): Այս բոլորը բանվորական մասսաներին ստիպում է տնտեսական պայքարը շաղկապել քաղաքական պայքարի հետ, կապիտալիստական ամբողջ կարգի դեմ մղվող պայքարի հետ: Բուրժուազիան գործադուլավորների դեմ գործ է դնում կապիտալիստական պետություն բոլոր ճնշողական միջոցները (ձերբակալություններ, պաշտոնից արձակել, գնդակահարություններ): Դա առիթ է տալիս և պիտի ել ավելի առիթ տա բողոքի գործադուլների, համերաշխություն գործադուլների, վորոնք ընդունում են վառ արտահայտված քաղաքական բնույթ: Դա կոմկուսակցությունների առաջ դնում է քաղաքական մասսայական գործադուլի պրոբլեմ, վորպես վճռողական պրոբլեմ մերձավորագույն ժամանակաշրջանի համար: Մասսայական քաղաքական գործադուլի գործիքի կիրառումը կոմկուսակցություններին կողմն է բանվոր դասակարգի փոշիացած տնտեսական չեղելիների մեջ ավելի մեծ միասնականություն մտցնել, անցկացնել պրոլետարական մասսաների լայն մոբիլիզացիա և ամեն կերպ ավելացնել նրանց քաղա-

քական փորձը, մոտեցնելով նրանց պրոլետարիատի դիկտատուրայի համար մղելիք անմիջական պայքարին:

7. Մավալվող գործադուլային կոնֆլիկտների և հեղափոխական նոր վերելքի ֆոնի վրա կարևորագույն նշանակություն է ստանում Բերլինի պրոլետարիատի չեղելի մայիսի 1-ին: Այդ չեղելիքը ցույց տվեց գերմանական պրոլետարիատի վոչ միայն մարտական նախաձեռնությունը, այլև գերմանական կոմկուսակցություն ազդեցություն ուժը, այդ կուսակցությունը կարողացավ փողոց դուրս բերել մոտ 200 հազար բանվոր, չնայած վոր Ֆրեյդբերլը և ռեֆորմիստական պրոֆմիություններն արգելել էին ցույցը: Կուսակցությունը մի քայլ անգամ չնհանջեց ռեակցիայի առաջ և թույլ չտվեց, վոր բուրժուազիան պրովոկացիայի չենթարկի իրեն զինված ապստամբություն համար, վորպիսին գոյություն ունեցած պարագաներում կտաներ դեպի կղզիացում և այնպիսի դրություն, չերը հեղափոխական ավանգարդը հետ կշարտվեր: Մաչիսյան ուրերը Բերլինում հանդիսանում են դասակարգային պայքարի շրջադարձային մոմենտ Գերմանիայում և արագացնում են Գերմանական բանվորական շարժման հեղափոխական վերելքի տեմպը, նրանք վոչ միայն գերմանական պրոլետարիատի պարտությունը չեն, ինչպես պնդում են բոլոր պարավողականները և կոմունիզմի ռենեգատները, այլ, ընդհակառակն, ցույց տվին Կոմունիստական կուսակցության մարտական տակտիկայի հաջողակությունը, կուսակցությունն անխնա պայքարում եր իր շարքերում չերևան չեկած բոլոր պրոլետարական տեղեկներների դեմ: Բերլինի պրոլետարիատի չեղելիքի քաղաքական նշանակությունն այն

ե, վոր նա վշրեց բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի փորձը՝ խլելու բանվոր դասակարգից նրա մայիս 1-ը, նա ստիպեց գերմանական բուրժուազիային և նրա սոցիալ-դեմոկրատիային բանվոր դասակարգի հակահարվածի առաջ կապիտուլիացիայի չենթարկվել ցույցն արգելելու հարցում, նա գտավ իր արտացոլումը փողոցի համար մղվող պայքարում մյուս չերկրներում, նա վտարեց կանգնեցրեց Գերմանիայից դուրս պրոլետարական մասսաներին, վորոնք մասսայական ցույցերով իրենց համերաշխութունն արտահայտեցին գերմանական պրոլետարիատին: Վորքան այդ չելույթը տեղի ունեցավ, անցյալ տարիների համեմատութամբ, մայիսյան ցույցերի և մյուս չերկրների (Լեհաստան, Ֆրանսիա, Բոմբեյ) գործադուլների բաժրացած մարտական ընույթի իրադրութան մեջ, նա վկայում է պրոլետարական մասսաների տնտեսական շարժման վերածման և հեղափոխական պայքարի բարձրագույն ձևերի վերածվելու տենդենցների մասին:

ԿիԳԿ-ի պլենումը համերաշխ լինելով Բերլինի հերոսական պրոլետարիատին— Նոյեմբերի և Վեդդինգի բարիկադների արի պաշտպաններին— հայտնում է իր լիակատար համաձայնութունը գերմանական կոմկուսակցութան կողմից գործադրված տաքտիկական գծին՝ Բերլինի դեպքերի ժամանակ:

4. Կոմիսերներ յեվ կոմկուսակցութայունների հերթական խնդիրները

8. Հեղափոխական բանվորական շարժման նոր վերելքի աճումը և Գերմանիայում ու Անգլիայում սո-

ցիալ-դեմոկրատիայի իշխանութան գլուխ անցնելը Կոմիստերնի և նրա սեկցիաների առաջ դնում են առանձին սրութամբ սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարի վճռական ուժեղացման խնդիրը, հատկապես նրա ձախ «թեխ» դեմ, վորպես կոմունիզմի ամենավտանգավոր թշնամու բանվորական շարժման շարքերում և բանվորական մասսաների մարտական ակտիվութան աճման գլխավոր արգելակի: Այդ պատճառով ներկուսակցական քաղաքականութան բնագավառում Կոմիստերնի կենտրոնական խնդիրը դարձել է պայքարն ընդդեմ ոպորտունիզմի, վորը հանդիսանում է բուրժուական ազդեցութան կրողը բանվոր դասակարգի շարքերում և սոցիալ-դեմոկրատական տենդենցների հաղորդիչը կոմունիստական շարժման մեջ: Կոմկուսակցութունները թե հայտնի և թե թագնված ոպորտունիստական տարրերից չմաքրած՝ կոմկուսակցութունները չեն կարող առաջ շարժվել նոր խնդիրների լուծման ուղիով, վորոնք դրվել են դասակարգային պայքարի սրմամբ՝ բանվորական շարժման նոր փուլում:

Այդ նոր փուլի նշանակութունը կոմկուսակցութունների նկատմամբ այն է, վոր նա ոգնեց հայտնաբերելու դասակարգային ծավալվող կռիվների ընթացքում փտած ոպորտունիստական տարրերին, վորոնք այդ կռիվներում խաղացել են շարեյկերեխերական դեր: Հենց դրանով էլ հաստատվեց Կոմիստերնի VI կոնգրեսի ցուցման ճշտութունն այն մասին, վոր կոմունիստական կուսակցութունների մեջ ներկայումս ամենապլխավոր վտանգը հանդիսանում է աջ ոպորտունիստական թեքումը:

9. ԿԻԳԿ-ի պլենումը գոհունակութեամբ հավաստում է Կոմիտեերնի ազդեցութեան աճումն անցած ժամանակվա ընթացքում, նրա սեկցիաների կազմակերպչական և գաղափարային ամրացումը, նրանց գտումն ու պարտուհիստական տարրերից (Բրանդլեր, Գալս, Լոլստոն): Մեղչանական հաշտվողականների կողմից կրկնված աջ ուսնեգատների աղաղակները Կոմիտեերնի քայքայման մասին միայն հաստատում են, թե վոր աստիճանի տնհրաժեշտ եր կոմունիստական շարժման այդ գտումը, վորպեսզի կասեցվեր ու պարտուհիստական տարրերի քայքայիչ աշխատանքը և ապահովեր կոմկուսակցութեւնների իսկական բայլընիկացումը: Այդ բայլընիկացման ամենակարեւորագուն արդունքները մի շարք կոմկուսակցութեւնների մեջ, տոաշին հերթին Գերմանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում արդեն ակունհայտ են ու պարտուհիստերից գտվելը, վոր բարձրացրեց կոմկուսակցութեւնների մարտունակութեւնը և մոտեցրեց նրանց պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի ղեկավարման խնդրի իրագործման այն նոր ուժերի տոաշխաղացումը, վորոնք քաղաքականապես ձեւավորվեցին և աճեցին բանվոր դասակարգի բարձրացող ակտիվութեան պայմաններում և ու պարտուհիստերի գեմ մղվող պայքարում. բայլընիկական կազապահութեան աճումը ներկուսակցական գեմոկրատիայի ավելի լիակատար ծավալման պայմաններում. կոմկուսակցութեւնների ղեկավարող կողմերի բանվորացումը: Պլենումը նշում է կոմկուսակցութեւնների ամրապնդումը VԻ կոնգրեսի քաղաքական և տակտիկական գծերի հիման վրա: ԿԻԳԿ պլենումը հավաստում է, վոր Կոմիտեերնի ղեկավարութեւնը

նը հանձինս քաղաքատուղարութեան և նախագահութեան ճիշտ և կենսագործել VԻ կոնգրեսի վորոշումների գիծը, ժամանակին հականերգործել է կարեւորագուն քաղաքական դեպքերի վրա և հաշտվողութեամբ պայքարել աշխեքման և հաշտվողականութեան դեմ: ԿԻ վճիռների կենսագործման ավելի հաստատուն չերաշխեք ստեղծելու նպատակով պլենումը հանձնարարում է նախագահութեան ձեռք առնել միջոցներ ԿԻԳԿ ապարատն ուժեղացնելու համար՝ սեկցիաներից նոր, աճող կուսաշխատավորներ հրավիրելու միջոցով և այդ ապարատն ու պարտուհիստական տարրերից գտելով:

ԿԻԳԿ ղեկավարութեամբ և նրա բաց նամակի հիման վրա ԳԿ իդեոլոգիապես և քաղաքականապես շարդեց Բրանդլեր Տայլհեյմերի ուսնեգատային խմբակին և բուլորովին վոնչացրեց նրա ազդեցութեւնը բանվորների շրջանում: ՉԿԿ ԿԻԳԿ-ի ակտիվ մասնակցութեամբ արագ վերջ տվեց Գալսի և Ընկ. ստոր փորձին, չերկպառակելու կարմիր արհմիութեանական շարժումը ՉխոՍլովակիայում և դուրս չեկավ լիկվիդատորականութեան դեմ մղած պայքարից ավելի ամրապնդված գաղափարապես և քաղաքականապես: ԿԻԳԿ-ի ղեկավարութեամբ Ամերիկայի կոմկուսակցութեւնը հաշտվողութեամբ լիկվիդացիայի չե չեմթարկում անսկզբունք Փրակցիականութեւնը և ու պարտուհիստական Փրակցիական առաջնորդների (Լոլստան, Պեպեր) կուսակցական կողմերի վրա ունեցած քայքայիչ ազդեցութեւնը:

Աջ թեքումների դեմ մղվող պայքարն անհրաժեշտ է ուժեղացնել նունպես և գաղութային չերկրների կոմունիստական կուսակցութեւններում, վորոնց մեջ ու պարտուհիստական տարրերը հանդիսանում են բուր-

ժուռական և մանր-բուրժուական ազդեցութեան հաղորդելնները և արգելակում են նրա դասակարգային պայքարը:

Ամբողջովին և լիակատար կերպով հավանութուն տալով ԿիՊԿ-ի վճիռներին ամերիկական հարցի մասին, գերմանական հարցին վերաբերող վճիռներին, գերմանական կոմկուսակցութեանն ուղղված բաց նամակին, ԿիՊԿ-ի նախագահութեան վճիռներին, չեխոսլովակիական հարցի նկատմամբ, ԿիՊԿ-ի պլենումը համարում է կոմկուսակցութեանը պատկանելուն հետանհամատեղելի նրա առանձին անդամների կողմից աջ թեքման հալացքների պաշտպանութունը, վորպիսի թեքումը դատապարտված է Կոմինտերնի կողմից, իբրև հակակուսակցական և պրոլետարական հեղափոխական շարժման շահերին խորապես թշնամի մի հոսանք:

Միևնույն ժամանակ պլենումը հավաստում է, վոր վորպես չեքկչոտ ոպորտյունիզմ հանդես չեկող բացահայտ լիկվիդատորութունը քողարկող հաշտվողականութունը վերջին ժամանակներս կոմունիստական շարժման բոլոր հիմնական հարցերում գլորվեց դեպի աջ դիրքերը և Կոմինտերնի ներսում իր վրա վերցրեց աջերի դերը:

Աջ լիկվիդատորներին վտարելուց հետո հաշտվողականութունը Կոմկուսի շարքերում դարձավ բոլոր աջ տարրերի համար ձգողական կենտրոն բոլոր պարտվողական տրամադրութունների և ոպորտյունիստական հալացքների ձայնատար փող: Այդ պատճառով ԿիՊԿ-ի պլենումը պահանջում է՝ ա) վորպեսզի հաշտվողականները բացի բաց և վճռական կերպով սահմանափակեն

աջ թեքում ունեցողներին, բ) վորպեսզի նրանք մղեն ակտիվ պայքար աջ թեքման դեմ վոչ թե խոսքով, այլ գործով, գ) վորպեսզի նրանք առանց վորևե առարկութեան չենթարկվեն Կոմինտերնի և նրա սեկցիաների բոլոր վճիռներին և ակտիվորեն կենսագործեն այն: Այդ պայմաններից վորևե մեկը չկատարելու համար ամեն մի խախտող դուրս կմնա Կոմինտերնի շարքերից: ԿիՊԿ-ի պլենումը կարծում է, վոր առանց այդ վորոշումների կենսագործման, առանց աջ և «ձախ» (տրոցկիստական) լիկվիդատորների ջախջախման, առանց հաշտվողականութեան վճռական հաղթահարման, անհնարին են Կոմինտերնի և նրա սեկցիաների խընդիրների կատարումը նոր վերելքի պայմաններում, պատերազմական վտանգի դեմ և ԽՍՀՄ-ի պաշտպանութեան համար մղվող պայքարի խնդիրների կատարումը, սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարը և մանավանդ նրա «ձախ» թեևի դեմ, կոմկուսակցութունների և բանվոր դասակարգի նախապատրաստումն ապագա պատերազմների համար, բանվոր դասակարգի իրոք հեղափոխական այն առաջնորդների ընտրանքը, վորոնք ընդունակ են համարձակ ու առանց տատանումների պրոլետարիատին տանելու դեպի կապիտալիզմի տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար մղվող պայքարը:

10. Առանձնապես կարևոր նշանակութուն է ստանում լիկվիդատորութեան և նրա նկատմամբ ցուցահանվող հաշտվողական վերաբերմունքի դեմ մղվող պայքարը՝ կոմկուսակցութունների կողմից բանվոր դասակարգի մեծամասնութունը նվաճելու խնդրի կատարման գործում: Սոց-դեմոկ. դեմ պայքարը թու-

լացնելով, նրա ուժերը գերազնահատելով և կոմկու-
սակցութեան դերը նվաստացնելով, այդ տարրերը վի-
ժեցնում են բանվոր դասակարգի մեծամասնութիւնը
նվաճելու համար կուսակցութեան մղած պայքարը, խան-
գարում են սոց.-դեմոկրատիայից դեպի կոմունիստական
շարժումը գնացող բանվորներին անելու վերջին քայլը
դեպի կոմունիզմը: ԿիԳԿ-ի պլենումը նշելով աջ սպոր-
տունիստական տարրերի այդ շարեկերեխերական դե-
րը, կոչ է անում Կոմունիստական Ինտերնացիոնալի
բոլոր սեկցիաներին համակենտրոնացնելու իրենց
ուժերը բանվոր դասակարգի մեծամասնութիւնը նվա-
ճելու խնդրի վրա: ԿիԳԿ-ի պլենումն ընդգծում է, վոր
հեղափոխական բանվորական շարժման աճող նոր վե-
րելքի պայմաններում բանվոր դասակարգի մեծամաս-
նութեան նվաճումը կոմկուսակցութիւնների կենտրո-
նական խնդիրն է: Այս խնդիրը չենթադրում է կոմ-
կուսակցութիւնների կողմից բանվորական շարժման
մեջ ղեկավար դերի նվաճումը, աչսինքն՝ բանվոր դա-
սակարգի բոլոր չեղուկների ղեկավարութիւնը, տըն-
տեսական գործադուլների, փողոցային ցույցերի, ֆար-
գործկոմիների մեջ, վորպէսզի հենց դրանով նախապատ-
րաստվի պրոլետարիատի վճռողական կռիվներում կոմ-
կուսակցութիւնների ղեկավարութեան ապահովումը:
Կոմկուսակցութիւններն այդ կենտրոնական խնդրի
լուծման կարող կլինեն մտանալ միայն պրոլետարիա-
տի մեծ դասակարգային ճակատամարտերի պրոցեսում՝
ներքեից միասնական ճակատի տակտիկայի նոր ձևերի
կիրարկման հիման վրա՝ լայն կերպով ներգրավելով պայ-
քարի մեջ անկազմակերպ մասսաներին (գործադուլային
կոմիտեաները Ռուբում, ֆարգործարկոմիների ընտրու-

թիւնները Գերմանիայում, ձեռնարկութիւնների բան-
վորական պատգամավորական կոնֆերենցիաները, վո-
րոնք նախապատրաստեցին Պարիզում և Բերլինում
մայիսի 1-ի գործադուլը): Այդ նպատակներով նրանք
պետք է իրենց բոլոր ուժերը նետեն ձեռնարկութիւն-
ները և ամեն մի ձեռնարկութիւն շինեն կոմունիզմի
բերդ: Նրանք հին կադրերից պիտի կատարեն ամե-
նալավ տարրերի ընտրութիւն, լրացնեն նրանց այն
նոր ուժերով, վորոնք առաջ են քաշվում դասակար-
գային ճակատամարտերի պրոցեսում ներքեից, մաս-
սայից, պլանաչափ և սիստեմատիկորեն ծավալել ինք-
նաքննադատութիւնը, վորը հանդիսանում է հեղափո-
խական վերադաստիարակութեան և կուսակցական
կադրերի բաշխելիական կոմիտան ամենակարևոր գոր-
ծիքը: Կենտրոնական խնդրի լուծման համեմատ՝ բան-
վոր դասակարգի մեծամասնութիւնը դեպի կոմունիզմը
նվաճելու նպատակով՝ անհրաժեշտ է ձեռք առնել բո-
լոր միջոցները կոմկուսակցութիւնների քաղաքական
ազդեցութեան կազմակերպչական ամրապնդման հա-
մար:

Նկատի ունենալով լեզալութիւնից զրկելու այն
սպառնալիքը, վորը կախված է մինչև այժմ լեզալ
կերպով աշխատած մի շարք կոմունիստական կուսակ-
ցութիւնների վրա, ԿիԳԿ X պլենումը պարտավորեց-
նում է այդ կուսակցութիւններին անսպառնալի և ան-
հատաղ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ քաղաքական
և կազմակերպչական միջոցները, վորպէսզի բոլոր լե-
զանակներով մասսայական պայքար ծավալվի այդ
սպառնալիքի դեմ, ապահովվի շարունակութիւնը,
նույն իսկ ընդլայնումը նրանց մասսայական տշխա-

տանքի նույնպես և անլեզալ իրադրության մեջ և միշտ պատրաստ լինել շաղկապելու անլեզալ և լեզալ աշխատանքի մեթոդները:

Պատերազմի վտանգի սպառնալիքի դեմ մղվող պայքարում, ձեռնարկատերերի հարձակման դեմ և ռեֆորմիստների զրպարտողական կամպանիայի դեմ բոլոր կոմունիստական կուսակցութունները պիտի մղեն բացատրական լայն կամպանիա սոցիալիստական շինարարության վիթխարի նվաճումների մասին Խորհրդադային Միության մեջ (հնգամյակ): Կապիտալիստական ռացիոնալացմանը, վորն ավելի ու ավելի չե հրում պրոլետարիատին դեպի թշվառություն, նրանք պետք է հակադրեն ԽՍՀՄ իրագործվող սոցիալիստական վերակառուցումը, վորը դառնում է բանվոր դասակարգի և գյուղի աշխատավոր մասսաների նյութական ու կուլտուրական վերելքի հզոր լծակը:

11. Միևնույն ժամանակ բոլոր կուսակցությունները ամենայն վճռականությամբ պետք է ուժեղացնեն կոմունիստների և հեղափոխական արհմիութենական ուղղիցիայի գործունեությունը ռեֆորմիստական արհմիություններում, իսկ այն չբերկրներում, վորտեղ արհշարժումը չբերկառակված է, ամենայն չեռանդով պետք է գործել հոգուտ կարմիր արհմիությունների ուժեղացման:

Վորպեսզի ամրացնենք կոմունիստների ազդեցությունը ձեռնարկություններում ձեռնարկատերերի Ֆաշիզմի և ռեֆորմիզմի դեմ մղվող պայքարում, վորպեսզի տրվի կարմիր Ֆաբզորժարկումների աշխատելու համար ավելի լայն բազա, վորպեսզի բանվոր դասակարգի բոլոր կռիվներին տրվի ավելի կազմակերպված բնույթ, տն-

հրաժեշտ է ձեռնարկությունների մեջ ստեղծել բանվորների կողմից ընարված հեղափոխական պատվիրակների կադրեր:

Կի բոլոր սեկցիաները պրոլետարիատի ամենից ճնշված և կեղեքվող խավերի, բանվորուհիների, գյուղական բանվորների և բանվոր չերիտասարդության մեջ կատարվող հեղափոխական գործունեություն բնագավառում պետք է իրենց աշխատանքի մեթոդների արմատական հեղաշրջում և արմատական փոփոխություն մտցնեն:

Աշխատավոր չերիտասարդության դերի աճման հանդեպ և առանձնապես պատերազմի վտանգի կապակցությամբ բանվոր չերիտասարդության մասսաների հեղափոխական մորիլիզացիայի և ընդգրկման հարցն ստանում է արտակարգ մեծ նշանակություն և պահանջում է, վոր բոլոր կոմունիստական կուսակցությունները զորեղացնեն իրենց ուշադրությունը չերիտասարդական շարժման հարցերի նկատմամբ, ինչպես նաև ՅԵԿՄ-ի աշխատանքին ցույց տան ներգործոն աշակցություն: Անցած տարի ՅԵԿԻՄ-ը կատարեց իր խնդիրն, անցկացնելով Կոմինտերնի գիծը աշերի և հաշտվողականների դեմ մղվող պայքարի գործում:

Սակայն ԿՅՅՄ մասսայական աշխատանքների դրությունը և նրանց կազմակերպչական զարգացումը մնացին միանգամայն անբավարար և հրամայողական կերպով թիլադրում են այն պտույտը դեպի մասսաների մեջ կատարվելիք աշխատանքը, վոր պահանջում էր ՅԵԿԻՄ-ի V Համաշխարհային կոնգրեսը: Այն չբերկրներում, վորտեղ կա հաղափոխական գյուղացիական և ազգային ազատագրական շարժում, բանվոր դասա-

կարգի մեծամասնութիւնը նվաճելու հետ միասին գըլ-
խավոր խնդիրը պետք է լինի այն, վոր ամրապնդվի
պրոլետարիատի հեղեմոնիան և կոմունիստական կու-
սակցութեան ղեկավարութիւնն այդ շարժման մեջ:

Ամբողջ Կոմինտերնի խնդիրն է ամեն կերպ նպաս-
տել գաղութներում մասսայական կոմունիստական
կուսակցութիւնների ստեղծմանն ու ամրապնդմանը,
վորպէս պրոլետարիատի կուսակցութիւնների, վոր-
պէս ավանգարդի և ղեկավար ուժի ապագա հեղափո-
խական կռիւներում:

12. Անհրաժեշտ է հաստատուն կուրս վերցնել մաս-
սայական կուսակցութիւնների ստեղծման համար,
պաշտարելով թե սոցիալ-դեմոկրատական ավանդու-
թիւնների և ազանգավորութեան մնացորդների դեմ,
և թե անսկզբունք ֆրակցիականութեան արտահայ-
տութեան դեմ, վորը մի շարք կուսակցութիւնների մեջ
(որինակ, ամերիկական) հանդիսանում է նրանց հետա-
գա դարգացման արգելակը, և այն պատճառներից
մեկը, վորոնք խանգարում են այդ կուսակցութիւն-
ներին մասսայական կուսակցութեան վերածվելու:

Կոմինտերնի մի շարք սեկցիաներում, ինչպէս, որի-
նակ, շվեդականում դեռևս տարածված են աջ տատա-
նումները, վորոնք մեծ վտանգ են ներկայացնում նաև
գործնական աշխատանքում: Առանց վճռական պաշ-
քարի և այդ ոպորտունիստական չերերումների հաղ-
թահարման կոմունիստական կուսակցութիւններն ի
վիճակի չեն լինի ախտիվորեն կատարելու իրենց ա-
ռաջ կանգնած հեղափոխական խնդիրները:

Յեզրափակելով, ԿԻԳԿ պլենումը նշում է կոմկու-
սակցութիւնը լայն պրոլետարական մասսաներից գա-

տելու փորձերի ուժեղացումը հեղափոխական բանվո-
րական շարժման թշնամիների կողմից (կոմունիստնե-
րին արհմիութիւններից դուրս անելը, աշխատանքից
հեռացնելը, նրա մամուլի և կազմակերպութիւնների
արգելելը և այլն) և պաշքարի չե կոչում ընդդեմ այդ
փորձերի. պլենումը գտնում է, վոր ներկա ժամանա-
կաշրջանում ամենամեծ վտանգը հանդիսանում է կոմ-
կուսակցութիւնների համար մասսայական հեղափո-
խական շարժման զարգացման տեմպից հետ մնալը
(պոչիզմ): ԿԻԳԿ պլենումը կոչ է անում Կոմինտերնի
բոլոր սեկցիաներին ամենավճռական պաշքար մղելու
պոչիստական տենդենցների դեմ, վորոնք հանդիսա-
նում են սոց.-դեմոկրատիայից մնացած գաղափարների
արտացոլումը, վորովհետև առանց նրանց հաղթահար-
ման կոմկուսակցութիւնները չեն կարողանա կատա-
րել բանվորական շարժման ավանգարդի իրենց շրջը,
այն ավանգարդի, վոր բանվոր դասակարգին տանում
է դեպի նոր հեղափոխական ճակատամարտեր և հաղ-
թանակներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՎ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՆԳԻՐՆԵՐԸ
(Թեղիսներ ընկերներ Տելմանի և Լոզովսկու գեկու-
ցումների առթիվ)

1. Փամանակակից դասակարգային
նակասամարտի բնույթը

1. Կոմինտերնի VI կոնգրեսի և Պրոֆինտերնի IV
կոնգրեսի որերից անցած ժամանակաշրջանը բնորոշ-
վում է դասակարգային հակասութիւնների անընդհատ

անումով և դասակարգային պայքարի ճակատի բնդ-
լայնումով: Չանցավ լեռկու կոնգրեսի ժամանակից ել
անգամ մի տարի, իսկ այդ ժամանակամիջոցում Գեր-
մանիայի բանվոր դասակարգը, բացի մի շարք խոշոր
տնտեսական ճակատամարտերից, ապրեց Ռուրի պրո-
լետարիատի ահագին շարժումը, Լեհաստանում տեղի
ունեցավ Լոձի 100.000 բանվորների զորեղ ընդհա-
նուր գործադուլը, Ֆրանսիայում բռնկում են մասսա-
յական տնտեսական կոնֆլիկտներ և տարածվում մի
շրջանից մյուսը (վերջին ժամանակներս կազմելով
ամսական վոչ պոկաս քան 100 գործադուլային կոն-
ֆլիկտ), Ավստրիայում առաջին անգամ տեղի էին
ունենում գործադուլներ կապիտալի կողմից անցկաց-
վող ռացիոնալացման դեմ և Ֆարերիկաների ու գոր-
ծարանների Փաշիզացիայի դեմ, Մ. Նահանգներում
սկսվեց մասսայական տարերային գործադուլային
շարժում (հատկապես հարավային նահանգներում):
Նշանավոր են 1929 թվի սկզբներից տեղի ունեցող
բազմաթիվ մասնակի գործադուլները, Անգլիայում,
վորտեղ լճացումը գործադուլային շարժման բնագա-
վառում բանվոր դասակարգի 1926 թ. պարտություն-
նից հետո ամենամեծն էր, ինչպես նաև Յեվրոպայի
գյուղատնտեսական բանվորների մի ամբողջ շարք
գործադուլները (Չեխո-Սլովակիա, Լեհաստան, Ֆրան-
սիա), վորոնք ընդունեցին սուր քաղաքական բնույթ:
Գործադուլային կռիվների այժմյան շրջանի բնորոշ
գիծը՝ դա նույնպես մանր մասնակի գործադուլների
ահագին աճումն է գործարանային և նույնիսկ ցեխա-
յին մասշտաբով, վորպիսի գործադուլների արմատը
կապիտալիստական ռացիոնալացման մամուլի ուժե-

ղացումն է: Վերջապես այժմյան փուլի զարգացման ա-
ռանձնահատկութունն այն է, վոր այդ աճող գործա-
դուլային ալիքն ընդգրկում է գաղութային և կիսա-
գաղութային լեռկրները (Բոմբեյի 140.000 մանածա-
գործների գործադուլը, բանա՛նի պլանտացիաների
բանվորների ընդհանուր գործադուլները Կոլումբիա-
յում, նավաշինարարական բանվորների գործադուլնե-
րը Ֆրանսիական գաղութներում), ընդունելով այն-
տեղ դեռ այդ լեռկրներում չտեսնված չափեր և դա-
ժան ձևեր: Այս ամենն ասում է այն, վոր բանվոր
դասակարգի ձախացումը գնում է արագացող սեմպով
և ավելի ու ավելի միջազգային բնույթ է ընդունում:
2. Բանվորական շարժման այժմյան վերելքի այդ
առանձնահատկութուններն անդրադարձնում են հա-
մաշխարհային կապիտալիստական տնտեսության հիմ-
նական հակասությունների հետագա սրումը: Ծավալ-
ված արտադրողական ուժերի և նեղացված շուկաների
միջև գոյություն ունեցող հիմնական հակասությունն
աճում է և սրվում: Ներկայումս կապիտալիստական
պետությունների ամբողջ տնտեսական քաղաքակա-
նության նպատակն է նվաճել կապիտալների արտած-
ման, վաճառահանության ու հումուլթի շուկաները և
ուժեղացնել պրոլետարիատի շահագործումը կապիտա-
լիստական ռացիոնալացման միջոցով: Այժմ պրոլե-
տարիատի կենսական մակարդակը բարելավելու չու-
րաքանչյուր ձգտում առաջացնում է հակահարված
ձեռնարկատերերի ամբողջ դասակարգի կողմից, վո-
րոնք փորձում են միանգամայն խեղդել բանվորական
շարժումը: Կապիտալիստական ռացիոնալացումը վոչ
միայն ի վիճակի չեղավ հողթահարելու արտադրական

հնարավորութունների և շուկաների տարողության միջև չեղած հակասությունները, այլ, ընդհակառակն, այդ պրոբլեմն էլ ավելի սրվեց և անլուծելի դարձավ: Ռացիոնալացումը մեծացրեց արտադրանքի ընդհանուր զանգվածը, բայց միաժամանակ ուժեղացրեց գործազրկությունը, առաջ բերեց պրոլետարիատի սոցիալական կազմի մեջ խոր կառուցվածքային փոփոխություններ, ել ավելի իջեցրեց պրոլետարիատի կենսական մակարդակը և աշխատավարձի բաժինը աշխատանքի արդյունքի մեջ՝ շնորհիվ աշխատանքի հսկայական ինտենսիֆիկացիայի:

Այդ ֆոնի վրա առանձին սրությունը աչքի չե ընկնում կապիտալիստական չերկրների ռացիոնալացման արբերությունը մեր սոցիալիստական ռացիոնալացումից, — մինչդեռ կապիտալիստական ռացիոնալացումը ընկնում է վորպես անտանելի բեռ բանվոր դասակարգի ուսերի վրա, ԽՍՀՄ-ի սոցիալիստական ռացիոնալացումը հանդիսանում է ԽՍՀՄ-ում կապիտալիզմի մի մուտցորդներն արձատախիլ անելու մի հզոր զենք, վորը ապահովում է խորհրդային պրոլետարիատի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման առավել-արագացված տեմպը:

3. Պրոլետարիատի կյանքի մակարդակի բարձրացման համար մղվող պայքարը, ժամանակակից տրեստային կապիտալի և պետական ապարատի միաձուլման հետևանքով, վերաճում և զառնում է պայքար ընդդեմ կապիտալիստական սիստեմի հիմքերի և ընդդեմ բուրժուական պետություն: Ժամանակակից կապիտալիզմն արդեն հասել է այն մոմենտին, չերք սեփականություն հարաբերությունները դարձել են մի-

անդամայն անհամատեղելի բանվոր դասակարգի կենսական մակարդակի բարձրացման հետ (թեև առանձին զեպքերում և հնարավոր են աշխատավարձի ժամանակավոր և մասնակի բարձրացումներ), և բանվոր դասակարգի առաջ ծառանում է ավելի քան չերբեկցե խնդիր՝ միացնել իր առուրյա պայքարը ամբողջ կապիտալիստական սիստեմի դեմ ուղղված պայքարի հետ: Նոր պայմաններում պրոլետարիատի տնտեսական պայքարն ստանում է ավելի և ավելի վառ արտահայտված քաղաքական բնույթ: Այդ չի նշանակում, վոր պրոլետարիատի տնտեսական մասնակի պայքարը ղեկավարելու հարցն ստանում է ավելի պակաս նշանակություն, քան առաջ: Հատկապես ներկա ժամանակաշրջանում հեղափոխական արհշարժման դերն ամենից առաջ կայանում է պայքարի կազմակերպման մեջ՝ մասնակի պահանջների համար — քաղաքական իշխանությունն ձեռք բերելու պայքարի հետևանքով կյունից: Ժամանակակից տնտեսական կռիվների խորը քաղաքական նշանակություն մեջ իր անդրադարձումն է գտնում բանվոր դասակարգի ձախացումը:

4. Ժամանակակից տնտեսական կռիվների քաղաքական բնույթը վորոշվում է նույնպես նրանով, վոր բուրժուազիան կարևորագույն կապիտալիստական չերկրներում տնցնում է բանվոր դասակարգը ճնշելու նոր ֆաշիստական մեթոդներ: Այդ ֆաշիզացիան արտահայտվում է տնտեսական կռիվների բնագավառում, ամենից առաջ, բանվորներից կոալիցիաների և գործադուլների իրավունքը խլելու ձգտման մեջ, այսպիսով զրկելով պրոլետարիատի տնտեսական կռիվները նրանց լեզու դիրքերից: Դրա համար միջոց ծառայում

են ինչպես հարկադիր արբիտրաժ մասցնելը, նույնպես և տերրորի ու հարկադրման պետական ապարատի բացահայտ կիրարկումը մինչ հեղափոխական արհմիություններին և գործադուլային կոմիտեաներին, գործադուլավորների հավաքույթների ցրումը, մասսայական ձերբակալութույունները և բուրժուական պետութեան ռազմական ապարատի ոգտագործումը վորպես շտրեյկ-բրեխերական բանվորական ուժի (Չելսո-Սլովակիայի գյուղատնտեսական բանվորների գործադուլը): Անհրաժեշտ է առանձնապես նշել նաև ռեֆորմիստական արհմիութենական ապարատի ուղղակի մասնակցութեւնը պայքարող բանվորների ճնշման և գործարանային ֆաշիզմի դարգացման մեջ:

5. Լայն բանվորական մասսաները՝ վորոնց կապիտալի հարձակումը բերում է ամբողջ աշխարհում աճող կեղեքում, ժամանակակից ռացիոնալացված կապիտալիստական ֆարբրիկայի տաժանակիր աշխատանքի մեջ արագացված մաշումն—կապիտալի «բանացրած» ստրուկների շարքերը նետելով նրանց վաղաժամ—ծավալվող գործադրկութուն, բանվորական որվա յերկարացումն, կենսական մակարդակի ցածրացում, անապահովվածութեան արագ աճումն՝ ուժեղացնում են իրենց հակահարվածը կապիտալի հարձակման դեմ ավելի ու ավելի հաճախ և համարձակ անցնում հակառակակամ: Տնտեսական կռիվների նոր բնույթը կայանում է նրանում, վոր այդ կռիվներն ավելի ու ավելի չեն հակընդդեմ կռիվների և նույնիսկ մի շարք դեպքերում պրոլետարիատի հարձակվան բնույթ ստանում: Այդպիսի կռիվներ են հանդիսանում վերջին կես տարվա համարչա բոլոր տնտեսական կռիվները

և առաջին հերթին՝ Լոնդոն գործադուլը, Ռուրի լոկաուտը և Բոմբեյի մանածագործների ընդհանուր գործադուլը:

6. Ներկա տնտեսական կռիվների համար խիստ ցուցանշական է հանդիսանում այն փաստը, վոր չնայած ռեֆորմիստական արհմիութենական ապարատի մինչև այժմ չտեսնված չափերով յերևան յեկող շտրեյկ-բրեխերական դերին, չնայած աջերի դավաճանութեան և հաշտվողականների քայքայիչ աշխատանքին, վերջապես, չնայած բուն հեղափոխական արհշարժման և կոմունիստական կուսակցութույունների կատարած սխալներին—նրանք դեռ չեն սովորել ինչպես հարկն և դեկավարել ինքնուրույնութեմ գործադուլային կռիվները, —չնայած նույնիսկ մի շարք պարտութույուններին, —պրոլետարիատի մարտունակութույունը չի իջել. որին նաև, Ռուրում լոկաուտի յենթարկված բանվորներին չհաջողվեց հասնել իրենց պահանջների բավարարման, բայց միևնույն ժամանակ բանվորական մասսաների մարտունակութույունն ամենևին չնվազեց և այս վիթխարի կոնֆլիկտի փորձը մասսաների հետագա ռազմա-մարտունակ յսրան հանդիսացավ: Այս ամենը վճռականապես հերքում է ռեֆորմիստների և աջ լիկվիդատորների թեորիաները, վոր իբր թե պրոլետարիատի վերջին բոլոր կռիվները, նույն իսկ աշխատավարձը բարձրացնելու պահանջների հետ կապված կռիվները, հանդիսանում են միայն է բացառապես պաշտպանողական կռիվներ:

7. Ստեղծված նոր տնտեսական կռիվների գնահատման համար ամենաբնորոշ հանգամանքը, վոր վկայում է բանվորական շարժման աճող վերելքի մասին, հան-

դիսանում է անկազմակերպ բանվորներին ավելի և ավելի մեծացող ակտիվությունը: Դրան առանձնապես նպաստում են այն խոր կառուցվածքային փոփոխությունները, վորոնք տաջ են չեկել բանվոր դասակարգի կազմության մեջ առաջնալայցման հետևանքով: Արագորեն նվազում է վորակյալ բանվորներին թիվը, վորոնք կազմում են ռեֆորմիստական արհմիությունների հիմնական մասսան: Ռուրի լոկաուտի ժամանակ անկազմակերպ բանվորները կազմում էին շարժման մասնակցողների չերեք քառորդ մասը: Լոձում շարժմանը մասնակցում էին 80.000 տեքստիլ բանվորներ, վորոնցից միայն չորս հազարից մի քիչ ավելին էր արհմիության անդամ: Բուլղարիայում 30.000 գործադուլ արած ծխախոտագործներից 95 տոկոսը չեղել է անկազմակերպ: Փրանսիայում պրոլետարիատի 90% ից ավելին առհասարակ անկազմակերպ է: Նույն լուկ Անգլիայում, վորտեղ գործադուլներն առաջմ կրում են շրջանային փոքր, մասնակի շարժումների բնույթ, ամենից ցուցանշականը անկազմակերպների մեծ մասսայի մասնակցությունն է նրանց մեջ (գործադուլ ավտոմոբիլային արդյունաբերության մեջ): Հնդկաստանում, Բոմբեյում, մեծ մասամբ անկազմակերպ տեքստիլ-բանվորների հզոր գործադուլից դուրս չեկավ ուժեղ ձախ միություն, վորն ընդգրկում է 65.000 մարդ, այսինքն Բոմբեյի տեքստիլ բանվորների 40 տոկոսը: Վերջապես, վերջին տնտեսական կոնիկներում ցուցանշական են հանդիսանում խիստ աչքի ընկնող թեքումները դեպի ձախ, կամանց պրոլետարական մասսաների և յեթիսասարդուրյան աքտիվությունն ու դասակարգային տոկունությունը այն խավերի, վորոնց ճնշող մասը

անկազմակերպ է: Անհրաժեշտ է առանձնապես նշել վոր արտադրություն մի շարք կարևոր ճյուղերում (տեքստիլ արդյունաբերություն, մեքենակառուցում, ելեկտրաարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, սնունդ-համի, կարի, արհեստական մետաքսի պատրաստության արդյունաբերություն և այլն) աշխատավորուհիների հնազին կազմերը կազմում են կեսը, իսկ չերեքն էլ զբաղված պրոլետարիատի մեծամասնությունը: Դրա հետ միասին նրանք կազմում են անկազմակերպ բանվորական մասսաների շատ նշանավոր թիվը: Անկազմակերպվածների այդ ակտիվությունն արտահայտում էր մասսաների տարերային դժգոհության աճումը և ձեղքում էր արհմիությունների լեզալ շրջանակները, ներգրավելով ռեֆորմիստական արհմիությունների մասսային պաշարի մեջ, վորն ավելի ու ավելի հաճախ մղվում է վոչ միայն առանց ռեֆորմիստական արհմիության ապարատի, այլ և ընդդեմ նրա:

8. Այսպիսով դասակարգային ճակատամարտերի հատկանշական գծերը կոմիտեերնի VI կոնգրեսի և Պրոֆինտերնի IV կոնգրեսի ժամանակվանից սկսած, այն գծերը, վորոնք արտահայտում են բանվորական շարժման նոր հեղափոխական վերելքի տարրերի աճումը, հետևյալներն են.

- 1) Անցումն մանր մասնակի կոնիկներից ավելի խոշոր և ավելի մասսայական կոնիկներին:
- 2) Բանվորական մասսաների ավելի ու ավելի հաճախակի անցումն հակահարձակման:
- 3) Անկազմակերպ մասսաների շարունակ աճող ակտիվությունը:

4) Պրոֆմիոլթենական լեզալիզմի ձեռքումն:

5) Գործադուլային կռիվների ավելի ու ավելի մեծ քաղաքականացումն և հեղափոխականացումն:

6) Շարժման միջազգայնություն. գաղութային չեղկրների և մինչև վերջին ժամանակներս չետ մնացած Անգլիայի ընդգրկումը:

9. Տնտեսական պայքարի այդ նոր ձևերի թափը ամենուրեք միատեսակ չե: Մի շարք չեղկրներում, ինչպես, որինակ, Գերմանիայում, վորտեղ շնորհիվ մի շարք պայմանների մենք ունենք ժամանակակից կապիտալիստական ստաբիլիզացիայի հակասութունների կլասիքական արտահայտություն, այդ նոր ձևերը գտել են իրենց ամենավառ տիպաբանները: Ուրիշ չեղկրներում, ինչպես, որինակ, Անգլիայում, վորտեղ բանվոր դասակարգը դեռ նոր է կազմավորվում 1926 թ. ընդհանուր գործադուլի ջախջախումից և հանքագործների պարտությունից և վորտեղ կապիտալիստական ռացիոնալացման պրոցեսը (Գերմանիայի և ՀԱՄՆ հետ համեմատած) դտնվում է սկզբնական ստադիայում միայն, գոյություն ունի միայն դեպի մասսայական կռիվների աճող բուռն շրջանը տանող նախերգանքը: Բանվորական կուսակցություն՝ իշխանություն գլուխ անցնելն անխուսափելիորեն առաջ կբերի այդ կռիվների աճումն և սրումն, վորչափ վոր բանվորական կուսակցության կառավարությունն ավելի ու ավելի կմերկացնի իրեն, վորպես կապիտալիստական ռացիոնալացման կիրառողի և անմիջական գործիքի՝ պրոլետարիատի կեղծման ուժեղացման գործում, հենց դրանով էլ մասսաների մեջ խորտակելով ռեֆորմիստական ցնորքները: Վերջապես մի-

ջազգային բանվորական շարժման պատմության մեջ միանգամայն նոր յերևույթ է մասսայական գործադուլային պայքարը Հնդկաստանում, վորտեղ բոլոր այդ նոր ձևերը թերևս գտել են իրենց ամենից սուր արտահայտությունը: Յուրանշական է հանդիսանում նույնպես բանախի պլանտացիաների բանվորների գործադուլի ժամանակ չեղևան չեկած դասակարգային խիստ շերտավորումը Կոլումբիայում, վորտեղ բանի չեղ պցված ամբողջազգամարչական մեքենան, իսկ բուրժուազիան հանդես չեկավ միասնական ճակատով:

10. Կոմունիստական ու հեղափոխական արհմիութենական ավանգարդի և սոցիալ-Ֆաշիստական արհմիութենական բյուրոկրատիայի միջև այժմ պայքարը մղվում է արդեն վոչ միայն արհեստակցական միությունների ներսում, այլ ընդգրկում է բովանդակ բանվորական մասսան ամբողջությամբ: Այդ պայքարը մղվում է, ամենից առաջ բանվորական մասսաները ղեկավարելու համար՝ գործադուլային շարժման մեջ: Դրա համեմատ կոմունիստական և հեղափոխական արհմիութենական ավանգարդի համար ստեղծվեցին (հատկապես մայիսմեկյան ցույցերից հետո Գերմանիայում) նոր, ավելի բարենպաստ պայմաններ բանվոր դասակարգի մեծամասնությունը նվաճելու համար: Այստեղից է առաջ գալիս անկազմակերպվածների պրոբլեմի այնպիսի հսկայական նշանակությունը: Այստեղից է թելադրվում նոր տակտիկան Ֆաբրորդարկոմների վերբնորոյան ժամանակ: Այստեղից է ծագում կոմունիստական հեղափոխական արհմիութենական ավանգարդի համար գործադուլային կռիվների ինֆուրույն ղեկավարության նշանակությունը առանց ռե-

Ինֆորմիստական արհմիութենական ապարատի արագ ֆաեիզացիայի և բուրժուական պետութւյան միաձուլվելու այդ պրոցեսում առանձնապէս հաստակարգեր ե խաղում Ամատերդամի Ինտերնացիոնալի այսպէս կոչված «ձախ» թևը (Կուկը, Ֆիմմենը և ուրիշները), վորոնք պատրվակ դարձնելով ոպողիցիան հանդեպ Ամատերդամի Ինտերնացիոնալի ռեակցիոն առաջնորդների, փորձում են բանվորներից թագցնել այդ պրոցեսի իսկական իմաստը և սոցիալ-ֆաշիզմի սիստեմում կազմում են ակտիվ որգանական ողակ (և բոլորովին ել վոչ վերջինը):

Բնական ե, վոր բանվորների համար ավելի ու ավելի չե անտանելի դառնում այն դրութւյունը, չերբ նրանք տնտեսական պայքարում հարկադրված են գտնվելու քաղաքականապէս ռեակցիոն շտրեյկերեխերական առաջնորդների ղեկավարութւյան տակ: Արհմիութենական առաջնորդների այդ դավաճանական շտրեյկերեխերական տակտիկան այն մոմենտին, չերբ կապիտալն ընդլայնում և ուժեղացնում ե իր հարձակումը բանվորների կեղեքումը խոշոր չափով ուժեղացնելու նպատակով, ծառայում ե ռեֆորմիստական արհշարժման աճող կրիզիսի հիմնական աղբյուրը:

2. Այդ աճող կրիզիսը գտել ե իր արտահայտութւյունը մի շարք չերկրներում ռեֆորմիստական արհմիութւյունների անգործունեյութւյան (հանգառման) մեջ (Անգլիա) և հեղափոխական արհմիութւյունների մասսայական աճման մեջ (Հնդկաստան, Լատինական Ամերիկա, Միացյալ Նահանգներ): Այս կրիզիսը գտել ե իր արտահայտութւյունը և արհմիութենական մասսաների սուր անվստահութւյան մեջ ռեֆորմիստական

արհմբշուրդրատիայի նկատմամբ և սոցիալ-ֆաշիստական արհմիութենական բշուրդրատիայի հեղափոխական արհմիութենական ոպողիցիայի դեմ ուղղված հարձակման մեջ, ռեֆորմիստական՝ արհմիութւյուններից հեղափոխական ոպողիցիայի անդամներին վտարելու հաճախակի դարձած պրակտիկայի մեջ և «տասնչակ հաղարներով» վտարելու սպառնալիքների մեջ (մետաղագործների ռեֆորմիստական արհմիութւյան նախագահի հայտարարութւյունը Բերլինում): Վորքան արհմիութւյունները սոցիալ-ֆաշիստական արհբշուրդրատիայի ձեռքում ավելի չեն վերածվում կապիտալիսական սնեստոբյան հասարակ ոժանդակիչ գործիքի, այնքան ավելի ուժեղ պիտի լինի ռեֆորմիստական արհշարժման կրիզիսի աճումը, այնքան ավելի խիստ պիտի լինեն արհմիութենական բշուրդրատիայի գրոնները հեղափոխական արհմիութենական ոպողիցիայի դեմ: Արդեն այժմ ռեֆորմիստական արհմիութւյունների մեջ ներքին պայքարն արտակարգ սրվել ե: Բանվորակտն մասսաների ճնշումն առաջնորդների (ֆունկցիոններների) վրա այնքան ուժեղ ե, վոր հազվագյուտ չեն դեպքեր, չերբ ռեֆորմիստական արհմիութւյունների ստորին ողակները հարկադրված են դուրս գալու արհմիութենական ղեկավարների դեմ, վորոնք արհմիութւյունները շտրեյկերեխերական կազմակերպութւյունների և կապիտալիստական ստաբիլիզացիայի գործիքների վերածելու նպատակներով վարում են դասակարգային պառակտողական քաղաքականութւյուն, դուրս շարտելով արհմիութւյուններից լավագույն հեղափոխական տարրերը, լիկվիդացիայի չեն չենթարկում արհմիութենական դեմոկրատիայի վերջին

մնացորդները, հեղափոխական ուսուցիչներին ներկայացնում են վերջնագրեր («ռեվերսներ») և բռնում են արհմիությունների ֆաբրիկայի կուրս:

3. Ռեֆորմիստական արհմիությունների ներքին դարգացման արդի ետապը համապատասխանում է առհասարակ դասակարգային ուժերի հարաբերակցուցության ընդհանուր փոխանցական շրջանին: Բանվոր դասակարգն արդեն բավականաչափ ամրացած է, վորպեսզի ավելի ու ավելի հաճախ անցնի հակահարձակման: Արհմիութենական բյուրոկրատիան դեռ ունի ազդեցություն բանվորների վորոշ խավերի վրա, բայց հեղափոխական արհմիություններին և հեղափոխական արհմիութենական ուսուցիչներին ավելի ու ավելի չե հաջողվում ռեֆորմիստական արհմիություններում կազմակերպված բանվորների լայն մասսաներին գրավել և տանել իր չեռերից: Դրանով կանխորոշվում են կոմունիստների բոլոր խնդիրները ռեֆորմիստական արհմիություններում. վոր թե պետք է դուրս գալ ռեֆորմիստական արհմիություններից, այլ պրոլետարիատի դասակարգային պայքարը վճռականորեն գլխավորելու միջոցով աջակցել ռեֆորմիստական արհմիությունների պատկանող մասսայի հեղափոխականացման տեմպի արագացմանը:

3. Տնտեսական կոիվները յեվ հեղափոխական արհեստավոր

1. Կի ԳԿ IX պլենումը և Պրոֆինտերնի IV կոնգրեսը կոմկուսակցությունների և հեղափոխական արհմիությունների մասին գրեցին վոր միայն գործադուլային պայ-

քարը ինքնուրույնորեն գլխավորելու, այլ և այդ պայքարի կազմակերպական ամենալավ նախապատասխան և բանվոր դասակարգի միասնականությունը ներքինի՝ ձեռնարկության մեջ՝ կենսագործելու խնդիրը: Արդեն այն ժամանակ հավաստված էր հեղափոխական արհմիությունների քաղաքական ազդեցությունների մասին և նրա կազմակերպական ընդգրկման միջև չեղած անհամապատասխանությունը: Այդ նպատակով առաջարկվեց անցկացնել ռեֆորմիստական արհմիություններում կոմունիստական ֆրակցիաների վերակազմությունները, ինչպես նաև հեղափոխական արհմիությունների վերակազմություն՝ արտագրությունը հիմք ընդունելով (այն չեղրներում, վորտեղ արհմիությունը պառակտված է), դեմոկրատական ցենտրալիզմ կենսագործելու նրանց մեջ և ստեղծել ֆաբրիկայի կոմիտեի վորպես բազա հեղափոխական արհմիությունների: Դրա հետ միասին, արդեն այն ժամանակ մատնանշված էր սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների և արհմիութենական լեգալիզմի վտանգը, վորն այն ժամանակ առանձնապես վառ կերպով արտահայտվեց այն չեղրներում, վորտեղ չկան ինքնուրույն հեղափոխական արհմիություններ (Գերմանիա), «հրեցեք արհմիութենական բյուրոկրատներին» լոզունգի մեջ, ինչպես նաև հեղափոխական արհմիությունների առաջնորդների դիվանագիտական վերնախավային կոմբինացիաներում ռեֆորմիստական արհմիությունների առաջնորդների հետ:

2. Այդ վտանգը կարող էր առանձնապես լրջանալ և անխուսափելիորեն պիտի լրջանար տնտեսական կոիվների աճման և արտասովոր սրման հետագա շրջ-

Չանուամ: Հենց այդ վերջին պրոցեսում տեղի ունեցավ (և չե՛ր ել կարող տեղի չունենալ) Կոմիտեերնի ուժերի միախառնութունը՝ անտիլենինյան, ուսուցիչական տարրերի վտարման հիման վրա: Նույնպիսի վերախմբավորումն անխուսափելի չե՛ր և հեղափոխական արհշարժման մեջ (Ձեխո-Սլովակիայում Գալսի և Ընկ., ինչպես նմանապես Գերմանիայի ԿԿ արհրաժիհներնի ակտիվ աշխատավորների մի մասի հեռանալը): Կոմիտեերնի և Պրոֆիտերնի վճիռներն ի դուր չանցան: Կոմկուսակցութունները և հեղափոխական արհշարժումը (ինչպես միասնական արհշարժում ունեցող, նույնպես պառակտված արհշարժում ունեցող չերկրներում) խոշոր նվաճումներ են արել այդ ժամանակաշրջանում: Անցյալ տարիների գործադուլների համեմատությամբ կա ավելի լավ նախապատրաստում, միասնական ճակատի ավելի լավ անցկացում, կան հաջողութուններ արհմիութենական լեզվալիզմի դեմ ուղղված պայքարի և կուկուսակցութունների սնտեստական և քաղաքական լողունները կյանքի մեջ անցկացնելու գործում: Փորձը ցույց տվեց, վոր այդ շըրջանում հեղափոխական արհշարժման նվաճումներն ուղիղ հարաբերական են յեղել այն վնասականության, վորով այդ վճիռներն անց ելին կացվում կյանքի մեջ:

3. Այն չերկրներում, վորտեղ չկան ինքնուրույն հեղափոխական արհմիութուններ, մինչև այժմ հեղափոխական արհշարժման ամենամեծ թուլութունը հանդիսանում է արհմիութենական լեզվալիզմը, արհմիութենական կանոնադրության շրջանակից դուրս գալով, վախը: Այստեղից և բղխում է արհմիութենական բյուրոկրատիայի հարձակման դեմ ուղղված անբավարար

հակադրումը (վտարումներին, «ուվերսներին») և բանվորական մասսային ներքևից ընդգրկելու վոր բավականաչափ ակտիվ աշխատանքը (Գերմանիայում Ֆարգորժարկումներնի վերընարության ժամանակ նոր տակտիկա անցկացնելը, պայքարի կոմիտեերնի կազմակերպելը և այլն): Որինակ, Լոճում 1928 թվի աշնան ընդհանուր գործադուլի ժամանակ հեղափոխական ուսուցիչիան հմտորեն նախապատրաստեց պայքարը, հմտորեն ոգտագործեց պայքարի մոմենտը, չեր բանվորները վրդովված ելին նոր գործարանային ոեզլամենտներ և տուգանքների տախտակներ մտցնելու պատճառով, իրավացի կերպով մերժեց միքանի կոմունիստներնի առաջարկը գործադուլի վաղաժամ հայտարարման մասին, գործադուլի շուրջը ծավալեց լայն կամպանիա և հմտորեն շողկապեց տնտեսական պայքարը Ֆաշիստական ոեժիմի դեմ ուղղված քաղաքական պայքարի հետ: Սակայն միևնույն ժամանակ գործադուլային կոմիտեյի կարմիր Ֆրակցիան դրսևորեց միասնականության մեր տակտիկայի սխալ ըմբռնում, և դրա հետևանքով ել առաջ չեկավ պարտավողական գործադուլային կոմիտե, վորը մեծ մասամբ կազմված էր Պեպեսի (լեհական սոցիալիստական կուսակցության) կողմնակիցներից:

4. Հեղափոխական արհշարժման մյուս թերութունն այդ չերկրներում հանդիսանում է հեղափոխական արհուսուցիչայի նոր սակսիկայի կիրառմամբ իրենց գիրքերը ռեժոնրիսական արհմիությունների ներսում թուլացնելու վախը: Հենց այդ հանգամանքն են ոգտագործում այժմ աջերն ու հաշավողականները, այնպես, ինչպես առաջ նրանք (Ռուրում պայքարի կոմի-

տեններ ստեղծելու ժամանակ) սպեկուլյացիա ելին անում այն չերևակայական հանգամանքի վրա, թե իբր կուսակցությունները և հեղափոխական արհուրդիցիան «ապադասակարգայնացված լյուսպեն-պրոլետարիատի» կազմակերպությունների լեն փոխակերպվում:

5. Այստեղ դեռ ևս մեծ թերություն է հանդիսանում բուն կոմունիստական ֆրակցիաների կառուցվածքի և աշխատանքի բնույթը արհմիություններում: Ռեֆորմիստական արհմիություններում կոմկուսակցությունների հաջող աշխատանքի անհրաժեշտ նախադրյալը մասսաներին տիրելու համար հանդիսանում է ամուր արհմիութենական կոմֆրակցիաների առկայությունը, վորոնք ընդունակ են անցկացնելու կուսակցական գիծն արհմիություններում, վորոնք կապված են իրար հետ և աշխատում են համապատասխան կուսակցական կոմիտեների ղեկավարությամբ: Պլենումը նորից հավաստում է, վոր կոմիտեներն ըստ ըստ վճիռները արհմիութենական կոմֆրակցիաների խնդրի մասին կատարվում են անբավարար: Արհմիութենական կոմֆրակցիաները գոյություն ունեն վոչ ամենուրեք, վորտեղ նրանք պետք է կազմակերպվեն համաձայն չերկրորդ միջազգային կազմխորհրդակցության, իսկ այնտեղ, վորտեղ նրանք կան, չերբեմն կազմակերպված են սխալ: Մի շարք տեղերում, վորտեղ կա անլիզալ կոմունիստական շարժում (Լեհաստան) կոմֆրակցիաների կողքին ստեղծված են այսպես կոչված կարմիր ֆրակցիաներ: Ընդդմին վորոշակի սահման չի դժված կարմիր ֆրակցիաների և կոմֆրակցիաների աշխատանքի միջև: Կարմիր ֆրակցիաներն այնպես պետք է կառուցվեն, վոր-

պեսզի նրանք ներկայացնեն կոմֆրակցիաների շուրջը կազմակերպվող նրանց համակրող բանվորների առավելագույն միավորությունները: Սակայն կարմիր ֆրակցիաները վոչ մի դեպքում չեն փոխարինում կոմֆրակցիաներին և կոմկուսակցությունները չպիտի կառուցեն կարմիր ֆրակցիաներ, մինչև վոր չապահովեն նրանց մեջ կոմֆրակցիաների ղեկավար դերը:

6. Վերջապես, բուն կոմկուսակցություններում մինչև այժմ չկա արհմիութենական աշխատանքի բացառիկ նշանակության լիակատար գիտակցությունը զարգացման այժմյան ետապում: Արհմիությունների աշխատանքին նայում են վորպես «բաժնի» սովորական աշխատանքի: Կուսակցությունը չի համակենտրոնացնում իր ամբողջ ուշադրությունը և, մասնավորապես, գործարանային կուսընթացների ուշադրությունը արհմիութենական առույթ աշխատանքի վրա, առաջին հերթին տնտեսական կոնիվների ղեկավարության նախապատրաստման վրա: Դա վկայում է հեղափոխական արհմիութենական աշխատանքի և արդի անտեսական կոնիվների քաղաքական նշանակության քերականահասման մասին:

7. Այն չերկրներում, վորտեղ կա ինքնուրույն-հեղափոխական արհշարժում (Ֆրանսիա, Չեխո-Սլովակիա), հիմնական թերությունը— դա մինչև այժմ հեղափոխական արհմիութենական ակտիվի վորոշ մասի կողմից մասսաների արմատականացման արհմիութենական ռեֆորմիզմի նոր բնույթի թերագնահատելն է: Ֆրանսիայում ունիտար միությունները հանկարծակիի բերվեցին և մնացին շարժման քակ (շարժումն անցավ ՈւՆՄԿ-ի գլխի վրայից, մեր կազմակերպություններ-

բին պակասեց նախաձեռնութիւնը», հայտարարեց Մոնոպոսոն ՈւԸԱԿ-ի (Ունիտար Ընդհանուր Աշխատանքի Կոնֆեդերացիայի) խորհրդի հոկտեմբերյան պլենումում)։

Չեխո-Սլովակիայում կարմիր արհմիութիւնների (ՄՕՇ) ղեկավարութեան լիկվիդատորական մասի տակտիկան բնորոշվում էր ռեֆորմիստական արհմիութենական կազմակերպութիւնների առաջնորդների հետ ունեցած վերնախավային կոմբինացիաներով, այլասերված ռեֆորմիստական գործարկումներին գործակցելով, մի բան վոր հռչակվում էր միասնական ճակատի տակտիկայի կիրառում, լեզալիստական դիրքավորումով բուրժուական պետական իշխանութիւնների նկատմամբ, գործադուլային տակտիկայի հանդէպ ունեցած ոպորտյունիստական վերաբերմունքով և մասնավորապէս անկազմակերպվածների նկատմամբ։ Այդ վերջացավ նրանով, վոր առաջին խոշոր տնտեսական կոնֆլիկտի ժամանակ, չեք կոմկուսակցութիւնը և հեղափոխական արհմիութիւններն անցնում էին գործադուլային նոր տակտիկայի, լիկվիդատորական տարրերը բաժանվեցին հեղափոխական արհշարժումից։

Այդ չեքերներում մեծ վտանգ է հանդիսանում նույնպէս լեզալիզմը, հարգանքը դեպի կապիտալիստական որենքները։ Պայքարելով մինչև վերջին աստիճան ամեն մի լեզալ հնարավորութեան համար, հեղափոխակար արհմիութիւնները միևնույն ժամանակ բուրժուական պետութեան և կապիտալիստական լեզալութեան նկատմամբ չպետք է տածեն վորևէ ոպորտյունիստական ցնորք։ Կարմիր արհմիութիւնների ուժն ու ազդեցութիւնը կախված են բացառապէս պրոլետարիա-

տի տնտեսական կոնֆլեքտի ակտիվ կազմակերպումից և այդ կոնֆլեքտի ինքնուրույն ղեկավարումից։ Հեղափոխական արհմիութիւնների գլխավոր թույլ կողմերից մեկն այն է, վոր նրանք բավարար չափով արմատ չեն ձգել ձեռնարկութիւններում, վոր գործարանում բացակայում է (կամ թե ծայրահեղորեն վատ է գործում) արհմիութենական լիազորների սիստեմը։

8. Այդ սխալ դիրքավորման և նախաձեռնութեան բացակայութեան անմիջական հետևանքը հանդիսանում էր հեղափոխական արհմիութիւնների թույլ կապը մասսաների հետ։ Դա հավաստում է և Ֆիկ կենտրոնական կոմիտեի բանաձևը կոմունիստների գործադուլային տակտիկայի մասին Ֆրանսիայում (որինակ, Լուարայի հանքագործների գործադուլի ընթացքում համարյա թե գոյութիւն չունեի վոչ մի կապ գործադուլ անողների և ղեկավարութեան միջև)։ Այստեղից և բղխում են ոպորտյունիստական սխալները միասնականութեան տակտիկայի մեջ (Բորդո)։ Այստեղից և բղխում է անկազմակերպների պրոբլեմի փաղափակն նշանակութեան չըմբռնելը։ Այդպիսին էր հանդիսանում հեղափոխական արհմիութիւնների ղեկավարների մի մասի բացասական վերաբերմունքը դեպի գործադուլային ընտրովի լայն կոմիտեները—այն հիման վրա, վոր իբր թե այնտեղ, վորտեղ գոյութիւն ունեն հեղափոխական արհմիութիւններ, վորոնք ակտիվ կերպով ղեկավարում են գործադուլային պայքարը, այդպիսի գործադուլային կոմիտեներն ավելորդ են։ Այսպիսի տեսակետը տրեղյունիստական շուռ սված ստեմալափակութիւն է (հեղափոխական արհմիութիւնների նկատմամբ) արդի դարաշրջանի հիսնական

խնդրի և բանվոր դասակարգի մեջ մեծամասնութիւնն նվաճելու ուղիները չըմբռնողութիւնն: Պառակտված արհշարժում ունեցող յերկրներում մինչև այժմ մեծ թերութիւնն է հանդիսանում կոմունիստական կուսակցութիւնները և հեղափոխական արհմիութիւնները: Արդի հտապի համար առանձնապէս ֆրասակար է հանդիսանում այն տեսակետը, թէ իբր տնտեսական կռիւները — դա միայն հեղափոխական արհմիութիւնները բնագավառն է, իսկ քաղաքական կռիւները — կոմկուսակցութիւնն: Այդպիսի աշխատանքի «բաժանումը» տվեց այն արդունքը, վոր մի կողմից հեղափոխական արհմիութիւնները կոմունիստական ակտիվը կտրվեց հեղափոխական քաղաքական պայքարի մեծ պրոբլեմներից (զրա վառ որինակը ծառայում են դավաճան Գայսի տիպի արհրչուրոկրատները), մյուս կողմից՝ կուսակցական ֆրակցիոնները լայն կազմերը կտրվեցին բանվոր դասակարգի առորչա պայքարից, իսկ հենց դրանով էլ առհասարակ՝ մասսաներից:

9. Վերջապես գործադուլը նախապատրաստելու ժամանակաշրջանում ամբողջ աշխատանքի հիմնական թերութիւնը այստեղ ևս, ինչպէս միասնական արհշարժում ունեցող յերկրներում, դա ագիտացիոն-պրոպագանդիսական մոմենտի գերակշռութիւնն էր, կազմակերպչական աշխատանքի համեմատութիւնը: Այնինչ գործադուլը լուրջ միայն այն դեպքում կարելի չէ նախապատրաստել, յետե արվի նախնական կազմակերպչական մեծ աշխատանք:

4. Արհմիութիւններն ու պայքարի կոմիտեները

1. Կոմիտեներն VI կոնգրեսի ժամանակից սկսած գործադուլային պայքարի փորձը ամբողջովին և լրիվ կերպով արդարացրել է տնտեսական պայքարները կոմունիստների կողմից ինքնուրույն ղեկավարելը: Գործադուլային պայքարը ինքնուրույն կերպով ղեկավարելը և անկազմակերպներին ներգրավելն հնարավոր են, առաջին հերթին, պայքարի լայն կոմիտեներ ստեղծելու միջոցով (գործադուլային, հակալուկառուային կոմիտեներ և ուրիշ), վորոնք ընտրվում են ամբողջ գործարանի կողմից՝ ինչպէս կազմակերպված, նույնպէս և չկազմակերպված բանվորներից և բանվորուհիներից: Տնտեսական կոնֆլիկտների մոմենտներում պայքարի կոմիտեները հանդիսանում են ղեկավարութիւն հիմնական որգանները, վորոնք իրենց շուրջն են համախմբում բանվորական լայն մասսաները քաղաքական և տնտեսական պլատֆորմի հիման վրա: Առանց բացառութիւն, բոլոր դեպքերում, յերբ գործադուլների կամ լուկառուների ժամանակ զբվում էր պայքարի հատուկ կոմիտեներ ստեղծելու հարցը՝ գործադուլները ղեկավարելու և լուկառուների դեմ պայքարելու համար, այդ լոգունգը տաք արձագանք էր գտնում ամենալայն մասսաներում և թույլ էր տալիս կոմկուսակցութիւնն հեղափոխական արհշարժման կողմնակիցներին կազմակերպել նրա շուրջը և հեղափոխական պայքարի պլատֆորմի հիման վրա գործադուլ անողների նշանավոր, իսկ մի շարք դեպքերում վնդողական մասը: Հենց ինքնուրույն, ռեֆորմիստական արհմիութեանական ապարատին չեն.

Թարկվող կոմիտեաներ ստեղծելու լողունըը թույլ եր տալիս կոմունիստական կուսակցութեան և հեղափոխական արհշարժման կողմնակիցներին կազմակերպչորեն միախոնել ս.-դ. և ռեֆորմիստական արհմիութենական ապարատի դեմ պրոլետարների մեծ մասսաներ, ինչպես այդ տեղի ունեցավ Ռուրում:

2. Ահավարելով մասսաներին նրանց տնտեսական և քաղաքական չեղելթնեղում, պաշտարի կոմիտեաները պետք է լինեն լայն անկուսակցական մասսայական կազմակերպութեաններ, վորովհետև նրանք կոչված են միավորելու այն բանվորներին և բանվորուհիներին, վորոնք պատկանում են դանազան կազմակերպութեաններ և զանազան արհմիութեաններին, ինչպես նաև չկազմակերպվածներին:

Սակայն լինելով անկուսակցական, նրանք չեն կարող լինել քաղաքականապես չեզոք, անտարբեր կամ թե ապաքաղաքական: Լոճի վորձը ցուցց է տալիս, թե վորքան վտանգավոր է պաշտարի կոմիտեաներում ունենալ կապիտալիստների ռեֆորմիստական ազենտներ (Պ Պ Ս):

Պաշտարի կոմիտեաների քաղաքական պրատֆորմը կազմվում է այն քաղաքական լողուններին, վորոնք առաջադրվում են բանվորական մասսաների կողմից իրենց չեղելթնեղի ժամանակ (ինչպես, որինակ, պաշտար կապիտալիստական ռացիոնալացման դեմ, պաշտար պարտադիր արբիտրաժի դեմ, պաշտար ֆաշիզմի դեմ, պաշտար բուրժուական և բուրժուական-դեմոկրատական բլոկների դեմ և այլն): Իրա հետ միաժամանակ պաշտարի կոմիտեաները պետք է այդ քաղաքական լողունները սերտ կերպով շար-

կապին բանվոր դասակարգի անմիջական տնտեսական կարիքների համար մղվող պաշտարի հետ: Պաշտարի կոմիտեաների համար առաջ են քաշվում այն բանվորներն ու բանվորուհիները, վորոնք կանգնած են այդ քաղաքական պրատֆորմի վրա:

3. Պաշտարի կոմիտեաները համախմբում են իրենց շուրջը բանվորական լայն մասսաներին, առանց արհեստի խտրութեան, վորպես կիսաձևավորված ժամանակավոր միավորութեաններ: Նրանք չեն կարող նշանակվել վերևից, ինչպես այդ անում են ռեֆորմիստները (արհմիութեանների կողմից գործադուլային կոմիտեաների նշանակումը): Նրանք պետք է ընտրվեն բանվորների և բանվորուհիների համագործարանային պատվիրակային ժողովներում:

4. Պաշտարի կոմիտեաները հանդիսանում են ժամանակավոր կազմակերպութեաններ, և կոմունիստները պետք է իրենց վրա վերցնեն նրանց կազմակերպելու նախաձեռնութեանը պրոլետարիատի մասսայական չեղելթնեղի ժամանակ—պրոլետարական դեմոկրատիայի հիման վրա: Պաշտարի կոմիտեաները չպետք է սահմանափակեն պաշտարի տերիտորիան, այլ պետք է ձգտեն ընդլայնելու այն և տնտեսական պաշտարը քաղաքականի վերածելու: Պաշտարը վերջացնելուց և հաշվետու կամպանիան անցկացնելուց հետո նրանք արձակվում են:

5. Վորովհետև ռեֆորմիստական արհմիութեանական ապարատն ավելի ու ավելի չե ֆաշիզացիայի չեթարկվում, մասսաների ամեն մի տնտեսական, թե քաղաքական շարժում, ռեֆորմիստական արհմիութեանական ապարատի կողմից հանդիպում է նույնպիսի դիմա-

դրուիցան, ինչպես և՛ ձեռնարկատերերի և բուրժուական պետութիւնն կողմից:

Այստեղից բխում է անհրաժեշտութիւնն ու հնարավորութիւնը պաշտարի կոմիտեաների կողմից ղեկավարվող պրոլետարական մասսայական չեղուցիների ժամանակ հակադերևու այլ կոմիտեաները ռեֆորմիստական արհմիութենական ղեկավարութիւնն վող միայն պաշտարը մինչև վերջը տանելու իմաստով, այլ նաև տարիֆային համաձայնութիւններ կնքելու, պաշտարի արդյունքներն ամրապնդելու և ձեռնարկութիւններում տարիֆային հանձնաժողովների ու վերահսկողութիւնն որգանների ստեղծման նախաձեռնութիւնը վերցնելու միջոցով, վորպիսի մարմինները պետք է հետևեն կնքած համաձայնութիւնն կենսագործմանը: Վերջին շրջանի գործադուլային կռիւիների ժամանակ պաշտարի կոմիտեաների և ռեֆորմիստական արհմիութեանը կողմատիւ մեջ պաշտար տեղի ունեւ բանվորական մասսաները ղեկավարելու համար (Գերմանիա):

Պաշտարի կոմիտեաները մի քանի դեպքերում նույնիսկ պայմանագրեր ելին կնքում կապիտալիստների հետ բանվորների անուսից: Վորպես ղեմնկրատական մասսայական որգաններ, վորոնք իրոք պաշտարում են բանվորական շահերի համար, պաշտարի կոմիտեաները դառնում ելին արհմիութենական բյուրոկրատիան, սրա դավաճանութիւնը և կապիտալիստներին գործակից լինելը մերկացնող որգաններ:

6. Ռեֆորմիստական արհմիութիւնների անդամների մասսային նվաճելու պաշտարի կարևոր միջոցը (այն չեղկրներում, վորտեղ բացակայում է ինքնուրույն հեղափոխական արհմիութեանը) հանդիսանում է հեղա-

փոխական ուղղիցիայի պլանմորմի բազայի վրա արհմիութեաններին մեջ նոր բանվորներ և բանվորուհիներ ներգրավելը անկազմակերպների թվից, վորոնք համախմբվում են պաշտարի կոմիտեաների շուրջը մասսայական չեղուցիների ժամանակ: Կոմիտեաները չեղուցիների կողմից անկազմակերպների ընդգրկումը, վոր կազմում է մոտակա ժամանակի կարևորագույն մարտական խնդիրը, պետք է ընթանա, մի կողմից, Ֆարգործարկումների կազմակերպման և նվաճման ուղիով և նրանց պաշտարի կոմիտեաների շուրջը համախմբելու միջոցով, նմանապես և ամեն տեսակ մասսայական հեղափոխական կազմակերպութիւնների շուրջը, ինչպես, որինակ, Մեծբարպում, Մոպր, Կարմիր ճակատայինների միութիւնն և ուրիշները, մյուս կողմից հեղափոխական արհմիութիւնների ոգնութիւնը նրանց կազմակերպելու միջոցով այն չեղկրներում, վորտեղ արհմիութեանը պառակտված է: Սակայն կոմիտեաները հատուկ ուշադրութիւն պետք է դարձնեն այն հանգամանքի վրա, վոր տնտեսական կռիւների ժամանակ կոմիտեաները և հեղափոխական մասսայական կազմակերպութիւնների մեջ ներգրավվեն լավագույն տարրերը: Անկազմակերպներին ընդգրկելու միջնակտն ձևերի ստեղծումը (այն չեղկրներում, վորտեղ չկան հեղափոխական ինքնուրույն արհմիութիւններ, ինչպես, որինակ, Գերմանիայում և Անգլիայում), վորոնք կրում են կիսարհմիութենական բնույթ («փոխոգնութիւնն ընկերութիւնները» կամ թե «պաշտարի ընկերութիւնները լոկալտների դեմ»), կարող է միայն կասեցնել հեղափոխական արհմիութեան կողմից անկազմակերպների իրական ընդգրկումը:

7. Պայքարի կոմիտեները—զա պրոլետարական մասսայական գործողութեան որդաններն են: Դրանումն են պայքարի կոմիտեների դասակարգային հիմնական արժեքը: Պայքարի կոմիտեների մեջ պետք է ներկայացվեն այն բանվորական մասսաները, վորոնց վերաբերում է տվյալ կոնֆլիկտը, առանց կուսակցական և արհմիութենական պատկանելիութեան խտրութեան, ինչպես կազմակերպված, նույնպես և անկազմակերպ բանվորներն ու բանվորուհիները: Ուստի և բանվորական մասսաների ղեկավարութունը պայքարի կոմիտեները կնվաճեն միայն այն ժամանակ, չերբ հենց իրենք մասսաները, իրենց պայքարի փորձով կհամոզվեն, վոր ղեկավարութեան այդ ձևը ապահովում է նրանց համար դասակարգային ճակատի միասնականությունը և կայուն դասակարգային գիծը:

8. Պայքարի կոմիտեների զարգացումը, վորպես պրոլետարիատի մասսայական լեյուլթներ ձևանալու ղեկավարութեան որդաններ, նշանավոր չափով արգելավում է կոմիտեների սեկցաների և հեղափոխական արհշարժման մասսաների ակտիվությունից չետ մնալու պատճառով: Այդ չետ մնալու պատճառներն արմատացած են արհմիութենական լեգալիզմի մնացորդների մեջ, կոմկուսակցութունների կազմակերպչական աշխատանքի թուլութեան մեջ, մասնավորապես գործադուլային կոնֆլիկտները նախապատրաստելու ժամանակ, վերջապես տնտեսական կոնֆլիկտի իսկական բնույթը և չկազմակերպվածների պրոլետի նշանակութունն արգելիտապում տնքավարար գիտակցելու մեջ: Այդ խոշորագույն թերութունը հաղթանարել և վերացնել նախարարել է միայն ներկայի այդ կարևորագույն

հարցում աջերի ու հաշտվողականների դեմ պայքարը կենտրոնացնելու և ուժեղացնելու միջոցով:

5. Արհմիությունները յեվ Փարգործարկուները

1. Բանվորական մասսաների ձախացումը և նրանց ակտիվութեան բարձրացումը, դասակարգային կոնֆլիկտների աճումն ու սրումը և կոմկուսակցութունների ազդեցութեան ուժեղացումը բանվորական մասսաներում նախադրյալ ստեղծեցին ռեֆորմիստների ձեռքից Փարգործարկուները զրավելու մասին կոմիտեներն ի հիմնական վճիռները հաջող կենսագործելու համար (և Փարգործարկուներ ստեղծելու այնտեղ, վորտեղ նրանք չկան) և այդ Փարգործարկուները դասակարգային գործակցութեան որդաններից, ինչպես նրանց դարձնում էլին ձեռնարկատերերն ու սոց. խմպերի լիստական արհմբյուրոկրատիան, վերածելու դասակարգային պայքարի որդանների:

2. Փարգործարկուները կարող են և պետք է լինեն դասակարգային միասնականության բնական բազաներից—ձեռնարկութեան մեջ:

Պայքարի կոմիտեներից Փարգործարկուները տարբերվում են նրանով, վոր նրանք հանդիսանում են են վսչ թե ժամանակավոր, այլ մշտապես գործող որդաններ: Նրանք չեն փոխարինում արհմիութուններին և չեն կարող փոխարինվել նրանցով (քանի դեռ բացակայում է արհմիութունների կազմակերպութունն արտադրական սկզբունքով): Փարգործարկուների (կամ Փարբիկա-գործարանային պատվիրակութունների) նվաճումը կոմկուսակցութունների և հեղա-

փոխական արհշարժման համար կարևորագույն ուղի-
ներից մեկն է դեպի գլխավորագույն արդյունաբերա-
կան ուսյոնները և արտագրութչան ճյուղերը: Դասա-
կարգային պայքարի արտակարգ սրման արդի ետա-
պում գործարկոմների նվաճման հարցը— դա «դասա-
կարգը դասակարգի դեմ» տակտիկան անցկացնելու
հարցն է տնմիջականորեն ձեռնարկութչան մեջ, մաս-
սաների ռազմավորման հարցը՝ տնտեսական կոնիլների
հետագա ծավալման համար: Փարզործարկոմները պիտի
դառնան մասսաների ռազմավորման և արհմիութե-
նական բյուրոկրատիայի դեմ մղվող պայքարի լծակը
ձեռնարկութչուններում: Մեր տակտիկայի կարևորա-
գույն գիծը մասսաների ամենալայն ռազմավորումն է
Փարզործարկոմների վերընտրութչունն անցկացնելիս:
Այդ վերընտրութչունների մեջ (վորոնք վերջին տա-
րին տեղի եյին ունենում հսկողութչան տակ և կազ-
մակերպվում եյին ռեֆորմիստական արհմիութչուննե-
րի կողմից) պիտի ներգրավվեն, ինչպես և պայքարի
կոմիտեների ընտրութչունների ժամանակ, ամբողջ
գործարանային մասսան—ինչպես կազմակերպված,
նույնպես և չկազմակերպված բանվորները և բանվո-
րուհիները: Այստեղից տակտիկական չեզրակացու-
թչունն է—վճռական հրաժարումն ռեֆորմիստների
հետ ընտրական վոր և է կոմիիցացիա կատարելուց և
առաջադրումն ինֆնուրույն ցուցակներ հակառակ ռեֆոր-
միստական արմիութչունների կողմից սահմանված
բոլոր կանոնների: Ընտրական պայքարի ընթացքում
պետք է ստեղծվեն ժամանակավոր մասսայական կազ-
մակերպութչուններ, վորոնք առաջ են քաշվում ընդհա-
նուր գործարանային ժողովների կողմից (ընտրական
հանձնաժողովներ):

3. Կոմունիստների հաջողութչունները դերմանական
Փարզործարկոմների վերընտրութչունների ժամանակ
չերևան են հանում բանվորների ահագին դժգոհու-
թչունն այն քաղաքականութչան դեմ, վոր անց է կաց-
վում Փարզործարկոմների կողմից, վորոնք ռեֆորմիս-
տական արհմիութենական ապարատի ձեռքում վերած-
վել են դասակարգային գործակցութչան որդանների,
այնպիսի որդանների, վորոնք կենսագործում են «խա-
ղաղութչունն արդյունաբերութչան մեջ» և «տնտեսա-
կան դեմոկրատիա»: Նվաճելով Փարզործարկոմները,
հեղափոխական ոպողիցիան ստեղծում է հնարավո-
րութչուն՝ լեգալ շրջանակները կտրելով՝ Փարզործար-
կոմները վերածելու այնպիսի որդանների, վորոնք
վերցնում են իրենց վրա պրոլետարիատի առույա
տնտեսական շահերի համար մղվող պայքարի խնդիրը,
և ձեռնարկութչուններում մղում քաղաքական պայքար
(պայքար պատերաղմի դեմ, պայքար Փաշիզմի դեմ
ձեռնարկութչան մեջ, կազմակերպումն պրոլետարական
ինքնապաշտպանութչան շոկատների և այլն): Հեղա-
փոխական Փարզործարկոմները, չերկու ձեի պայքարի
անշեղ գուղակցութչան դեպքում—քաղաքական և տըն-
տեսական—որինակ են դառնում մնացած Փարզործար-
կոմների համար, վորտեղ կա կոմունիստների ազդե-
ցութչուն, և Փարզործարկոմների համախմբման կենսա-
րոնն ազդային մասշտաբով: Այդ նպատակներով հեղա-
փոխական Փարզործարկոմներն իրար հետ կապվում են
խորհրդակցութչունների և կոնֆերենցիաների միջոցով
ըստ ուսյոնների և արտագրութչունների:

4. Գերմանական Փարզործարկոմների վերընտրու-
թչունների դասերը խոսում են այն մասին, վոր հե-

դափոխական ուղղիցիան ունեցել է ամենամեծ հաջողութիւնները, ինչպէս և գործադուլային պայքարում, այնտեղ, վորտեղ վնասական կերպով անց եր կացվում ենր քակիկա: Իսկ այնտեղ, վորտեղ կոմունիստներն ու հեղափոխական ուղղիցիան հանդես ելին գալիս ռեֆորմիստների հետ կռաւիցիոն ցուցակներով, մասսաների անտարբերութիւնն առավելագուցնն եր, և նշանակալից կերպով քրիստոնեական և հիրշ-դուենկերական արհմիութիւններն ստանում ելին ձայների համեմատաբար ավելի մեծ քանակ: Դա վկայում է այդպիսի դեպքերում կոմունիստների և հեղափոխական ուղղիցիայի տակտիկայի հանդեպ մասսաների ունեցած անվստահութիւնն մասին: Այստեղ նուցնպես, ինչպէս և պայքարի կոմիտեաների զարգացման մեջ, Ֆարգործարկոմները հեղափոխականացումն արգելակվում է կոմիտեաների սեկցիաների և հեղափոխական արհ-ուղղիցիայի՝ մասսաների ակտիվութիւնն աճումից հետմնալու հանգամանքով: Այստեղ նորից արտաճայովեցին լեզակիստական դիրքավորումը և ուղղորտունիստական վախը վտարուեններից: Յերբ տեակաւն նախապատրաստումից հետո հարկավոր եր սկզբունքային դրութիւններից հանել գործնական լեզրակացութիւններ, կոմունիստական արհմիութեանական ակտիվի մի մասի մեջ սկսվեցին տարակուսանքներ և տատանումներ: Այստեղ դրսևորվում եր նուցնպես այն հանգամանքը, վոր արհմիութեանական վերնաշերտի մետ մի շարք տարիների ընթացքում վարած բանակցութիւնների և դիվանագիտութիւնն սահմանված տրադիցիայի պատճառով, բացակայում է իսկական մասսայական աշխատանքի սովորքը: Դա կապված է և հեղափոխական ո-

ւղղիցիայի մասսաներում ունեցած ազդեցութիւնն թերագնահատման հետ: Հաճախ վարում ելին նախնական առևտուր, և հետո միայն առաջադրում ինքնուրուցն ցուցակ, փոխանակ թեկնածուական ցուցակները կազմելու. ամբողջ գործարանական մասսայի դեմոկրատական քվեարկութիւնն հիման վրա:

5. Սակայն մասսաների ռազմավորումը վերընտրութիւնների ժամանակ—միայն աշխատանքի կեսն է: Մոտակա հոտապում Գերմանիայում կարևորագուցն խնդիրը—դա Ֆարգործարկոմների հեղափոխական անդամների դաստիարակութիւնն է և Ֆարգործարկոմները իսկական դասակարգային պայքարի որդանների վերածելու աշխատանքը: Կոմունիստների հաջողութիւնները Ֆարգործարկոմների վերընտրութիւններին նշանակում են մասսաների ինքնագիտակցութիւնն աճումն և ըմբռնումն այն անհրաժեշտութիւնն, վոր պետք է կառուցել հենց իրենց բանվորների կողմից մարտական ղեկավարութիւնն որդաններ ներքեից: Հեղափոխական արհմիութիւնների (Ֆրանսիա, Չեխո-Սլովակիա և այլն) անդամների մասսայի հետ սերտ կապ պահպանելու համար, ինչպէս և հեղափոխական ուղղիցիայի (Գերմանիա և ուրիշները) շարկապը ձեռնարկութիւնն բոլոր բանվորների հետ հաստատ պահելու համար անհրաժեշտ է վերցնել նախաձեռնութիւնն՝ ստեղծելու լուրաքանչլուր ձեռնարկութիւնն մեջ լիագործներ ինտախուտ, վորոնք ընտրվում են բոլոր ցեխերի բանվորների կողմից: Այդ հեղափոխական լիագործները պետք է աջակցեն Ֆարգործարկոմների աշխուժացման և քաղաքականացման, ինչպէս նաև Ֆարգործարկոմներ ստեղծեն այնտեղ, վորտեղ նրանք չկան

տակավին: Հեղափոխական ոպոզիցիայի և հեղափոխական Ֆարգործարկոմիտեի ծրագրերը պետք է հիմնվի դասակարգային պայքարի կոնկրետ լոզունգների վրա՝ պրոլետարիատի կենսական պայմանները բարելավելու նպատակով վնասակար պայքար կազմակերպելու համար, պայքար կապիտալիստական ռացիոնալացման դեմ, հարկադիր արբիտրաժի և ձեռնարկատիրական սերտորի դեմ. պայքար գործադուլների և կոալիցիաների ազատութան համար. պայքար միասնական արհմիությունների համար, վորոնք վարում են հեղափոխական-դասակարգային պայքարը և կառուցված են արտադրական բազայի վրա. պայքար ապահովելու համար բանվորական դեմոկրատիան արհմիություններում և ձեռնարկության մյուս կազմակերպությունների մեջ. պայքար հեղափոխականներին արհմիություններից վտարելու դեմ: Հեղափոխական ոպոզիցիայի կողմից նվաճված Ֆարգործարկոմիտեի քաղաքականությունը, վորպես պրոլետարիատի մարտական ուժերը հավաքող որգաններ, վորոնք իրոք պաշտպանում են բանվոր դասակարգի շահերը, պետք է հարկադրվի սեփոքմիտական արհմիությունների քաղաքականության: Հեղափոխական ոպոզիցիան պետք է վճռականապես արմատախիլ անի Ֆարգործարկոմիտեի մեջ սոցիալ-դեմոկրատական ավանդությունները և պայքարի Ֆարգործարկոմիտեի սեփոքմիտական արհմիություններին լենինարկելու ամեն մի փորձի դեմ:

6. Կերմանական Ֆարգործարկոմիտեի այդ փորձը պետք է ըստ հնարավորության ավելի շուտ փոխադրվի այն լեռերները, վորտեղ գոյություն ունեն գերմանական կոմիտեիներին համահման Ֆարքիկա-գործարտ-

նային կոմիտեիներ (Ավստրիա, Չեխո-Սլովակիա): Իսկ այնտեղ, վորտեղ չկան նման Ֆարգործարկոմիտեի, անհրաժեշտ է ուժեղացնել հայտարարական կարգով գործարանային ներկայացուցչություն ստեղծելու աշխատանքը: Տնտեսական կոնֆլիկտները, բանվորների շահագործման խոշոր լեռերությունները, վորոնք առաջ են բերում մասսայական հուզմունք (մասսայական դժբախտ դեպքեր և այլն), ստեղծում են բարենպաստ նախադրյալներ Ֆարգործարկոմիտեի կազմակերպման համար: Մանավանդ տնտեսական կոնֆլիկտների ժամանակ կազմակերպվող շարժման դեկավորության որգանները (գործադուլային կոմիտեիներ, հակալուրատային կոմիտեիներ և ուրիշ.) կարելի չէ վերածել և ծավալել հեղափոխական գործարանային ներկայացուցչությունների (գործարանային կոմիտեիներ, լիազորներ և այլն) իրենց հատուկ ֆունկցիաներով: Հեղափոխական արհմիությունների նախաձեռնությամբ Ֆարգործարկոմիտեի ստեղծելու ժամանակ (Ֆրանսիա) հարկավոր է ամենավճռական հակահարված տալ այն ոպորտունիստական տենդենցներին, վորոնց համաձայն Ֆարգործարկոմիտեի ղեկավարում են, վորպես ինչ վոր պարլամենտական ներկայացուցչություն, վորը, իբր թե, պետք է «ձեռնարկատերերի առաջ պաշտպանե բանվորների շահերը» (կրոզելի թեորիան Ֆրանսիական կոմիտեականության համագումարում): Հարկավոր է ամենավճռական հակահարված տալ մեր շարքերում գտնվող այն ոպորտունիստներին, վորոնք կարծում են, թե «Ֆարգործարկոմիտեի չունեն քաղաքական խնդիրներ, այլ միայն այն, ինչ վոր կարգավորված է պետության կողմից»: Դա «տնտեսական դեմոկրատի-

ան» պատվաստելու ուղղակի մի փորձ է: Միևնույն ժամանակ Փաբգործարկոմների անմիջական կազմակերպումից ծանրության կենտրոնը անմիջականորեն հեղափոխական դարաշրջանում (Տոմազի) Փաբգործարկոմների դերին նվիրված խոսակցության վրա փոխադրելը հանդիսանում է արատալիտ-սինդրիկալիստական մտածողության մնացորդ: Այնպիսի չեղերի համար, ինչպես Փրանսիան է, հարցն այժմ այն է, թե ինչպիսի կերպ պետք է ունենան Փաբգործարկոմները հեղափոխական կոիմների ժամանակ, այլ այն, թե ինչպես կարելի չի նրանց ավելի արագ յեվ լավ կազմակերպել պայքարի պրոցեսում: Իրա համար չպիտի սպասել վոչ հատուկ թուլություն, վոչ էլ ձեռնարկատերերի և բուրժուական պետություն կողմից Փաբգործարկոմների «ճանաչման»: Տնտեսական կոիմների աճող ալիքը Փաբգործարկոմների կազմակերպման համար ստեղծում է առանձնապես բարենաջող պայմաններ:

6. Ի՞նչ պայմաններում է անհրաժեշտ նոր արհմիությունների ստեղծումը

1. Արհմիութենական ռեֆորմիզմի նոր բնույթը, արհմիութենական ռեֆորմիստական ապարատի բացահայտ միաձուլումը բուրժուական պետության՝ նորից սուր ակտուալ դարձրին ռեֆորմիստական արհմիությունների ներսում մեր կիրառելիք տակտիկայի հարցը: ԿիԳԿ-ի X պլենումը մի անգամ ևս հաստատում է, վոր սոցիալ-ֆաշիստական արհմիութենական բյուրոկրատիայի կողմից անցկացվող արհշարժման

պառակտողական քաղաքականությունը (ռեֆորմիստական արհմիություններից կոմունիստներին և հեղափոխական ուղղիցիայի անդամներին վտարելը, ռեվերսներ և այլն) վոչ մի դեպքում չպիտի տանի ղեկի արհմիութենական մասսաները նվաճելու աշխատանքի թուլացումը, տուժել ևս չպետք է մեզ ներշնչի այն գաղափարը, թե հարկավոր է կոչ անել բանվորներին դուրս գալու ռեֆորմիստական արհմիություններից, այդ աշխատանքը պետք է էլ ավելի ուժեղացվի: «Վորպեսզի կարողանանք մասսային ոգնել և նվաճել նրա համակրանքը, նվիրվածությունը, սատարությունը, չպետք է վախենանք դժվարություններից, «առաջնորդների» բժախնդրությունից, «վոտներ տալուց» (ПОДНОЖКИ), վիրավորանքներից, հալածանքներից (այն առաջնորդների, վորոնք ուղորտյունիստներ և սոցիալ-շովինիստներ լինելով, մեծ մասամբ ուղղակի կամ անուղղակի կապված են բուրժուազիայի և վոստիկանություն հետ) և անպատճառ աշխատանք տանել այնտեղ, վորտեղ կան մասսաներ»: (Լենին, «Ձախություն» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ», «Հարկավոր է արդյոք հեղափոխականներին աշխատել ռեակցիոն արհմիություններում» դրուխը):

2. Բանվորական շարժման աճող վերելքը և ռեֆորմիստական արհմիություններում աճող կրիզիսը առաջացրել են ռեֆորմիստական արհմիությունների մեջ աշխատելուց հրաժարվելու վտանգավոր տենդենցներ: Միևնույն ժամանակ բանվորական շարժման այդ անուստ առաջացրել է հաշտի ետսպներում վորոշ պայմանների առկայությունը ղեկավարում հեղափոխական նոր արհմիությունների ստեղծման պրոբլեմը:

3. Առաջին տենդենցների հիմքն է չկազմակերպվածների պրոբլեմի սխալ ըմբռնումը, արհմիություններից պայքարի կոմիտեների հետ շփոթելը, արհմիութենական մասսային շրջելու (նոր արհմիություններին անցնելու համար կազմակերպության «անցնողական» ձևերի արհեստական ստեղծումը) միջոցով արհմիությունները նվաճելու հնարավորության թերադնատատությունը: Այդ տենդենցներն ուղղակի հակասում են կոմիտեներնի կողմից բազմիցս ընդունված՝ արհմիությունների բանվորական մասսաներին նվաճելու վճիռներին: Ռեֆորմիստների կողմից ուժեղացված պրովոկացիան, վոր նպատակ ունի արհշարժման պառակտումը, արտահայտվում է կոմունիստներին ու հեղափոխական ոպողիցիայի անդամներին վտարելում, չի կարող առիթ ծառայել վերանայելու ռեֆորմիստական արհմիությունների ներսում կատարելիք աշխատանքներին վերաբերող վճիռներն այն չերկրներին նկատմամբ, վերտեղ չկան ինքնուրույն հեղափոխական արհմիություններ և չի կարող արդարացնել արհմիութենական մասսաներին նվաճելու աշխատանքի թուլացման կուրսը և նոր արհմիությունների արհեստական կազմակերպումը: Արդի ժամանակաշրջանը կոմիտեներնի առաջ դնում է վոչ թե ռեֆորմիստական արհմիություններից դուրս գալու քաղաքականություն կամ նոր հեղափոխական արհմիությունների արհեստական ստեղծումն, այլ պայտա բանվոր դասակարգի մեջ մեծամասնություն նվանելու համար, ինչպես ռեֆորմիստական արհմիություններում, նույնպես և այն կազմակերպությունների մեջ, վորոնք հենվում են ավելի լայն մասսաների վրա (պայքարի կոմիտեներ,

Փաբգործարկոմներ), վորոնք հեղափոխական արհշարժման հետ միասին հետապնդում են նույնատեսակ նպատակներ, բաց ղեպի այդ խնդրի կենսագործում գնում են իրենց առանձնահատուկ ուղիներով:

4. Միևնույն ժամանակ զլաստկար և ոպորտունիստական ցնորք կլիներ կարծել, վոր մենք կարող ենք ներկա պայմաններում տիրանալ ռեֆորմիստական արհմիութենական ապարատին—նույնիսկ չեթե մեր կողմը լինի արհմիութենական մասսան: Սակայն այդ չերբեք չի նշանակում, թե կոմունիստները և հեղաչերբեք չի նշանակում, թե կոմունիստները և հեղափոխական ոպողիցիան պատիվ են արհմիութենական ղեկավարության ընտրություններին: Ընդհակառակն, արհմիություններից բոլոր բյուրոկրատներին ու կապիտալիստներին գործակալներին վտարելու համար մղվող պայքարը, արհմիության չուրաքանչյուր ընտրովի պաշտոնի համար մղվող պայքարը, մանավանդ ստորին արհիլագորների համար մղվող պայքարը պետք է ծառայեմեր ձեռքին սոց.ֆաշիստական արհբյուրոկրատիայի դերը մերկացնելու և նրա ղեմ պայքարելու մի հզոր զինք:

5. Իրա հետ է կապված պայքարն ընդդեմ սոցիալֆաշիստական արհմիութենական բյուրոկրատիայի պառակտողական քաղաքականության: Վտարումների և ուրիշ պառակտողական ձեռնարկումների դեմ մղվող այդ պայքարը պետք է հանդիսանա արդյունաբերական խաղաղության ռեֆորմիստական քաղաքականության դեմ ուղղված պայքար՝ հանուն միասնականության՝ դասակարգային կովի հիման վրա, հանուն պրոլետարական դեմոկրատիայի՝ արհմիություններին մեջ: Ռեֆորմիստական ղեկավարության պառակտո-

դական գործունեությունը նպատակ ունի բանվորա-
կան մասսաների կազմակերպված ուժի թուլացումը,
նրանց տնտեսական և քաղաքական պահանջների հա-
մար մղվող պայքարում և կոմունիստներին ու հեղա-
փոխական ոպոզիցիայի կղզիացումը կազմակերպված
բանվորական մասսայից: Այդ պատճառով կարևորա-
գույն խնդիրներից մեկը հանդիսանում է բանվորա-
կան լայն մասսաների ռազմավորումը սոցիալ-ֆաշիս-
տական արհրյուրոկրատիայի պառակտողական գոր-
ծունեություն դեմ: Միաժամանակ անհրաժեշտ է վճառ-
կան պայքար մղել անձնատուր լինելու ամեն մի
տրամադրություն դեմ (капитулянтство): Անձնատու-
թյունը արհրյուրոկրատիայի առաջ՝ կնշանակեր վոչ
միայն հեղափոխական ոպոզիցիայի վարկաբեկումն,
այլ և ջախջախումն: Արհմիութենական ամբողջ կազ-
մակերպությունների վտարմանն անհրաժեշտ է պա-
տասխանել աշխատանքի ախտիվ շարունակմամբ և
այդ կազմակերպություններն ուժեղացնելով, միաժա-
մանակ պայքարել, վոր նրանց նորից հետ ընդունեն
արհմիության մեջ՝ դասակարգային պայքարի սկզբ-
բունքով ստեղծվող միասնականության լուրջագի տակ:
Այդ վտարված արհմիութենական կազմակերպություն-
ները չեն կարող ծառայել ուրիշ արհմիութենական
կազմակերպություններից վտարված բանվորների հա-
մար հավաքատեղի: Հեղափոխական բանվորների չե-
զակի վտարումների դեպքում պետք է գործադրել
բոլոր ուժերը ռեֆորմիստների պառակտողական քա-
ղաքականության դեմ մղվող պայքարում մասսաներին
ռազմավորելու համար: Վտարված բանվորներին հեա
ընդունելու համար մղվող պայքարը պետք է տեղի

ունենա դեռ ռեֆորմիստների ազդեցության տակ
գտնվող բանվորներին հեղափոխական ոպոզիցիայի
համար նվաճելու լուրջագի տակ: Արհրյուրոկրա-
տիայի պառակտողական քաղաքականության դեմ մղ-
վող պայքարը պետք է անցկացվի այդ չեղկներում
վոչ թե վտարված կոմունիստներից յեվ հեղափոխական
ոպոզիցիայի անդամներից ևոր արհմիություններ կազ-
մակերպելու միջոցով, այլ պրոլետարական դիկտատուրա-
յի համար արհմիություններում պայքարն ուժեղացնելու
միջոցով՝ բնդդեմ ռեֆորմիզմի, ռեֆորմիստական արհ-
րյուրոկրատիային հեռացնելու համար: Ռեֆորմիստական
արհմիութենական ապարատի միաձուլումը բուրժու-
ական պետական ապարատին՝ մի կողմից—կոմկուսակ-
ցությունների ազդեցության տճումը բանվորական
մասսաներում և մասսայական ռեֆորմիստական արհ-
միություններում՝ մյուս կողմից—վոչ միայն ընդլայ-
նում են ռեֆորմիստական դիկտատուրայի դեմ պայ-
քարի հնարավորությունները, այլ և նույնպես ան-
հրաժեշտ են դարձնում մասսաների ռազմավորումը
արհմիութենական կանոնադրությունները վոչնչաց-
նելու ռեֆորմիստական արհմիությունների լեզալիզմից
հրաժարվելու համար:

6. Հեղափոխական ոպոզիցիան չի կարող թույլ տալ
ռեֆորմիստական արհմիություններից ավելի ու ավե-
լի մեծ զանգվածներով վտարվող հեղափոխական ոպո-
զիցիայի անդամների փոժխացումը: Այդ պատճառով
անհրաժեշտ է, վոր հեղափոխական ոպոզիցիան ամե-
նապատիվ կապ պահպանի արհմիություններից վտար-
ված ոպոզիցիայի բոլոր անդամներին հետ: Սակայն դա
չպիտի ծառայի նոր կազմակերպություններ ստեղծե-

լու առիթ (որինակ, վտարվածներից հատուկ անդամավճարներ գանձելու և հատուկ անդամակցական գըրքուկներ տալու միջոցով), վորոնք կարողանային ծառայել նոր արհմիություններին անցնելու արհեստական «անցողական ձևեր»:

7. Սակայն կոմունիստները չեն կարող սկզբունքով հակառակ լինել արհմիությունների պառակտման: Կոմիստերնի II կոնգրեսի բանաձևը նշել է պայմաններ, վորոնց դեպքում կոմունիստները պետք է պառակտման ճանապարհը բռնեն, այն է՝ «կոմունիստները չպետք է... կանգ առնեն արհկազմակերպությունների պառակտման առաջ, չեթե պառակտումից հրաժարվելը նշանակեր հրաժարումն արհմիություններում հեղափոխական աշխատանք կատարելուց, հրաժարումն պրոլետարիատի ամենակեղքվող մասի կազմակերպումից»: Գործադուլային շարժման աճումը Կոմիստերնի VI կոնգրեսի ժամանակից սկսած և սոցիալ-ֆաշիստական արհմիութենական բյուրոկրատիայի կոտորակի պայքարը, չերը այդ բյուրոկրատիան կիրառում է ամբողջ կազմակերպություններ (ADGB)¹ ցրելու և վտարելու մեթոդները և արհեստականորեն նեղացնում և ցեխային արգելանքների միջոցով արհմիութենապես կազմակերպված պրոլետարիատի շրջագիծը (ամենավառ որինակը — Աշխատանքի Ամերիկական Ֆեդերացիան է), նրա բացահայտ շարեչկերիսերությունը մի շարք չերկրներում ստեղծել են այնպիսի պայմաններ, վորոնց ժամանակ առանձին դեպքերում անհրաժեշտ եր ստեղծել նոր հեղափոխական արհեստակցական միություններ: ԿԻԳԿ-ի IX պլենումը և Կոմիստերնի VI

¹ Գերմանիայի Արհմիությունների Ընդհանուր Միավորություն:

կոնգրեսը ամերիկական կոմկուսակցության համար նշել են նոր արհեստակցական միությունների ստեղծումն, առաջին հերթին արտադրություն այն ճյուղերում, վորտեղ առհասարակ բացակայում է արհմիութենական կազմակերպություն, իսկ հետո և այն դեպքերում, չերբ բանվորների հեղափոխական չելույթի հետևանքով, շնորհիվ արհմիութենական բյուրոկրատիայի դավաճանություն, բանվորները մասսաներով թողել են միությունները, և տեղի չե ունեցել արհեստակցական շարժման ջախջախումն: Կուսակցությունը սկսել է այդ աշխատանքը, և նա պետք է անցկացնե այն ամենամեծ չեռանդով, ներգրավելով նոր միությունների մեջ Միաց. Նահանգների ահագին չկազմակերպված մասսաները: Նույնպես չեղավ և Անգլիայում, վորտեղ ստեղծված են կար անոդների նոր միությունը և հանքագործների շոտլանդական նոր միությունը: Այդպես չեղավ և Լեհաստանում, վորտեղ մասսայական գործադուլային շարժման և ՊՊՄ-ի պառակտման բազայի վրա անհրաժեշտ եր դնել մանածագործների նոր միասնական միություն ստեղծելու հարցը՝ հեղափոխական դասակարգային պայքարի հիմունքով (Լոճում) և հարցը դրված է հանքագործների մոտ (Իոմբրովսկու շրջանում): Այդպես չեղավ և Մեքսիկայում, վորտեղ բանվորական մասսաների արմատականացման և КРОМ-ի ուսուցիչները վերասերման բազայի վրա ստեղծվեց աշխատանքի նոր հեղափոխական ունիտար կոնֆեդերացիա, վորի մեջ մտնում են շուրջ 100,000 մարդ:

8. Սակայն կոմունիստները պետք է հասկանան, վոր արհեստակցական միությունների պառակտումը

մեխանիկորեն նոր արհմիություններ կազմվելու հարց
չե: Պետք է վճռականորեն պայքարել արհեստակցա-
կան միությունների մեջ անպատճառ պառակտում
մտցնելու դիրքավորման դեմ: Նոր արհմիությունների
ստեղծումը հնարավոր է միայն գործադուլային ալի-
քի վերելքի դեպքում, միայն այնտեղ, վորտեղ քաղա-
քական պայքարն ստացել է մեծ սրություն, վորտեղ
պրոլետարիատի նշանավոր մասսաներն արդեն հաս-
կացել են ռեֆորմիստական արհմիութենական բյու-
րոկրատիայի սոց.-ֆաշիստական ելուժյունը և չերբ
այդ մասսաներն ակտիվորեն սատարում են նոր միու-
թյան ստեղծմանը: Սակայն այս բոլոր պայմանների
առկայութեան դեպքում էլ նոր արհմիությունների
ստեղծումն այն չերկրներում, վորտեղ մինչև այժմ
բացակայել է ինքնուրույն հեղափոխական արհշար-
ժում (որ., Գերմանիայում), պետք է անցկացնել մի-
այն հարկ չեղած դեպքում, լավ կշռադատելով ամբողջ
օրջեկտիվ իրադրությունը:

7. Անլեզալ արհեստում ունեցող յերկրներում կասարելիք աշխատանքի մասին

Դասակարգային պայքարի աճող սրումը հրում է
տիրապետող դասակարգերին ձեռք առնելու սուր-ռեպու-
րեսիվ միջոցներ՝ ճնշելու և ջախջախելու համար հե-
ղափոխական արհմիությունները: Այնտեղ, վորտեղ
հեղափոխական արհմիությունները դեռ բացահայտ
կերպով գոյություն ունեն (Ֆրանսիա, Չեխո-Սլովա-
կիա և այլն), նրանք կանգնած են արձակման սպառ-
նալիքի տակ: Այդպիսի իրադրության մեջ հիմնական

խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի բացահայտ
կերպով գոյություն ունեցող կազմակերպությունները
չբռնեն ընդհատակյա պայմանների մեջ: Այն չերկրնե-
րում, վորտեղ բուրժուազիային սոց.-ֆաշիստների հետ
միասին հաջողվել է արհմիությունները քշել ընդհա-
տակյա պայմանների մեջ (Իտալիա, Հարավ-Սլովիա
և այլն), վորտեղ հեղափոխական արհմիությունները
շարունակում են աշխատել անլեզալ, այնտեղ կարևո-
րագույն խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի
ամբացվեն անլեզալ արհմիությունները, ներգրավելով
նրանց մեջ անկուսակցական բանվորների առավելա-
գույն քանակը և ծովալելով նրանց աշխատանքը ա-
ճող գործադուլային ալիքի հիման վրա: Պետք է ան-
խնա պայքար մղել անձնատուր լինելու տրամագրու-
թյունների և լիկվիդատորական ամեն մի տեղեկացի
դեմ, անլեզալ արհմիությունների աշխատանքը սահ-
մանափակելու միտումի դեմ, վորպիսի միտումի հիմքն
այն պատրվակն է, թե իբր անլեզալ արհմիություն-
ների գոյությունն առհասարակ հնարավոր չե:

Անլեզալ արհշարժում ունեցող չերկրների համար
հատուկ նշանակություն ունի պայքարի լայն կոմիտե-
ների ստեղծումը՝ տնտեսական կոմիտեները ղեկավարե-
լու համար: Այդ պայքարի կոմիտեները կարող են
հանդիսանալ վոստիկանական ֆաշիստական արգե-
լուսների ամբողջ սխտեմը ձեղքելու և անլեզալ արհ-
միությունների համար բացահայտ գոյության ասպա-
րեզ դուրս գալու ամենալավ միջոցը: Ընդհատակյա
պայմաններից դուրս գալու և ազատ գոյություն ու-
նենալու համար մղվող պայքարը, մի պայքար, վորը
պետք է լինի հեղափոխական արհմիությունների ու-

շագրութեան կենտրոնում, կարող ե հաջող լինել մի-
այն այն դեպքում, յեթե անլեզալ արհմիությունները
շողկապեն այդ պայքարը բանվորների առօրյա կա-
րիքների համար մղվող պայքարի հետ և տնտեսական
կռիվների փաստական ղեկավարութեան հետ:

Անլեզալ արհմիությունների ամրացման, գործադու-
լային շարժման հեղափոխական ղեկավարութեան և
ընդհատակյա պայմաններից բացահայտ գոյութեան
ասպարեզը դուրս գալու նախադրյալը հանդիսանում
է համառ սիստեմատիկ աշխատանքի ձեռնարկուրյունե-
րում գործարանային կուսակցական բջիջներ սեղծելու
յեվ ամբողջ արհմիութեան մեջ ձեռնարկուրյունների բա-
զայի վրա կառուցելու համար:

8. Փաղութային յեվ կիսափաղութային յեղերներում կատարելի աշխատանք

Վերջին տարին բնորոշվում է տնտեսական պայքա-
րի ահագին վերելքով բոլոր գաղութային ու կիսագա-
ղութային յերկրներում և հատկապես Հնդկաստանում:
Այդ գործադուլային ալիքը դիպել է նաև գաղութային
պրոլետարիատի ամենահետամնաց շրջատներին (Հա-
սարակաժային Աֆրիկա) և վկայում է այն մասին,
վոր բանվորական շարժման մեջ սկսված վերելքը հին
կապիտալիստական յերկրների ստանաններից շատ հե-
ռու յե դուրս գնացել: Վերջին գործադուլների հիմնա-
կան առանձնահատկությունները գաղութային և կի-
սագաղութային յերկրներում (Հնդկաստան, Չինաս-
տան, նույնպես և Ինդոնեզիան, Յեյլոնը, Բիրման,
Աֆրիկան և այլն) ցույց են տալիս, վոր նույնիսկ

այնտեղ, վորտեղ շարժումն առաջ է յեկել տարերայ-
նորեն, նա ունեցել է խորապես հեղափոխական
բնույթ: Իրանով ստեղծվում է բարենպաստ հող կոմ-
կուսակցությունների և հեղափոխական արհմիություն-
ների ամրապնդման ու զարգացման համար այն գա-
ղութային յերկրներում, վորտեղ նրանք դեռևս չկան:
Այդ յերկրների բոլոր հեղափոխական բանվորների և
կոմունիստների կարևորագույն խնդիրն է աշխատել
բոլոր տնտեսական կռիվներում բանվորների ղեկավա-
րությունը, մաքրելով գործադուլային ուղղաններն ազ-
գային-բուրժուական և սոցիալ-ոնֆորմիստական տար-
րերից և փոխադրելով բանվորների տնտեսական յե-
լույթները պայքարի ավելի բարձր աստիճանները:

Արհմիութենական կազմակերպությունների ձեռն աշ-
լագանությունը գաղութային և կիսագաղութային յեր-
կրներում պահանջում է այդ յերկրների կոմունիստ-
ներից և հեղափոխական բանվորներից մեծ ձկունու-
թյուն տնտեսական կռիվների ինքնուրույն ղեկավա-
րութեան գիծն անցկացնելիս, լայն մասսաների նվա-
ճում գործադուլային պայքարի ծավալման պրոցեսում
և բանվորների տնտեսական պայքարի սերտ շողկա-
պում պրոլետարիատի ընդհանուր դասակարգային
խնդիրների հետ: Այդ յերկրներում պայքարի կոմի-
տեների ստեղծումը պետք է ոգտագործվի հեղափո-
խական դասակարգային միություններ ստեղծելու հա-
մար այնտեղ, վորտեղ նրանք չկան, անլեզալ արհմի-
ությունների դուրս գալու համար ընդհատակյա պայ-
մաններից: Բոմբեյում Գիրնի Կամգար մասնագործ-
ների ձախ արհմիութեան փորձը հուշում է, թե ինչ-
պիսի ալագ և հաստատուն հաջողությունների կարող

են հասնել հեղափոխական տարրերը մասսայական ձախարհշարժման կազմակերպման մեջ՝ գործադուլային պայքարի ղեկավարման, կազմակերպութեան նոր ձևերի լայն կիրարկման (գործադուլային կոմիտեաներ) և ձեռնարկութուններում կատարվող աշխատանքի (Ֆաբգործարկումներ) հիման վրա:

Ամենանակարևորը— դա ինչպես անլեզալ, նույնպես և լեզալ հեղափոխական արհմիություններն ամրացնելն ու ծավալելն է: Անհրաժեշտ և բանվորական շարժման վերելքի հիման վրա ոգտագործել բոլոր և ամեն տեսակի հնարավորություններ, վորպեսզի անլեզալ արհմիությունները հաղթահարեն դեռ գոյություն ունեցող իրենց վորոշ մեկուսացումը լայն մասսաներից, հասնել մասսայական աշխատանքի ծավալման և պայքարել բացահայտ գոյության համար: Այնուհետև անհրաժեշտ է անխոնջ և սխտեմատիկ աշխատել բոլոր մասսայական ռեֆորմիստական և դեղին կազմակերպությունների մեջ, այդ կազմակերպություններում գտնվող բանվորներին հեղափոխական դասակարգային պայքարի կողմը նվաճելու նպատակով: Կոմկուսակցութեան խնդիրն է՝ գործադուլային պայքարի վերելքն ոգտագործել նրա համար, վորպեսզի պատռի բոլոր այն չերկաթալարե փակոցները, վորոնք ստեղծվել են իմպերիալիզմի և ազգային բուրժուազիայի կողմից դասակարգային արհմիությունների դեմ: Իմպերիալիստական չերկրների կոմկուսակցությունները պետք է ակտիվ և սխտեմատիկ ոգնություն ցույց տան գաղութային չերկրների գործադուլային շարժման, սրելով պայքարն իմպերիալիզմի դեմ և գաղութների անկախութեան համար՝ տնտեսական կռիվների աճման

հարակից: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Հնդկաստանի և Չինաստանի բանվորական շարժմանն ոգնություն ցույց տալու վրա, վորովհետև հեղափոխութեան հաղթանակն այդ չերկու չերկրում մահացու հարված կհասցնեն համաշխարհային իմպերիալիստական սխտեմին:

9. Կարելվորագույն գործնական խնդիրները

1. Ժամանակակից դասակարգային կոնֆլիկտների քաղաքական բնույթը (կոնֆլիկտներ, վորոնց մեջ ներգրավվում են միլիոնավոր բանվորներ և բանվորուհիներ) առանձին ստիպողականութեամբ կոմկուսակցությունների առաջ դնում է կոմիտեաների վորոշումների մեջ բազմիցս ընդգծված՝ տնտեսական կռիվների մեքալվորագույն ղեկավարման անհրաժեշտությունը՝ կուսակցական տեղական կազմակերպությունների կողմից: Կոմկուսակցություններն սկսել են արդեն ազատագրվել գործադուլների ղեկավարման հին մեթոդներից, այդ ղեկավարությունը կուսակցական արհրաժիներին և արհմիութեանական կոմֆրակցիաներին հանձնելու միջոցով: Սակայն այդ ուղղութեամբ պետք է արվեն դեռևս մի շարք վճռական քայլեր: Տնտեսական կռիվների ղեկավարումը բանվորական շարժման վերելքի համեմատ պետք է դառնա ամբողջ կուսակցութեան գործը, վորի վրա պետք է կենտրոնացնել մեր կուսակցութեան բոլոր ուժերը, և վորին պետք է հարմարեցվի ամբողջ կուսակցական կազմակերպությունը:

2. Վերջին տարվա գործադուլային կռիվների փորձը

ցուց տվեց, վոր կոմկուսակցութիւնների և հեղափոկան արհշարժման ամենաթուզլ կողմը—դա Կոմինտերնի VI կոնգրեսի և Պրոֆինտերնի IV կոնգրեսի վորոշումների վոչ բավականաչափ հետևողական կենսագործումն է: Այդ վորոշումների կենսագործումը տակավին մինչև այժմ կուսակցական շարքերում և, վոր առանձնապէս կարևոր է, ստորին կուսակցական և հեղափոխական արհմիութենական ակտիվում հանդիպում է դիմադրութիւն: Կոմկուսակցութիւնների և հեղափոխական արհշարժման առաջ դրված հիմնական խընդիրը կայանում է նրանում, վորպէսզի մի շարք գործնական միջոցներ ձեռք առնելով, ինչպէս ել վոր լինի, հասնեն այդ վորոշումների կենսագործման սեմպի առագացման: Պրոֆինտերնի IV կոնգրեսը միջազգային ամբողջ հեղափոխական արհշարժման համար դարձավ լուրջ բեկման սկիզբն: Կոմինտերնը և նրա սեկցիաները ամեն կերպ պետք է աջակցեն Պրոֆինտերնի ազդեցութեան ընդլայնման, ժողովրդականացնելով նրա վորոշումները և սիստեմատիկորեն ամրապնդելով Պրոֆինտերնը և նրան հարող կազմակերպութիւնները:

3. Այդ պատճառով կուսակցական աշխատանքի ծանրութեան կենտրոնը շատ ավելի, քան մինչև այժմ, պետք է կենտրոնացվի անմիջականորեն ձեռնարկութեան վեջ: Պայքարի կոմիտեները, հեղափոխական ֆարգործարկիցները և արտադրական միութիւնները— ահա թե ինչ է անհրաժեշտ պրոլետարիատին, վորպէսզի կազմակերպի իր շարքերը մասսայական կռիւների համար՝ կոմկուսակցութեան ղեկավարութեամբ: Այդ բոլոր հիմնական կազմակերպութիւններն իրենց համար բազիս պիտի ունենան ձեռնարկութիւնը: Ուստի կու-

սակցական բջիջների կազմակերպութիւնը ձեռնարկութիւններում և նրանց ամրապնդումն աչնտեղ, վորտեղ կան, ներկայումս ստանում է անհամեմատ ավելի մեծ նշանակութիւն, քան չերբեքեք առաջ, և դառնում է ամբողջ կուսակցական աշխատանքի գլխավոր ողակը:

4. Ընդդմին վճռողական նշանակութիւն է ստանում գործադուլային կռիւների ղեկավարների նոր կազմերի դաստիարակութիւնն ու թարմացումը: Արդեն չխոսելով այն մասին, վոր ոպորտունիստական տենդենցներն ու բուրժուարատիզմը ամենաբարենպաստ հող են գտել իրենց համար կոմկուսակցութիւնների արհմիութենական ակտիվում (ամենավառ որինակը այդ տեսակետից ներկայացնում է Չեխո-Սլովակիան), թերևս տնտեսական կռիւների ղեկավարման մեջ ամենալուրջ բեռւթյունը հանդիսացավ հեղափոխական արհմիութենական այն մասի նշանավոր խավերի կոնսերվատիզմը, վորը սեսականորեն, խոսքով, բնութեւել է ամբողջովին և լրիվ Կոմինտերնի նոր տակտիկան և վորոշումները, իսկ գործնականապէս անբնութեւել է դուրս չեկել իրականացնելու աչն: Մասնավորապէս ամենալուրջ ուշադրութիւն պետք է դարձվի արհմիութենական կոմֆրակցիաների ղեկավարող կազմի ստուգման վրա, վորպէսզի լիակատար չափով ապահովված լինի քաղաքական ճիշտ պիծը:

5. Աչնուհետև Կոմինտերնի և հեղափոխական ոպողիցիայի կարևորագուչն խնդիրը պետք է լինի ուժերի և ուշադրութեան համակենտրոնացումը արտադրութեան հիմնական ճյուղերի և ձեռնարկութիւնների վրա, վորոնք վճռողական դեր են խաղում դասակարգային կոնֆրիկտների ժամանակ:

6. Պետք է, ինչպես ելլինի, ավելի արագ վերացվեն ավելի ու ավելի սրությամբ ցցվող հակասութունները, վոր գոյութուն ունեն տնտեսական կոնֆլիկտներին բանվորուհիների ցույց տված այժմյան մասնակցութեան թափի և այն դեկավորութեան միջև, վորն իրագործվում է կոմկուսակցութունների ու հեղափոխական արհշարժման կողմից բանվորուհիների վերաբերմամբ: Ստորին կուսակցական կազմակերպութունները, ձեռնարկութունների բջիջները, ֆաբրիկա-գործարանային կոմիտեները, վորոնք գտնվում են կոմունիստների և հեղափոխական ուղղիցիայի ձեռքին, պետք է իրենց գործունեութեամբ ընդգրկեն բանվորուհիներին շատ ավելի լայն մասշտաբով, արտացոլելով և պաշտպանելով նրանց շահերը: Անհրաժեշտ է համարձակ և վճռականորեն առաջ քաշել տեղի և հեղափոխականորեն տրամադրված բանվորուհիներին դեկավար պաշտոնների համար, մանավանդ այն ձեռնարկութուններում, վորտեղ գերակշռող քանակը կանայք են: Անհրաժեշտ է վերջ տալ կոմկուսակցութուններում և հեղափոխական արհմիութուններում բանվորուհիների մեջ կատարելիք աշխատանքի թերազնահատութեանը:

7. Նույնն է և՛ բանվոր լեքիտասարդութեան նկատմամբ: Այն փաստը, վոր լեքիտասարդ բանվորների ճնշող մեծամասնութունը կազմակերպված չէ և ուֆորմիստական արհմիութունների կողմից գիտակցորեն անգիտացվում է, առաջ է բերում անհրաժեշտութեան անցկացնելու հատուկ պայքար լեքիտասարդութեան՝ արհմիութունների մեջ մտնելու համար հեղափոխական ուղղիցիայի ծրագրի հիմունքով: Այն

դեպքերում, չերբ արհմիութունները հրաժարվում են լեքիտասարդութունը կազմակերպելուց, կամ չերբ արհմիութուն առհասարակ չկա, պետք է ստեղծել լեքիտասարդ բանվորների տնտեսական հատուկ, միավորութուններ, վորոնք կրում են ժամանակավոր բնույթ և պայքարում են լեքիտասարդութեան պահանջների համար և նրա՝ արհմիութունների մեջ մտնելու համար: Հեղափոխական ուղղիցիայի ուժեղացման գործում մեծ նշանակութուն ունի արհմիութուններում լեքիտասարդութեան սեկցիաներ ստեղծելու համար և բանվոր լեքիտասարդութունը իրավունքներով չափահաս բանվորներին հավասարեցնելու համար մղվող պայքարը: Հեղափոխական արհմիութունները պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնեն այդպիսի պատանեկան սեկցիաներ ստեղծելու համար: Այստեղ ևս, ինչպես և կինբանվորուհիների նկատմամբ, պետք է համարձակ կերպով և վճռականորեն անցկացնել առաջադեմ գիծը:

8. Տնտեսական կոնֆլիկտներն անցկացնելը պահանջում է պրոլետարական ինքնապաշտպանութեան որդանների ստեղծում՝ գործարանային ժողովների կազմակերպման և պաշտպանութեան, գործադուլային պահակների պահպանութեան համար, շտրեյկերիստների և գործարանային ֆաշիզմի, ամեն տեսակ դեղին կազմակերպութունների դեմ պայքարելու համար:

2. Ռաջիոնայացման հետևանքով աճող գործազուրկութունը իր առաջին զոհերը կորցում է հեղափոխական ուղղիցիայի շարքերից: Արհելուրդրատիան շատ դեպքերում ոգտագործում է հեղափոխական ուղղիցիայի անդամների գործազուրկութունը, վորպեսզի նրանց թույլ չտա մասնակցելու արհմաշխատանք-

քին սեփորմիստական արհմիությունների ներսում: Հեղափոխական ոպոզիցիան պետք է բոլոր ուժերով պաշտպանի գործադուրկների իրավունքները արհմիությունների ներսում, նույնիսկ այն դեպքերում, չեբբ նրանք միավորվում են գործադուրկների կազմակերպության մեջ (Անգլիա) կամ վորես այլ ձևի միության մեջ (Ինչպես, օրինակ, Գերմանիայում) հեղափոխական տարրերի բացահայտ ղեկավարութիւմբ:

10. Անհրաժեշտ է շատ ավելի մեծ յեռանդով, քան մինչև այժմ, ռազմավորել մասսաները պայքարելու համար 7-ժամյա բանվորական որվա համար (և 6 ժամյա ստորերկրյա աշխատանքներում, ֆասակար արտադրութիւններում և անչափահասների համար մինչև 18 տարեկան), դարձնելով այն կենտրոնական լոզունգ կապիտալիստական ռացիոնալացման դեմ ուղղված պայքարի:

11. Կոմկուսակցութիւնների կենտրոնական կոմիտեները պետք է ուղարկեն հասունացող կոնֆլիկտների շրջանները ղեկավար աշխատավորներ, վորոնք մի կողմից, կտեղեկացնելին նրանց դրության մասին տեղում, իսկ մյուս կողմից, կոգնելին տեղական կազմակերպութիւններին ծավալելու առավելագուցն չափով արգասավոր նախապատրաստական աշխատանք:

Ամբողջ նախապատրաստական աշխատանքը պետք է կատարվի յոնպես, վորպեսզի նրա բազան լինի ձեռնարկութիւնը: Այդ տեսակետից պարտադիր են հետևյալ խնդիրները. ա) այդ ձեռնարկութիւնների կուսակցական բջիջների ամբացումը, բ) նրանց կողմից գործարանային լրագրերի հրատարակումը, գ) նախաձեռնող խմբերի ստեղծումն, վորոնք ներառնում են

առաջավոր անկուսակցականներին և ըստ հնարավորութիւնի ս. - դ. սինգրիկալիստ բանվորներին ու բանվորուհիներին և այլն, գործադուրկին կոմիտեների ընտրութիւնների նախապատրաստման համար: Ձեռնարկութիւններում գործադուրկին կոմիտեների ընտրութիւնների նախապատրաստութիւնը պետք է սկսվի անհապաղ, հենց վոր նկատվի օրջեկտիվորեն բարենպաստ իրադրութիւնի աճումն:

12. Կոմկուսակցութիւնների և հեղափոխական արհշարժման համար տնտեսական կռիվների հաջող ղեկավարման կարևորագուցն նախադրւալը հանդիսանում է համարձակ բալլըիկական ինֆեաֆեադասութիւնը և հեղափոխական նախաձեռնութիւնը, վոր անց է կացվում ցերեկից մինչեվ վերել: Անհրաժեշտ է առավելագուցն չափով ուժեղացնել հեղափոխական արհշարժման անդամներին, մանավանդ հեղափոխական արհակտիվի ինֆեադիստիկալ կրթութիւնը:

13. Ինչ վերաբերում է գործադուրկին պայքարի կազմակերպման գործնական մեթոդներին, ԿԻԳ.Կ.Ի X պլենումը հանձնարարում է բոլոր կոմկուսակցութիւններին ղեկավարվել այն վճիռներով, վորոնք մշակված են միջադգային գործադուրկին կոնֆերենցիայի կողմից Ստրասբուրգում:

ԽՊԳԲԲԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՐՈՋՄԻ ԴԵՄ ՈՐԳԱՆԻԲ ՄԻՋԱԳՈՍԵՒՆ ՈՐՎԱ ՄԵՄԵՆ

(Բանաձև ընկեր Բարբելի ղեկուցման աթիվ)

Ի կատարումն VI Համաշխարհային կոնգրեսի՝ ինպերիալիստական պատերազմի դեմ ուղղելիք միջադգային որվա կազմակերպմանը վերաբերող վորոշ

ման, ԿԻԳԿ-ի պլենումը հաստատում է 13 կոմունիստական կուսակցութունների Բրյուսսելում գումարված կոնֆերենցիայի վճիռը, այդ որը ոգոստոս 1-ը նշանակելու մասին և հավանութունն է տալիս ամբողջովին և լրիվ այն դիրեկտիվներին, վորոնք տրված են ԿԻԳԿ-ի քաղաքատնտեսության կողմից Կոմինտերնի եկցիաներին իմպերիալիստական պատերազմի դեմ ուղղելիք միջազգային որվա առթիվ:

Ներկա տարվա մայիսամեկյան ցույցերի մարտական բնույթը, հատկապես Բերլինի պրոլետարիատի հերոսական պայքարը բարեկադնների վրա մայիսի 1-ին՝ քաղաքական գործադուլի կիրարկմամբ, վորպես պայքարի գործիքի, Բոմբեյի պրոլետարիատի պայքարը Հնդկաստանում բարձրացող ազգային-հեղափոխական շարժման պայմաններում, բանվոր դասակարգի ավելի ու ավելի ծավալվող տնտեսական կոնֆլեքտը իմպերիալիստական պատերազմի և սեպտիայի դեմ ուղղված ոգոստոսի 1-ի միջազգային չեյուլթին տալիս են այնպիսի դեպքի նշանակութուն, վորը դուրս է գալիս բանվոր դասակարգի հակապատերազմական սովորական ցույցի շրջանակից:

Ոգոստոս 1-ի չեյուլթը պետք է ամենասերտ կերպով շարկապվի բանվոր դասակարգի ամբողջ տնտեսական և քաղաքական պայքարի հետ, կապիտալի, ֆաշիզմի և սոց.-ֆաշիստական սոց.-դեմոկրատիայի դեմ մղվող նրա հեղափոխական պայքարի հետ և այդ թվում Մակդոնալդի կառավարութւյան, պատերազմի և կապիտալիստական ռացիոնալացման կառավարութւյան դեմ մղվող պայքարի հետ: Այդ չեյուլթը պետք է դառնա հզոր միջոց կապիտալիզմի դեմ ուղղված՝

պրոլետարիատի հեղափոխական չեյուլթները միջազգային մասշտաբով միավորելու գործում: Հաշվի առնելով ոգոստոսի 1-ի հսկայական նշանակութունը իմպերիալիստական պատերազմի դեմ և ԽՍՀՄ-ի պաշտպանութւյան համար մղվող պայքարի գործում, ԿԻԳԿ-ի պլենումն առաջարկում է Կոմինտերնի բոլոր սեկցիաներին.

1. Ձեռք առնել բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցները, վորպեսզի միջազգային պրոլետարիատի ոգոստոսի 1-ի՝ իմպերիալիստական պատերազմի դեմ և ԽՍՀՄ-ի պաշտպանութւյան համար կազմակերպելիք չեյուլթին արվի հեղափոխական պրոլետարական ուժերի մարտական ստուգաստի բնույթ:

2. Այդ նպատակով անհրաժեշտ է ծավալել լայն բանվորական մասսաների ռազմավորում, ներքևից ըստ ձեռնարկութունների միասնական բանվորական ճակատի տակտիկայի նոր ձևեր անցկացնելու հիմունքով. ուժեղացնել բանվորական կոմիտեներ ստեղծելու և պատվիրակային կոնֆերենցիաներ գումարելու աշխատանքը, վորոնք ընտրվում են ֆաբրիկաներում և գործարաններում՝ անցկացնելու ոգոստոսի 1-ի չեյուլթները և շարունակելու կամպանիան իմպերիալիստական պատերազմի դեմ ոգոստոսի 1-ից հետո:

3. Այդ նույն նպատակներով կոմունիստակցութունները պիտի ծավալեն անհապաղ—մինչև ոգոստոսի 1-ը—բանվորական մասսաների պայքարը փողոցային բանվորական ցույցերի ազատութւյան համար, անցկացնելով բոլոր չեյուլթներում մասսայական ժողովներ, մասսայական չեյուլթեր, իսկ վորտեղ վոստիկանական պայմանների պատճառով հնարավոր չէ

— Թուլցիկ միտինգներ և ցույցեր՝ հակառակ որենքի:

4. Ծավալել լայն մասսայական պայքար բուրժուազիայի փորձերի դեմ, հատկապես ոգոստոսի 1-ի առթիվ, կոմկուսակցութուններին պոկելու լայն բանվորական մասսաներից սեպրեսիաների և տերրորի միջոցներով, այն և՛ բանվորական կազմակերպութուններն արգելելով, կոմունիստական մամուլը հալածելով և փակելով, կոմունիստական կուսակցութունները ցրելով և այլն:

5. Ոգտագործելով ներկա տարվա մայիսմեկյան ցույցերի փորձը, վորոնք միքանի յերկրներում անցան գյուղացիների ակտիվ մասնակցութամբ, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ոգոստոսի 1-ի՝ իմպերիալիստական պատերազմի դեմ ուղղված յելույթի մեջ գրավվեն գյուղատնտեսական բանվորները, գյուղացիական մասսաները, շաղկապելով այդ մասնակցութունը գյուղացիության և գյուղատնտեսական բանվորների հիմնական մասսաների անմիջական պահանջներին և կարիքներին հետ:

6. Ամենաանխնա կերպով մերկացնել սոցիալ-դեմոկրատիային և նրա դերը պատերազմ նախապատրաստելու մեջ, հատկապես «ձախ» սոցիալ-դեմոկրատիային, վորպես սոցիալ-իմպերիալիզմի ամենավտանգավոր այլատեսակութունը, վորը քողարկում և ստատարում է պատերազմի պատրաստվող կապիտալիստալիստական պետութունների ուղղմական պատրաստութուններին պացիֆիստական ֆրազով, վորի նպատակն է քնեցնել պրոլետարական մասսաներին: Մասնավորապես անհրաժեշտ է կազմակերպել կոմունիստների ակտիվ խմբերի մասնակցութունը ոգոստոսի 4-ի սոցիալ-դեմոկրատների ժողովներին:

7. Մղել ամենավճռական պայքար պացիֆիստական ցնորքների դեմ, վոր հատկապես ակտուալ են այժմ Մակդոնալդի կառավարության իշխանության գլուխ անցնելու առթիվ Անգլիայում: Անհրաժեշտ է բացատրել ամենալայն մասսաներին, վոր Մակդոնալդի կառավարության իշխանության գլուխ անցնելը հանդիսանում է նոր իմպերիալիստական պատերազմի անմիջական նախապատրաստման քողարկման ձևերից մեկը:

8. Վորպես ոգոստոս 1-ի յելույթի ձևեր, ԿիԳԿ-ի պլենումը հանձնարարում է կոմիստերնի բոլոր սեկցիաներին անցկացնել ամենուրեք, վորտեղ այդ հնարավոր է, մասսայական քաղաքական գործադուլներ ամեն տեղ անհրաժեշտ է անցկացնել, չնայած վոստիկանության արգելանքին, մասսայական ժողովներ, միտինգներ, փողոցային ցույցեր, գրավելով ցույցերի և յերթերի մասնակցման՝ զինվորներին, նավաստիներին, կանանց և յերիտասարդության, պատերազմի նախկին մասնակիցներին, ինվալիդներին, յերեխաներին և այլն: Աճող ռեակցիայի պայմաններում, հատկապես վոստիկանության և ֆաշիստների հնարավոր պրովոկացիոն յելույթների առթիվ, բոլոր կոմկուսակցութունները պետք է ձեռք առնեն անհապաղ բոլոր միջոցները՝ ամեն տեղ ամբացնելու և հիմնելու պրոլետարական ինքնապաշտպանության կազմակերպութուններ, ամենից առաջ ձեռնարկութուններում:

9. Իմպերիալիստական պատերազմի և ռեակցիայի դեմ ԽՍՀՄ-ի պաշտպանության կամպանիան շարունակել և ոգոստոսի 1-ից հետո, անհրաժեշտ է կազմակերպչորեն ամբացնել հակապատերազմական որը, ոգոստոս մեկը անցկացնելու ժամանակ ձեռք բերված

հաջողութիւնները՝ արդշունարերական շրջաններում ձեռնարկութիւններէց անկուսակցական պատվիրակային կոնֆերենցիաներ գումարելու միջոցով, կուրսունենալով համագգային բանվորական համագումարներ հրավիրելը՝ ընդդեմ իմպերիալիստական պատերազմի:

10. ԿԻԳԿ-ի պլենումը կոչ և անում գաղութների և կիսագաղութների աշխատավորներին ամեն կերպ աջակցելու պրոլետարիատի միջազգային չելուջթին ընդդեմ իմպերիալիստական պատերազմի՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներին պարտավորեցնելով ուժեղացնել հեղափոխական աշխատանքը գաղութների և կիսագաղութների աշխատավորութիւն մեջ, ինչպես նաև հակամիլիտարիստական աշխատանք կատարել՝ ոկուպացիոն իմպերիալիստական բանակներում:

Նշելով Կոմինտերնի առանձին սեկցիաների անբավարար լեռանդը միջազգային որվա նախապատրաստման գործում, ԿԻԳԿ-ի պլենումը հավաստում և, վոր մայր գործում կոմկուսակցութիւններին առանձին միջնախավերի կողմից ցուց տրված պասիվութիւնը՝ ընդհանուր ոպորտունիստական տենդենցների արտահայտութիւն և, վորոնք կապված են՝ պատերազմի վտանգի թերազնահատման, պատերազմի նկատմամբ Փատալիստական վերաբերմունք ունենալու, պրոլետարիատի ուժերի թերազնահատման և դասակարգային պրոլետարական կռիւներում կոմկուսակցութիւնները նվաստացնելու հետ: Կոչ անելով ամենավճռական պայքարի Կոմինտերնի բոլոր սեկցիաներին ընդդեմ ոպորտունիստական տարրերի պասիվութիւն և

հոստետեութիւն, պլենումը հավաստում և, վոր պատերազմի սպառնալիքի բարձրացած գիտակցութիւնը բանվորական մասսայի մեջ, մասսաների ակտիվութիւն ուժեղացումը և կոմունիզմի ազդեցութիւն աճումը բանվոր դասակարգի մեջ՝ բանվորական շարժման հեղափոխական նոր վերելքի տճման պայմաններում ամեն կերպ նպաստում են միջազգային որը մարտականորեն անցկացնելու հաջողութիւնը, վորի նախապատրաստման վրա կոմկուսակցութիւնները մինչև ոգոստոսի 1-ը մնացած շաբաթներում պետք և առավելագուցն չափով համակենտրոնացնեն իրենց ուժերը:

Պլենումը դիմում և արհմիութիւններին անդամբունվորներին և հեղափոխական մասսայական կազմակերպութիւններին՝ կոչ անելով ամենտակտիվ կերպով մասնակցելու իմպերիալիստական պատերազմի դեմ ուղղված միջազգային որվա նախապատրաստմանը և անցկացմանը: Արհմիութիւններում և հեղափոխական մասսայական կազմակերպութիւններում աշխատող կուսանդամները պետք և գործ դնեն բոլոր ջանքերը, վորպեսզի այդ կազմակերպութիւններին, ինչպես նաև գործադուրկ մասսաներին, ներգրավեն ոգոստոս 1-ի մասսայական չելութների անցկացման և նախապատրաստման մեջ:

ԲԱՆԱԶԵՎ ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ ՄԱՍԻՆ

ԿԻԳԿ-ի պլենումը ծանոթանալով ՀՄԿԿ (բ) ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումների՝ ընկ. Բուխարինին Կոմիտեներնի աշխատանքներից հեռացնելու վորոշման հետ—արձանագրում ու հայտնում և հետևյալը՝

Դեռ ևս Կոմիտեներնի VI կոնգրեսից առաջ, ընկեր Բուխարինի մոտ նկատվում ելին շեղումներ ՀՄԿԿ(բ) քաղաքական հիմնական դժից, վորոնք ձևակերպվում ելին Բուխարինի և նրա համախոհների կողմից կուսակցութեան քաղաքականութեան դեմ տարվող պայքարի ընթացքում. մի պայքար, վոր տարվել և հատուկ ոպորտունիստական, բայց իրապես աջ թեքման պլատֆորմայով:

Համաձայն ԽՍՀՄ ժողովրդական անտեսութեան սոցիալիստական վերակառուցման խնդիրների, ՀՄԿԿ(բ), յերկրի ինդուստրացման կուրսը վերցնելով՝ իր հաղթական արշաֆն և ծավալում կապիտալիստական տարրերի դեմ և հիմնվելով չքավորութեան զորահավաքի, ինչպես նաև պրոլետարիատի ու չքավոր-միջակ գյուղացիական մասսաների զողման նոր արտադրական ձևերի լայն կիրառման վրա, ուժեղ պայքար և տարել կուլակների դեմ. այդպիսով ապահովելով սոցիալիստական անտեսութեան ձևերի զարգացման վրձնական բեկումը՝ ժողովրդական եկոնոմիկայի համե-

մատաբար թուլ սեկտորում—գյուղատնտեսութեան մեջ: Կապիտալիստական տարրերի դեմ ուժեղ արշավ տանելու այդ քաղաքականութեան գործադրումը, այդ տարրերի չեմ մղումը, գյուղացիական անտեսութեան ների մասսայական կոլեկտիվիզացման անշեղ զարգացումը, խորհրդային անտեսութեան ների հսկայական թափը, և մեքենա-տրակտորային կայանների կազմակերպման ծավալումը և այլն—այդ բոլորը տվյալ ժամանակաշրջանում չեյին կարող դասակարգային պայքարի սրում չառաջացնել, վորը արտահայտվեց կապիտալիստական տարրերի կողմից սոցիալիստական արշավին դիմադրելու ուժեղ փորձերով, ինչպես նաև մանր-բուրժուական խավերի տատանումների ուժեղացումով: Այլ բեկման կողմնակիցները, վորոնց հարեց ընկ. Բուխարինը, ՀՄԿԿ (բ) այդ քաղաքականութեանը հակադրեցին մի այլ—կապիտալիստական տարրերի դեմ արշավելուց հրաժարվելու, կուլակների դեմ ուժեղ պայքար տանելու անհրաժեշտութեան ժխտման և շինարարութեան ձևերի շեղման գիծը, վորը փաստորեն նշանակում և—կապիտալիստական տարրերի դեմ վինաթափ լինել: ՀՄԿԿ (բ) դժին հակառակ, ընկ. Բուխարինը վրովեց ՆՏԲ (ԽՅՈ) լիբերալ մեկնաբանութեան կողմը, վորը ընթանում և անկաշկանդ առևտուրի դրոշի տակ և տանում և՛ դեպի յերկրի կապիտալիստական տարրերի ազատ զարգացումն, դեպի հրաժարումն—հացի չտրաշահ սպեկուլյացիայով զբաղվող կուլակային տարրերի ճնշելուց և, դեպի ժըխտումն—կուլակների անհատական հարկազրման անհրաժեշտութեան՝ հակառակ, կապիտալիստական տարրերի դեմ կուսակցութեան վարած խոշոր հարկազրում-

ների քաղաքականութիւնն և այլն: Իսկ այդ նշանակում
ե, վոր իրականում ընկ. Բուխարինը գլորվում ե դեպի
կապիտալիստական տարրերի հետ դասակարգային
գործակցութեան քաղաքականութիւնը, փոխելով կու-
լակի դեմ տարվող պրոլետարիատի դասակարգային
պայքարի քաղաքականութիւնը «կուլակի ներածումը
սոցիալիզմի մեջ» քաղաքականութեամբ:

Ընկ. Բուխարինի այս սխալ դրվածքի սերտ կապակ-
ցութեամբ նրա վարած գիծը կաշկանդում ու դանդա-
ղեցնում ե լերկրի ինդուստրացման թափը, վորպիսին
կուսակցութիւնն և անցկացնում: Այն ժամանակ,
չերբ ՀՄԿԿ (բ) անշեղ կերպով որ ավուր լերկրի ին-
դուստրացման գիծն ե իրականացնում, վորը սոցիա-
լիզմի հաղթական կառուցման հիմունքն ե հանդիսա-
նում — ընկ. Բուխարինն ու նրա համախոհները դժ-
վարութիւնների առաջ տեղի չեն տալիս և սոցիալիզմի
կառուցման այդ հիմնական հարցում թողնում են պրո-
լետարիատի դիրքերը, արտացոլելով կուսակցութեան
վորոշ շերտերում, իրենց գծի վրա չեղած մանր-բուր-
ժուական տարրերի ճնշումը: Այն ժամանակ, չերբ
ՀՄԿԿ (բ) բանվորական դասակարգի գլուխն անցած,
վորը աճող վոգեկորութեամբ սոցիալիզմ ե կառուցում,
որ ավուր աշխատավորական մասսաներին ավելի չե
իր շուրջը համախմբում — Բուխարինն ու նրա համա-
խոհները աշխատավորութեան մեջ մանր-բուրժուական
հոռետեսութիւնն և բանվորական դասակարգի ուժի
նկատմամբ անվստահութիւնն են սերմանում. ուստի
և առանց դոցա հաղթահարման անհնարին ե սոցիա-
լիստական շինարարութեան հաջող ընթացքն ապահովել:
Վերջապէս, ՀՄԿԿ (բ) մեջ տիրող դրութեան, ինչպես

և կուսակցութեան ղեկավարման մեթոդների գնահա-
տականում ընկ. Բուխարինն ու նրա խմբակը սոսկ
տրոցկիստական հին յերգն են կրկնում: Այն մոմեն-
տին, չերբ ՀՄԿԿ (բ) բյուրոկրատիզմի դեմ պայքարե-
լու և կուսակցութեան շարքերը այլասերված տարրե-
րից մաքրելու նպատակով ինքնաքննադատութեան և
ծավալվող ներկուսակցական դեմոկրատիայի լողունգի
տակ մեծ հաջողութեամբ մասսաների լայն գորահա-
վաքն ե իրականացնում՝ Բուխարինն ու նրա համա-
խոհները բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ֆրագ-
ների տակ թագնված, ընդիմանում են՝ կուսակցական,
պրոֆմիութենական, կոպերատիվ և խորհրդային ա-
պարատների վերականուցման աշխատանքներին. աշ-
խատանքներ, վորոնք տարվում են կուսակցութեան
անմիջական ղեկավարութեամբ, այդ ապարատների ու
մասսաների փոխադարձ կապը նորագույն ձևերով ըստ
ամենայնի ուժեղացնելու նպատակով, — նոքա իրենց
այդ վարքագծով արտահայտում են կուսակցութեան
գծին ընդիմացող բյուրոկրատիզմի ու փայտացած վատ-
թարագույն տարրերի տրամադրութիւնները:

Բուխարինի սխալները, ՀՄԿԿ (բ) քաղաքականու-
թեան հարցերում, անքակտելիորեն կապված են մի-
ջադգային քաղաքականութեան մեջ նրա ունեցած
սխալ գծի հետ: Թերագնահատելով ՀՄԿԿ (բ) կողմից
մղվող սոցիալիստական արշավը վորպես կապիտալիս-
տական կայունութիւնը պայթեցնող մի գործոն, Բու-
խարինը փաստորեն, Եմքեր-Դրո-ի, Սերբայի, Եվերտի
և ուրիշների հետ միասին, կոմունիստական Ինտեր-
նացիոնալում չեղած բոլոր աջ տարրերի քաղաքա-
կանութեանը տալիս ե գաղափարական-քաղաքական

հիմնավորում: Հակադիր ուղղութեան մեջ ընկ. Բուխարինը այնքան է մոտենում ուղորտունիզմին, վոր ժխտում է կապիտալիստական կաշտունութեան որ ավուր ուժեղացող տատանման փաստը, վորն անխուսափելիորեն տանում է դեպի բանվորութեան հեղափոխական շարժման աճող նոր վերելքի ժխտումը: Ընկ. Բուխարինի այդ դիրքի հիմքում ընկած է նրա՝ կապիտալիզմի ներքին հակասութիւնների բթացման, հակամարքսիստական «տեսութիւնը», վորը նոցա քարշ է տալիս կապիտալիստական անարխիան բացառապես միջազգային շուկայում պահպանելու ֆրագմենտի տակ: Այս «տեսութիւնը», վորը հերքում է կապիտալիզմի վողջ զարգացումով, և վորը կոմիւնտերնի բոլոր աջ տարրերի համար ծառայում է վորպես գաղափարական հիմունք—իրապես հանդիսանում է զինաթափում հանդեպ բարենորոգչական գաղափարախոսութեան («կապիտալիզմի առողջացման» գիլֆերդինգյան տեսութիւն):

Ընկ. Բուխարինի—«Կազմակերպված անտնտեսավարութեան տեսութուն»—հորվածը («Պրավդա», 30-ն հունիսի) ցույց է տալիս, վոր նա վոչ միայն չի հրաժարվում իր՝ կապիտալիզմի ներքին հակասութիւնների բթացման հակամարքսիստական «տեսութիւնից», այլև շարունակում է իր սխալների մեջ ել ավելի խորանալ:

Այս կապակցութեամբ միանգամայն պարզ է, վոր ընկ. Բուխարինի և նրա համախոհների՝ կոմիւնտերնի «քայքայման» մասին չեղած վայնասունը հանդիսանում է չերկչոտ պաշտպանութեան մի մեթոդ՝ ուղղված աջ տարրերին, վորոնց դեմ պայքարելը կոմունիս-

տական Ինտերնացիոնալի կենտրոնական նպատակն է չեղել և կլինի: Կոմկուսակցութիւնների առողջ մաքրագործումը սոցիալ-դեմոկրատական տարրերից, վորը ներկա հեղափոխական վերելքի աճման պայմաններում առավել ևս անհրաժեշտ է՝ ընկ. Բուխարինն ու նրա համախոհները ամեն կերպ աշխատում են անվանարկել ու այդպիսով թուլացնել կոմիւնտերնի կողմից աջ դավաճանների դեմ տարվող պայքարը: Ընկ. Բուխարինն ու նա խմբակը, հանդիսանալով կոմիւնտերնի բոլոր աջ տարրերի ձգողականութեան կենտրոնը, իրենց հոռետեսական, լքող և բանվորութեան ուժի նկատմամբ անվստահութիւն ներշնչող քարոզներով վոչ միայն նպաստում են բոլոր հակալինիւնյան հոսանքների կենդանացման, այլև դեպի բաշխիկյան դիսցիպլինայի խորտակումն են տանում:

Ընկ. Բուխարինի այս բոլոր ուղորտունիստական տատանումները հանգեցին այն բանին, վոր նա Համ. ԿԿ (բ) և կոմիւնտերնի դեմ պայքարելու նպատակով փորձեց, կուսակցութեան թիկունքում, նախկին տրոցկիստների հետ անսկզբունք դաշինք կապել:

Այս բոլորը ինկատի ունենալով, ԿԻԳԿ-ի պլենումը հաստատելով Համ. ԿԿ (բ) ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումների վորոշումը—ընկ. Բուխարինին կոմիւնտերնի աշխատանքներից հեռացնելու մասին—վորոշեց՝ ազատել նրան ԿԻԳԿ-ի նախագահութեան անդամութեան պաշտոնից:

ԸՍՏ ԿԻԳԿ-Ի ԱՆԴԱՄ ՁԵՅԱ ԼՈՎՍՏՈՆԻ ԲՈՂՈՔԻ,
ՆՐԱՆ ՀԱՄՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ
ՀԵՌԱՅՆԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Հրաժարվելով կատարել ԿԻԳԿ-ի նախագահութեան վորոշումը, վորով ի սեր կուսակցութեան առողջացման

նա հեռացվում էր ՀԱՄՆ Կոմկուսակցութեան աշխատանքներից—Լովստոնը խորապես խախտեց Կոմիտեանի դիսցիպլինան: Նա իր այդ վարմունքը ավելի էս խորացրեց նրանով, վոր Ամերիկա վերադառնալուց հետո, հաշվի չառնելով Կենտկոմի կոչը—ԿԻԳ Կոմիտեայի վորոշումը կատարելու անհրաժեշտութեան մասին—սկսեց ՀԱՄՆ ԿԿ քաջքայող, իր անջատողական հանցավոր աշխատանքը: Խստագուցնս դատապարտելով Լովստոնի հակակուսակցական անթուշլատրելի վարքագիծը Կոմիտեանի շարքերում—պլենումը հնարավոր չի համարում փոխել ՀԱՄՆ ԿԿ ԿԿ-ի նրան կուսակցութեանից հեռացնելու վորոշումը, այդպիսով Լովստոնը դուրս չեկավ ԿԻԳԿ-ի կազմից: Բողոքելով ԿԻԳԿ-ին, Լովստոնը սոսկ մի խաղ է խաղում՝ չերեքցալուց կուսակցութեան չունենալով կուսակցութեան շարքերում մնալ, վորի ամբողջութեան նկատմամբ նա այդպես հանցագործ կերպով դավադրութեան սարքեց: Այդ ակնհայտի կերպով բղխում է նրա քաղաքական գրգռվածքից: ԿԻԳԿ-ի նախագահութեան վորոշումից հետո, վորը մերկացնում էր աջ սխալներն ու դատապարտում նրա Ֆրակցիոն գործունեությունը, Լովստոնը բացորոշ կերպով անցավ քաջքայիչ, անջատողական պաշարի աշխատանքներին ընդդեմ ՀԱՄՆ Կոմկուսակցութեան և Կոմիտեանի, հակադրելով Համաշխարհային VI վեճաժողովի ծրագրին ու վորոշումներին—իբ՝ Ամերիկայի դրութեան բացառիկութեան ոպորտունիստական քաղաքական ծրագիրը և կուսակցական դիսցիպլինայի իր սոցիալ-դեմոկրատական հասկացողութեանը: Երկուսով նա վերջնականապես գլորվեց կոմունիզմի դավաճանների բանակը (Բրանդիերի, Հալսի և ուրիշների):

Առավել ևս, ի նկատի ունենալով ԿԻԳԿ-ին տված նրա բողոքը, պլենումը հանձնարարում է Գործադիր Կոմիտեային ամենակարճ ժամանակամիջոցում քննել այն հենց Լովստոնի ներկայութեամբ և նրա բողոքի վերաբերմամբ վերջնական վորոշում կայացնել: Իսկ չեթե Լովստոնը հրաժարվի իր բողոքի քննութեանը ներկա գտնվել, այդ դեպքում պլենումը վերջնականապես Լովստոնին համարում է Կոմիտեանից ու ԿԻԳ Կոմիտեայի կազմից հեռացված:

ԻԼԵԿԻՆ ԿԻԳԿ-ԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոմիտեանի Գործկոմի X պլենումը հաստատելով Չեխո-Սլովակայի Կոմկուսակցութեան Կենտկոմի վորոշումը—Իլեկին Չեխո-Սլովակայան Կոմ-կուսակցութեանից հեռացնելու մասին—վորոշում է՝ հեռացնել Իլեկին Կոմիտեանի Գործկոմի կազմից, վորին մինչորս նա անդամ էր:

Ի նկատի ունենալով այն՝ վոր Իլեկի խմբակը Չեխո-Սլովակայան Կոմկուսակցութեան դեմ տարած պաշարում քաղաքականապես չի տարբերվում սոցիալ-դեմոկրատական և բուրժուական կուսակցութեաններից, և վոր, Իլեկի խմբակը իր հրավիրած կոնֆերանսում վորոշել է փաստորեն ստեղծել մի նոր կուսակցութեան, վորը ուժեղ պաշար պիտի տանի Չեխո-Սլով. Կոմկուսակցութեան դեմ—ԿԻԳ Կոմիտեայի պլենումը վորոշում է՝ Չեխո-Սլովակայան Կոմկուսի անդամների, փաստորեն այդ նոր կազմված կուսակցութեան պատկանելը, ինչպես նաև Իլեկի հեռացված խմբակի հետ դադարաբանական ու քաղաքական համերաշխութեան ունենալն ու միաժամանակ Չեխո-Սլովակայան Կոմկու-

սին ու կոմունիստական ինտերնացիոնալին պատկա-
նելը—համարել ներհակ ու անհնարին:

ՍՊԵԿՏՐԻՆ ԿԻՊԿ-Ի ԿԱԶՄԻՑ ՀԵՌԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոմիտեերնի Գործկոմի X պլենումը հաստատում է
Կանադայի կոմկուսակցության վորոշումը—ԿիՊԿ-ի ան-
դամ Սպեկտորին կուսակցությունից հեռացնելու մա-
սին, նրա՝ ամերիկյան արոցկիսաների հետ կապ պահ-
պանելու և Կանադայի կոմկուսակցության մեջ արոց-
կիստական ազխտացիայի փորձեր կատարելու պատ-
ճառով. և այդ ինկատի ունենալով, վորոշում է—նրան
Կոմիտեերնի Գործկոմի կազմից համարել հանված:

**ՎՈՐՈՇԱՄ ԿԻՊ ԿՈՄԻՏԵՅԻ 1928 թ. Ֆինանսական
հաշվեկազմի մասին**

Կոմիտեերնի Գործկոմի X պլենումը քննելով ԿիՊԿ-ի
քաղքարտուղարության ներկայացրած 1928 թ. ֆի-
նանսական հաշվեկազմությունը —վորոշում է՝

- ա) Հաստատել հաշվեկազմությունը ամբողջությամբ.
- բ) Հրատարակել զբամարկղի միացյալ հաշիվը:

1928 թ. դրամարկղի միացյալ հաշիվը


Մոսկ

- 1. Մնացող առ 1-ն հունվարի
1928 թ. 4,691 ա. 96 կ.
 - 2. Անդամավճարներ—Կոմիտեեր-
նի 43 սեկցիաներից՝ դոցա
1,684,212 անդամների հաշ-
վին¹ 1,015,158 ա. 78 կ.
 - 3. Հանգանակություններ և նվի-
րարեություններ 286,916 ա. —
 - 4. Մուծումներ—հեռադրային գոր-
ծակալությունների ու լրա-
դրային ինֆորմաց. բյուրե-
տիկների հրատարակումից . . . 180,104 ա. 50 կ.
- Ընդամենը՝ 1,486,871 ա. 24 կ.

¹ ԿիՄ-ը (ՅՆԿԻ), վոր ունի 2,340,643 անդամ, անդամավճար-
ների մուծումներից ազատված է 6 սեկցիաներից մուծումներ
չեն ստացված. մյուս սեկցիաները (զլխավորապես արևելյան յեր-
կրների) 1928 թվին ազատված են յեղել անդամավճարների մու-
ծումներից:

Յեյֆ

1. Վարչական ծախսեր (անձնական կազմը, տնտեսական ալլ ծախսեր)	632,412	ն.	26	կ.
2. Պոստ-հեռագրային ծախսեր	37,018	ն.	75	կ.
3. Գործուղումներ	65,028	ն.	—	
4. Աջակցություն—կուս. թերթերին, հրատարակչություններին և կուլտ-կրթական աշխատանքներին	711,324	ն.	23	կ.
5. Մնացորդ առ 1-ն հունվարի 1929 թ.	41,088	ն.	—	23 կ.
Ընդամենը	1,486,871	ն.	24	կ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0943712

Գիրք 30 կրպ. (Մ.) 3 1/2 մ.

492

1770



X ПЛЕНУМ ИСПОЛКОМА КОМИНТЕРНА.
ТЕЗИСЫ, РЕЗОЛЮЦИИ, ПОСТАНОВЛЕНИЯ.

Госиздат ССР Армении
Эриван, 1930 г.
